

# ԼԵՌԵԱՅԻՆ ՊԱՐԱԾԱԳ. ԻՍԶՊԸՆ Է ԴԱ ԵՊԵԼ...

ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ՆԱԽԱԳԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
«ՅԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
2011

## ԼԵՇՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴ. ԻՆՉՊԵՍ Է ԴԱ ԵԴԵԼ...

Խմբագիր Արտակ ԲԱՂԱՐՅԱՆ

### Ս 246 Մանասյան Ալեքսանդր, Ղևոնդյան Ալեն

Լեռնային Դարաբադ. ինչպես է դա եղել... / Եր.: ՀՀ օախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ, 2010թ.- 120էջ:

Ներկայացվող հետազոտությունը նոյածական իրավական և փաստական նյութերի, աղբյուրների միջոցով օրյեկտիվորեն ներկայացնել Դարաբադյան հակամարտության նախադասությունը, գործընթացի ձևավորման արմաններն ու հիմքերը, ներկային հանգրվանը:

Աշխատանքում համարեն մեծ կարևորություն է տրվում բանակային ներկային գործընթացում դատասահ կերպով չհաշվառվող այնուհի կարևոր փաստականների և հանգամանների ներկայացնամբ և վերլուծությամբ, որոնք առավել արդյունավետ կդադարեն հակամարտության լուծման ընթացիկ գործընթացը:

**Մեր խորին ընորհակալությունն ենք հայտնում դր-ն Ռ. Գալյանին՝ տրամադրած խիստ արժեքավոր նյութերի, լուսանկարների և փարեզների համար:**

**Մեր խորին ընորհակալությունն ենք հայտնում Հայաստանի ազգային արխիվի ընօրեն դր-ն Անատունի Վիրաբյանին՝ արխիվային նյութերի և անհիմ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկավություն տրամադրելու համար:**

**Մեր խորին ընորհակալությունը հոււարձանագետ Սամվել Կարապետյանին արժեքավոր նյութերի և լուսանկարների տրամադրման համար:**

ISBN 978-99941-2-375-9

ՀՏԴ 341  
ԳՄԴ 67.91

© Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, 2011թ.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ	5
ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱԴ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	6
ԱՐՑԱԽ ՂԱՐԱԲԱԴ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՐՍԱՆԱԲԵՐԴ	7
ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱԴ ՂԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ	10
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՂԱՅԿԱԿԱՆ ՊՈԽԱԿԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՍԱՆԵՐՈՒՄ	13
ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՑՆՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎԱՐԴԱԿԱԿԱՍՈՒՄ	16
ԻՆՉՈՒ՞ «ԱՐՐԵՋԱ», ՈՐՏԵՐԻՑ Է ԱՅՆ ԱՆՎԱՍՈՒԾ ԳԱԼԻՆ	19
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԻՆՈՒԺՈՒԾ ԵՎ ՆՈՐ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՑԻՍՏՈՒՄ ԱՌԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ	24
ԻՆՉՈՒ՞ ԽՈՐՃՐՈՎԱՅԻՆ ՋՈՎԱՆԿՈՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱԿՈՐՎԵՑ ՈՉ ԱԶԳԱՅԻՆ (ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ) ՏԻՊԻ ԽՈՐՃՐՈՎԱՅԻՆ ԱՐՐԵՋԱՆ ԿԱՆՐՊՊԵՏՈՒԹՅՈՒՆ	28
ԼԵՇՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴ, ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԵՎ ՆԱԽՆՁԵՎԱՆԻ ճԱՍՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽՈՐՃՐՈՎԱՅԻՆ ՂԱՅԱՍՏԱՆԻ ԱՖՐԱՏԵԼԻ ՄԱՍ	30
ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԱՐՐԵՋԱՆ ՍԵՂԾՄԱՆ ԳԱՂԱՓՈՅԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵջ. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ	35
ԼԵՇՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴ, ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԲՈՆԱԿՑՈՒՄԸ ՋԱՅՐԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԱՐՐԵՋԱՆ-ի ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐԸ ԱԶԳ	37
ԼԻՒ-Ը ՈՐՊԵՍ ԽՈՐՃՐՈՎԱՅԻՆ ՏԻՊԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿՈՐՈՒՄ	42
ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆԱՑՈՒՄԸ ԻՆՏԱԿԱՆ ԱՌԴՐԿՈՎԿԱՍՈՒՄԸ ԽՈՐՃՐՈՎԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ	44
ՄԵՎԱԿՈՒԹՅՈՒՆ ՑԵՂԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԴՐԿՈՎԿԱՍՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՐԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԵՓԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՇԱՐԱՐՄՐՄԸ ԿԱՐԵԿՈՐ ՀԻՄՔ	48
ԶՈՒԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆՑԻ ՇԱՇՎԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ	55
ՂԱՅ ԱԶԳԱԲԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԻՒ-Ը ԱՐՐԵՋԱՆԱԿԱՆ ՂԱԼԱԾԱԲԵՆԵՐԻ ՈՒ ԵՆՇՈՒՄՆԵՐԻ ԳԼԽԱԿՈՐ ԹԻՐԱՆ	65
ՊԱՐԱԲՈՂԱՅԱՆ ԾԱՐԺՈՒՄԸ ԽՄԿՐ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՂԱՄԱՏԵՔՍՈՒՄ	68
ՍՈՒՄԳՎՅԻԹՅԱՆ ՑԵՂԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԴՐԿՈՎԿԱՍՈՒՄԸ ԻՆՉՊԵՏ ՂԱՅԵՐՈՒ ՈՒ ԱՐՐԵՋԱՆԵՐԻ ԸՆՉԱՆԱԿՈՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ	71
ՂԱՅԵՐՈՒ ՈՒ ԱՐՐԵՋԱՆԵՐԻ ԸՆՉԱՆԱԿՈՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓՈՅԻ ՎԵՐԱՇԱՐԱՇԳՐՎԱՆԸ	79
ՂԱՏՈՒԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԼՂ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶՈՒՄ	81

ՀԽՍԴ ԳԽ ԵՎ ԼՂ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՃՐԴԻ ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՈՒՄԸ	
ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ .....83	
ՀԽՍԴ ԵՎ ԼՂԻՄ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ 1988թ. ԴԵԿԵԹԵՐԻ 1-Ի ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՄԻՒՄ ԵՎ ԽՍԴՍ	
ՕՐԵՆՔՆԵՐԻ ԼՈՒՅԻ ՆԵՐՔԸ .....84	
ՑԵՂԱՄԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒԱԿՎՈՒՄ Է. ԲԱՔՎԻ 1990թ.	
ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԸ .....91	
1990թ. ԱՊՐԻԼԻ 3-Ի ՕՐԵՆՔԸ ԵՎ ԽՍԴՍ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ .....99	
«ՕՂԱԿ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՐՃՐԴՅԱՅԻՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՀՐԳԵՎԱՐԸ .....102	
ԱԴՐԵՖԵԱՍԱԿԱՆ ՀԱԼՐՊԴԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ ԽՈՐՃՐԴՅԱՅԻՆ ԱԴՐԵՖԵԱՏԻ ԻՐԱՎԱԿԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ .....105	
ԽԵՉՈՒ ԲԱՔՎՈՒՄ ՀՐԱԺԱՐՎԵՑԻՆ ԽՈՐՃՐԴՅԱՅԻՆ ԱԴՐԵՖԵԱՏԻ ԻՐԱՎԱԿԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ .....107	
ԼՂԴ ԿԱՅԱՑՄԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԽՍԴՍ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....109	
ՊԱՐՏԱԴՐՎԱԾ ՊԱՏԵՐԱԿՄ. ԲԱՔՎԻ ՀԱՅԵՐԻՆ ՑԵՂԱՄՊԱՍԵԼՈՎ՝ ՓՈՐՁՈՒՄ Է ԼՈՒԾԵԼ ԼԵՌԱՎՅԻՆ ՊԱՐԱՎԱԴԻ ԽՆԴԻՐԸ .....112	
ԽՈԶԱԼՈՒԻ ՈՐՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ. ՄԻ՞Ֆ, ԹԵ՞ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ .....141	
ՍԱՐԱԿԱՆ ՑԵՂԱՄԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒԱԿՎՈՒՄ Է... .....147	
ԱՍԿԱՆ ԼՂԴ-Ն ՕՐԻՆԱԲԱՐ ԿԱՅԱՑԱԾ, ԲԱՅՑ ԴԵՌԵՎ ՉԲԱՆԱԿՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ .....152	
«ՏԱՐԱԾԲԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԵՎ «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏ ԻՆՔՍՈՐԾԱՎԱ» ՍԿԶԲՈՒՆԵՍԵՐԸ ՊԱՐԱԲԱՅԱ ՀԱԿԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԿՎՐՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ .....1154	
ԳԼՈՒԽ ՎՏԱՎԳՆԵՐԻ ԿԱՊԿԱԾ ՅՈԳՈՒՏ ԲԱՔՎԻ ՊԱՐԱԲԱՅԱ ԽՆԴԻՐԻ ՔԵՂԱՔԱՍԱՑՄԱՆ ՀԵՏ .....158	
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵՋ .....162	
ՓԱԽԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ .....113	
ՎԵՐՁԱԲԱՏԻ ՓՈԽԱՐԵՆ .....164	

## ՄՈՒՏՏՔԻ ԽՈՍՔ

Հետխորհրդային տարածքում Ղարաբաղյան հակամարտությունը միակն է, որ սկսվել և զինված առձակատման տեսք է ստացել դեռևս ԽՍԴՍ օրոք: Մինչ 1991թ. դեկտեմբերի 25-ին Մոսկվայում կրեմլի վրայից կիշեցնեին ԽՍԴՍ պետական դրոշը, Սումգայիթում ու Բաքվում հենց խորհրդային զորքերի ներկայությամբ հայկական ջարդեր էին տեղի ունեցել, իսկ 1991թ. գարնանը գորբաչովյան Կենտրոնը խորհրդային զորքերի ակտիվ մասնակցությամբ փորձեց հայարավել Լեռնային Ղարաբաղը: ԽՍԴՍ պատմության այդ վերջին տարին նրա տարեգրության մեջ նտավ որպես Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության դեմ կազմակերպված «Կոլցո» («Օղակ») պատժի գործողության տարի: Դա խորհրդային կայսերապետության պատմության ամենախայտառակ էցերից է:

Բայց նույն այդ 1991 թվականը պատմության մեջ նտավ որպես Լեռնային Ղարաբաղի Յանրապետության հոչակման տարի: Միջազգային իրավունքի սկզբունքների և ԽՍԴՍ՝ որպես լուժարվող երկրի օրենքների տեսակետից միանգամայն օրինաբար կայացած երկիրն անմիջապես կանգնեց իր ինքնիշխանությունն ու ազատությունը գենքով պաշտպանելու խնդրի առջև: Զենքի ուժով նորանկախ հանրապետությանը փորձում էր ծնկի բերել, նրա ազգաբնակչությանը ոչնչացնել միջազգային իրավունքի սկզբունքների և ԽՍԴՍ օրենքների խախտումով հոչակված Աղբեջանական Յանրապետությունը, որը Լեռնային Ղարաբաղի Յանրապետության դեմ սանձազերծած պատերազմում՝ շարունակելով սումգայիթյան ցեղասպանության ռազմավարությունը, վարում էր ապրելու իր իրավունքը պաշտպանող ժողովրդի բնաջնջման քաղաքականություն: Արցախն ընդունեց մարտահրավերը և, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, պատվով դրւու եկավ փորձությունից:

Պատմական թատերաբեմից ԽՍԴՍ հեռացումից հետո Ղարաբաղյան խնդիրը վերաճեց միջազգային զինված հակամարտության: Չնայած 1994թ. կնքված զինադադարին, հակամարտությունը դեռևս չի հանգուցալուծվել:

Ցաշվի առնելով ԵԱՀԿ Մինսկի խմբի հիվանդու ներքո ընթացող բանակցային գործընթացի բարդությունը՝ մինչ օրս հնարավոր չի եղել բա-

Նակցությունների սեղանին դնել պատճական, իրավական ու քաղաքական փաստաթղթերի այն փաթեթը, որը կարող է ճշնարտության լույս սփռել՝ Ղարաբաղյան հակամարտության իրական բովանդակության ու բնույթի վրա: Անտեսվում են նույնիսկ հարցին անմիջապես առնչվող և իրենց ուժը պահպանող միջազգային պայմանագրերն ու համաձայնագրերը: Անտեսվում են վերջին հարյուրամյակում Արևելյան Անդրկովկասի հայության ցեղասպանության՝ լայնորեն հայտնի փաստերը: Նման մոտեցումը հազիվ թե նպաստի հակամարտության խաղաղ ու համապարփակ կարգավորմանը և տարածաշրջանում կայունության հաստատմանը:

1991թ. իրեն իրավունքով չպատկանող տարածքներով Ադրբեյջանական Ղանրապետության ճանաչումը Բաքուն ընդունեց որպես Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմ սանձազերծելու՝ միջազգային հանրության կողմից տրված բույլտվություն, ինչը դարձավ տասնյակ հազարավոր մարդկանց ողբերգության պատճառ: Ինքնին պարզ է, որ դեպի խաղողություն ու համաձայնություն տանող ճանապարհն արդարությունն ու ճշնարտությունն են, որոնք այս դեպքում դժվար չեն: Դրանք կան հակամարտության պատմության փաստերում և լայնորեն հայտնի են: Մնում է տեսնել այն, ինչ դրված է աչքի առջև: Այս գիրքն այդ մասին է:

## ԱՐՅԱԽ-ՂԱՐԱԲԱՂԸ ԵՎ ՏԱՐԱԾԱԶՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՅԱԽԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՐՍԱՆՔԵՐԴ

Հայկական լեռնաշխարհի հետ է կապված հայ ժողովրդի ողջ պատմությունը: Մարդն այստեղ բնակվում է հնագույն ժամանակներից: Նորագույն հետազոտությունները հաստատում են, որ Հայկական և հարևան Իրանական բարձրավանդակները հնդեվրոպական ժողովուրմերի նախահայրենին են<sup>1</sup>:



Հայկական լեռնաշխարհ, <http://www.armin.am/>

Հայկական լեռնաշխարհում է ձևավորվել հնդեվրոպական ընտանիքին պատկանող հայոց լեզուն, այստեղ է հայ ժողովուրդը հիմնել իր առաջին պետությունները (Տե՛ս նկար): «Հայ» ինքնանվանումը մասնագետները կապում են մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսերից քաղաքական վերելք ապրած Հայաստան ցեղային միության հետ: Հայկական առաջին թագավորությունների՝ Արարադի երկրի և Այրարատյան թագավո-

<sup>1</sup> Տե՛ս Գամկրելիձե Տ.Վ., Իվանով Վյա. Վс. Հնդօւրուսական լեզուների պատմությունները (Տե՛ս նկար): «Հայ» ինքնանվանումը մասնագետները կապում են մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսերից քաղաքական վերելք ապրած Հայաստան ցեղային միության հետ: Հայկական առաջին թագավորությունների՝ Արարադի երկրի և Այրարատյան թագավո-

րության մասին հիշատակություններ կան և հնագույն արձանագրություններում, և Աստվածաշնչում<sup>2</sup>: Սուրբ գրքում Հայաստանը անվանվում է նաև Թորգոնայ տուն, քանի որ, ըստ ավանդության, հայերը սերում են Նոյ նահապետի Հարեթ որդու ժառանգ Թորգոնից<sup>3</sup>: Ըստ ավանդության, Թորգոնի որդի Հայկից է սերում հայ ժողովուրդը:

Մ.թ.ա. առաջին դարում Տիգրան II Մեծ թագավորի (95-55 մ.թ.ա.) օրոք ոչ միայն ողջ հայկական լեռնաշխարհը, այլև հարակից շատ տարածքներ միավորված էին մեկ միասնական պետության մեջ, որի հյուսիս-արևելյան սահմանը, ինչպես հավաստում են անտիկ աղբյուրները, եղել է Քուր գետը<sup>4</sup>:

Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան ճյուղավորումները և նրանցից արևելք տարածվող Քուր-արարայան դաշտավայրը, որ պատմական աղբյուրներում հիշատակվում է Ուտիք-Արցախ (սեպագիր արձանագրություններում՝ «Ուրտեխն», հունական աղբյուրներում՝ «Օրխիստենա») անունով, կազմել է հայկական պետության ռազմական ու մշակութային գլխավոր պատվարներից մեկը: Քենց Արցախում է Տիգրան Մեծը կառուցել իր բերդաքաղաքներից մեկը՝ Տիգրանակերտը (*Տե՛ս Ակար*)



*Տիգրանակերտի դեղումները մերօյա Աղյամի մեջակայում*

<sup>2</sup> Տե՛ս Թագավորությանց չորրորդ գիրք, գլ. մթ, 36-37; Երեմիա, գլ. ԾԱ, 27

<sup>3</sup> Տե՛ս Եզեկել, գլ. ԻԵ, 14

<sup>4</sup> Տե՛ս Կրաֆորդ, XI, XIV, 4; Պլինիй, Եստեստվանական պատմություն, VI, 39; Պտղոմեյ, Գեոգրաֆիա, V, XII, 1; Պլուտարք, Համարակալի պատմություններ, տ. II, Մ., 1863 (Պոմպեյ, XXXVI)

Հատուկ է հայ ժողովուրդի ու Հայաստանի տեղը քրիստոնեության պատմության ու մշակույթի մեջ: Ավանդության համաձայն, հայոց Արգարի թագավորը Հայաստան այցելելու խնդրագիր է ուղարկել Հիսուսին, ով Արգարին հղած պատասխան նամակում խոստացել է իր աշակերտներից մեկին ուղարկել Հայաստան: Նոր հավատքը Հայաստանում տարածել են Հիսուսի աշակերտները՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, որի համար էլ հայոց Եկեղեցին կոչվում է հայ առաքելական: 301թ. Հայաստանը դարձավ քրիստոնեությունը պետականորեն ընդունած առաջին երկիրը:

Արցախը եղել է հայոց ազգային մշակույթի ու քրիստոնեության առանձնահատուկ օջախներից: Անարասում է 5-րդ դարում բացվել առաջին հայկական դպրոցներից մեկն այն բանից անմիջապես հետո, երբ 405թ. Մեսրոպ Մաշտոցն ստեղծել է հայոց գրերը և ձեռնամուխ եղել Ավետարանի թարգմանությանը:



*Արցախ-Դարաբաղի XVII դարի Ավետարան:*

Արցախում են կառուցվել ճարտարապետական բազմաթիվ կոթողներ, որոնք դարձել են հայոց ազգային ինքնության խորհրդանշերը: Արցախի խոսակցական լեզուն Արցախի (Դարաբաղի) բարբառն է՝ ամենից տարածվածը հայերենի մերօյա բարբառներում, այն հայոց հնագույն ժամանակներին վերաբերող պատմական ու մշակութային հարուստ տեղեկություններ ունի իր մեջ ամփոփած:

# ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱԴԻ ՇԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ

Միասնական հայկական պետությունն ընկել է 428թ., երբ այն բաժանվեց Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև։ Արցախում, որ Պարսկաստանին էր անցել, անմիջապես պայքար սկսվեց հայոց պետականության վերականգնման համար։ Այն գլխավորում էին տեղի տոհմիկ հայկական իշխանական տները՝ առանշահիկները։ Դինգերորդ դարի վերջերին նրանք Արցախ-Ուտիք իշխանապետությունը հոչակում են թագավորություն և թագավորական տիտղոս ստանում Պարսկաստանից։ Արցախի թագավոր Վաչագանը ծավալեց Եկեղեցաշինության ու դպրոցաշինության մի աննախադեպ գործունեություն, որի համար ստացավ Բարեպաշտ մականունը։ Նրա օրոք է 5-6-րդ դարերի սահմանագծին ընդունվել Արցախի հոգևոր ու աշխարհիկ կյանքը կարգավորող օրենսգիրը՝ «Կանոնական Սահմանադրությունը»։

Արաբների, թաթար-մոնղոլների, թուրք-սելջուկների՝ մեկը մյուսին հաջորդած ասպատակությունների ընթացքում հայկական մյուս նահանգներում իշխանական տները վերացան։ Դայ պետականությանը հատկապես ծանր հարված հասցրին արաբները՝ 705թ. Նախիջևանի Սուլը Երրորդություն Եկեղեցում ողջակիզելով հայ իշխաններին։ Իսկ ահա առանցահիկներին հաջողվեց մնալ Երկրամասի ժառանգական տերեր և ընդհուպ մինչև 19-րդ դարը պահպանել հայ պետականությունը։ Արևելքին բնորոշ անկախ ու կիսանկախ իշխանությունների ու մելիքությունների ձևով։ Հատկապես հայտնի է Խաչենի իշխանության քաղաքական դերակատարությունը մոնղոլների տիրապետության ժամանակ, երբ այն միջնորդի դեր է կատարել մոնղոլների ու Կիլիկյան հայկական թագավորության միջև։

Արցախը գուգահեռաբար սկսել է «Ղարաբաղ» անվանվել միջնադարում, թաթար-մոնղոլների տարածաշրջան մոտոք գործելուց հետո։ Առաջին անգամ այդ անվանումը հանդիպում է «Քարթիս ցիսվիեբա» վրացական տարեգրության մեջ, որի՝ 14-րդ դարի 20-ական թվականներին վերաբերող շարադրանքում հայտնվում է, որ ոմն Ուլո խան մեկնել է ձմեռոց, «որ այժմ կոչվում է Ղարաբաղ»։

«Ղարաբաղ» անվանան ստուգաբանությունը հաճախ կապվում է «կարա բաղ» բառակապակցության հետ, որ թուրքերն ու «սև այգի» է նշանակում։ Դիմնավորված է նաև այն տեսակետը, որ «ղարա» նախա-

ժանցն ունի մոնղոլական ծագում և ունի «մեծ» բարի իմաստը, ինչպես դա առկա է Ղարաբան (մեծ տուն), Ղարաշինար (մեծ չինար), Ղարաբիլսա (մեծ Եկեղեցի), Ղարաբուլաղ (մեծ աղբյուր) և այլ բառերում<sup>5</sup>։

Թաթար-մոնղոլների ու դրան հաջորդած սելջուկ թուրքերի արշավանքները և Կոստանդնուպոլիսի անկումը 1453թ. Առաջավոր Ասիայի ու Եվրոպայի պատմության մեջ սկիզբ դրեցին մռայլ ժամանակների։ Ծանր էր հատկապես Հայաստանի վիճակը, որը դարձել էր Օսմանյան կայսրության և շահական Պարսկաստանի միջև մղվող անընդմեջ պատերազմների թատերաբեմ։ 1639թ. ռազմական տեսակետից գրեթե միմյանց հավասար այդ երկու պետությունների միջև կնքված պայմանագրով Արևմտյան Հայաստանը մնաց Օսմանյան կայսրության կազմում, իսկ Արևելյան Հայաստանը անցավ Պարսկաստանի տիրապետության տակ։ Բայց դա խաղաղություն չքերեց Հայաստանին։ Պատերազմները շարունակվում էին, և Ղարաբաղի հայկական մելիքությունները դարձան Պարսկաստանը թուրքական արշավանքներից պաշտպանող առաջդիրքը։ Նադիր շահի օրոք և նրա հովանավորությանը 1735թ. հինգ հայկական մելիքություններ (Գյուլիստան, Զրաբերդ, Խաչեն, Վարանդա, Դիզակ) միավորվեցին մեկ ռազմաքաղաքական ու վարչական միավորի մեջ, որ տարածաշրջանի պատմության մեջ հայտնի է Խամսայի մելիքություններ անունով («Խամսա» արաբերեն նշանակում է «հինգ»)։ Դիմնավորվեցին միավորած այս հնքնավար նահանգի սահմանները տարածվում էին Արաբսից մինչև Գանձակի մերձակայքը։ 18-րդ դարում հայկական այդ մելիքությունները դարձան Պարսկաստանի նոր վարչաքաղաքական միավորի՝ Ղարաբաղի խանության հիմքը։

Ղարաբաղի մելիքությունները գոյատևեցին ընդհուպ մինչև 19-րդ դարը, մինչև Անդրկովկասի միացումը Ռուսաստանին՝ մնալով տարածաշրջանի քաղաքական կարևոր գործուներից մեկը։ Եթե 13-15-րդ դարերում նրանք համագործակցում էին մոնղոլների հետ, իսկ 16-18-րդ դարերում դարձել էին պատճեց դեպի Արևելք Օսմանյան կայսրության արշավանքների ճանապարհին, ապա նոր իրադրության մեջ նրանք ստանձնեցին տարածաշրջանում ռուսական կողմնորոշման ձևավորման գործը։

Արցախի հոգևոր առաջնորդ, Գանձասարի կաթողիկոս Եսային Ղարաբաղի մելիքների անունից 1718թ. ռուսական կայսր Պետրոս Մեծին ուղղված նամակում ռազմական աջակցություն առաջարկեց Ռուսական կայսրությանը՝ Անդրկովկասը Ռուսաստանի հովանու տակ մտցնելու գործում։ Քաղաքական այդ վճիռը Արցախում կայացվեց այն հավատով,

<sup>5</sup> Տես Փ.Օհանջանյան, Արցախ - Ղարաբաղ, Ստեփանակերտ, 1998թ.։

որ Ռուսաստանի հիվանու ներքո Հայաստանն այլևս չի լինի պարսկա-  
թուրքական պատերազմների թատերաբեմ: Ռուսական արքունիքը ոչ  
միայն գրիունակությամբ ընդունեց հայ մելիքների առաջարկը, այլև  
հայտնեց Ղարաբաղի մելիքությունների իիմքի վրա հայկական քրիստո-  
նեական անկախ պետություն Վերականգնելու իր մտադրության մասին:  
Հայկական մելիքությունների իիմքի վրա անկախ հայկական պետակա-  
նության վերականգննան խոստումը տրվել է անձամբ կայսրուի Եկա-  
տերինա II-ի կողմից<sup>6</sup>:

## ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒԽԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Առաջին առնչություններից հետո շուրջ մեկ դար անցավ, մինչև 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանը ողջ Անդրկովկասն առավ իր տիրապետության տակ (Արևելյան Հայաստանը, որ մինչ այդ Պարսկաստանի ենթակայության տակ էր, գրականության մեջ հայտնի դարձավ նաև որպես Ռուսահայաստան): Բայց Ռուսական կայսրությունը ոչ միայն չկատարեց Ղարաբաղի մելիքությունների իիմքի վրա հայ-  
կական անկախ պետության վերականգննան խոստումը, այլև հայերի ու բնիկ մյուս ժողովուրդների համար անսպասելի ձևով տեղի թուրքախոս տարրը, որին կովկասյան թաթար կոչեց, ընտրեց որպես տարածաշրջա-  
նի իր քաղաքական ծրագրերի հենարան: Եվ ահա թե ինչու: Կայսրու-  
թյանը պետք էր քազմազգ երկրամասը «պոկել» Իրանի քաղաքական ու  
մշակութային ազդեցությունից, որը դարեր շարունակ առկա էր այնտեղ: Դրա համար նա պետք է հենվեր պարսիկների նկատմամբ առնվազն ոչ  
բարեկամաբար տրամադրված մի ժողովորդի վրա: Իսկ դա միայն տեղի  
թուրքերը կարող էին լինել, քանի որ թուրքերն ու պարսիկները մրցակ-  
ցում էին տարածաշրջանում գերիշխելու համար: Երկրամասի իսլամա-  
դավան բնիկ ժողովուրդները (քաղիշներ, լեզգիներ, թաթեր) քաղաքա-  
կան չգոյության մատնվեցին: Կայսրությունը նրանց «միավորեց» «մահ-  
մեդականներ» (մուսուլմաներ)՝ ընդհանուր անվան տակ: Եվ քանի որ  
«հայ»-ը դուրս էր մնում այդ ծրագրից, «մահմեդականներ ու հայեր» կա-  
ղապարը դարձավ երկրամասի (Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգնե-  
րի) ժողովորդական ու քաղաքական գործընթացների նկարագրու-  
թյան հիմնական եզրը:

Արևելյան Անդրկովկասի իսլամադավան ժողովուրդներին հեռացնել իրանական մշակութային արմատներից և հեռանկարում նրանց ռուսա-  
ֆիկացնել՝ այսպիսին էր կայսրության քաղաքական ուղղագիծը Հարա-  
վային Կովկասում<sup>7</sup>: Սակայն 19-րդ դարի երկորրդ կեսին կապիտալիզմի  
զարգացումը խառնեց այդ հաշիվները: Արիեստներում ու արվեստնե-  
րում հճուտ հայերը իսկույն առաջատար դիրքեր գրավեցին երկրամա-  
սում: Հիմնականում դեռ քոչվոր կյանք վարող կովկասյան թաթարը  
պատրաստ չէր պատմության այդ շրջադարձին: Բաքվի նավթային արդ-

<sup>6</sup> Տե՛ս «Нагорный Карабах в международном праве о мировой политике. Документы и комментарии. Т. 1, М., 2008» փաստաթերի ժողովածուի մեջ օրինակ, «Наставление князя Г.Потемкина генералу П.Потемкину о цели Российской политики в Карабахе: отстранение хана Ибрагима и признание статуса Карабаха как «Независимой кроме России никому области (от 6 апреля 1783г.)» և «Рапорт князя Г.Потемкина Екатерине II о необходимости восстановить в населенном армянами Карабахе национальное правление и таким образом возродить армянскую государственность (от 19 мая 1783г.)» թիվ 79 և 80 փաստաթերը:

<sup>7</sup> Առավել մանրամասն տե՛ս Տադևոս Սվետոխովսկի. Русское правление, модернизаторс-  
кие элиты и становление национальной идентичности в Азербайджане // Азербайджан и  
Россия: общества и государства. М., 2001:

յունաբերության սեփականատերերի խավը, տեխնիկական կառուցյների և ենթակառուցվածքների դեկապարությունը, բանվորական վերնախավը, քաղաքային մտավորականությունը ունեին առավելապես հայկական ու ռուսական դիմագիծ<sup>8</sup>: Բայց արդյունաբերության զարգացումը նաև սևագործ բանվորական ուժի մեջ պահանջարկ ծնեց: Ակսվեց թրքախոս բնակչության զանգվածային ներիռով իրանական Աղբեջանից: 19-րդ դարի վերջին քառորդում տարեկան 30-35 հազար թուրքախոս իրանցի է ներգաղթել Երկրամաս (թվերը վերաբերում են միայն լեզգական ներգաղթածներին): Ռուսական աղբյուրներում դրանց կոչում էին օտխողներին (օտխոնիկ): Այսպես, ավելի ուշ՝ 19-րդ դարի վերջերին, տեղի է ունեցել ժողովրդագրական բեկում՝ բնակչության մեջ թուրքախոս զանգվածի մեծացման իմաստով: Նորեկները չունեին որոշակի ազգային ինքնություն: Նրանք հավատքով շիա մահմետական էին, լեզվով՝ թուրքախոս, ծագումով՝ իրանցի ժողովուրդների ու Եկվոր թուրքական ցեղերի խառնուրդ: Ռուսական կայսրությունը սկզբում նրանց «ընկալեց» որպես պարսկաստանցիներ, իսկ ավելի ուշ նրանց կոչեց կովկասյան թաթարներ: Դակառակ դրան, ընդիուած մինչև 19-րդ դարի վերջը նորեկներն իրենց իրանական հասարակության մաս էին գտնակցում թե՝ իրենց ծագման, թե՝ մշակութային ինքնության առումով:

Կապիտալիզմը նոր ընթացք տվեց ոչ միայն Երկրամասի էթնիկական, այլև սոցիալ-քաղաքական զարգացումներին: Եվրոպայից արդյունաբերական Բարու սկսեցին թափանցել սոցիալական արդարության ու ազգային հավասարության հեղափոխական գաղափարները: Եվ դրանց կրողներն ու տարածողները Երկրամասում հիմնականում հայ բանվորներն էին, որոնք «գլխավորում էին պրոլետարական հիերարխիան» Անդրկովկասում<sup>9</sup>: Ռուսական կայսրության հատուկ ծառայությունները վստահ էին, որ արդյունաբերական Բարվում թաթարները չեն մասնակցելու բանվորական շարժումներին, հակակառավարական ընդվզումներին: Դեռևս 1904թ. քաղաքուն տարածվել էր «Մահմետականների միության» կոչը՝ ուղղված ոչ մահմեդական բնակչությանը, որուն հայտնվում էր, թե մահմեդականները չեն մասնակցելու հակակառավարական ցույցերին, իսկ եթե ինչ-որ ուժեր փորձեն իրենց ներքաշ-

<sup>8</sup> Առավել մանրամասն տես Խաչատուր Ղադայան, «Դայերը և Բարուն»: Երևան, 2006:

<sup>9</sup> Առավել մանրամասն տես История Азербайджана (в 3-х томах), том 2, стр. 253 - 262. Баку, 1960:

<sup>10</sup> Առավել մանրամասն տես Баберовский Й. Цивилизаторская миссия и национализм в Закавказье // Ab imperio: Новая имперская история постсоветского пространства. Казань, 2004, стр. 321 - 336:

ել դրանց մեջ, ապա իրենք բացահայտ կանցնեն կառավարության կողմը<sup>11</sup>: Դա բանվորական շարժումները ճնշելու ուղղությամբ կառավարության առաջիկա գործողություններին մասնակցելու կովկասյան թաթարների կողմից (բայց մահմեդականների անունից) ներկայացված հայտ էր: Կառավարությունը սուսկ ի գիտություն չընդունեց այն, այլ անհապաղ դրեց գործողության մեջ: Սոցիալական շարժումների թափը կուտրելու համար կայսրության հատուկ ծառայությունները 1905-07թ. հրահրեցին հայերի ու թաթարների բախումներ և թիկունքից պաշտպանեցին վերջիններին: «...Թաթարները իրենց սոցիալական վիճակով և կրոնական հավատալիքներով ամենից շատ տարբերվում էին հայերից... Նրանց լրիվ ազատություն էր ընձեռվում սպանելու, բռնանալու, թալանելու»<sup>12</sup>: Նենց այդ տարիններին Քարվաճարի, Քաշարթաղի (Լաշինի) շրջաններում հրկիզօվեցին ու դատարկվեցին բազմաթիվ հայկական գյուղեր: Կովկասյան թաթարների համար այդ բախումները համախմբման որոշակի ազդակ դարձան: Սակայն դա չէր կարող լուծել ինքնության անորոշության խնդիրը: Սեփական մշակութային թարձր արժեքների բացակայության պայմաններում ատելությունն ու անհանդուրժողականությունը բավարար չէին ինքնության կայացման համար: Ինքնության ծգնաժամն այդպես էլ մնաց չհաղթահարված: Դավատքով շիա, լեզվով թուրք, ծագումով և գենետիկորեն խառնածին զանգվածին մի կողմից հրում էին ռուսաֆիկացման, մյուս կողմից՝ թուրքացման հունը: Վերջին մղումը ավելի ազդու գտնվեց: Ռուսական և եվրոպական կենտրոններում կրթություն ստացած և տուն դարձած կովկասյան թաթարի զավակները XIX և XX դարերի սահմանագլխին դարձան պանթութիզմի գաղափարախոսության կերտողները Ռուսաստանում և քաղաքական այդ ուղեգործություն Արևելյան Անդրկովկասի թուրքացման ծրագրի հեղինակները: Ահա նման իրադրության մեջ Անդրկովկասը 1917թ. մտավ հեղափոխության հորձանութը:

<sup>11</sup>Տես «Кавказские мусульмане по материалам Особого отдела канцелярии наместника Кавказа (1912)» // Кавказский сборник. М., 2005, стр.170:

<sup>12</sup>Տես В.В.Ворвоский. Сочинения. Т. 3, М., 1933, стр. 106 - 107:

## ՇԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՑՆՑՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԳՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Բոլշէկիյան հեղափոխությամբ սկսվեցին Ռուսական կայսրության փլուզումը և նրա ծայրամասերում նոր ազգային պետությունների ձևավորման գործընթացը: Քաղաքական գիտակցության մեջ հիմնականում թուրքական կողմնորոշման հակված կովկասյան թաթարները հայտնվեցին Թուրքիայի նվաճողական քաղաքականության միջակայքում: Արդյունաբերական Բարքում իրադրությունը դուրս էր նրանց հսկողությունից, և 1917թ. նրանք իրենց գործունեությունը կենտրոնացրին Գանձակում (Գյանջա): Բարքուն պատրաստ էր սոցիալական վերահաշրջադարձին, և Պետրոգրադում հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո՝ հոկտեմբերի 31-ին, Բանվորական և զինվորական պատգամավորների Բարքի խորհրդուղ խաղաղ ձևով իշխանությունը վերցրեց իր ձեռքը<sup>13</sup>: Խորհրդային իշխանության ազգային հիմքը տեղի հայ և ռուս բնակչությունն էր: Այդ հիմաստով օրինաչափ էր և այն, որ Բարքի կոմունայի դեկապարզ հայագֆ Ստեփան Շահումյանն էր: 1917թ. Բարքի նահանգի հայության կողմնորոշումը դեպի Խորհրդային Ռուսաստան պարտադրված էր պատմական իրադրությամբ: Ռուսաստանից պոկվելու այլրոնտրանքը Թուրքիայի ազդեցության ոլորտն ընկնելու վտանգավոր հեռանկարն էր: Այդ ընտրության ելքը, Թուրքիայում իրագործված Հայոց ցեղասպանության և դեռևս շարունակվող կոտորածների պայմաններում, դժվար չէր կանխատեսել: Թուրքական վտանգն ավելի իրական դարձավ այն բանից հետո, եթե Ռուսաստանի Դումայի՝ Անդրկովկասից ընտրված և «տուն դարձած» պատգամավորները 1918թ. փետրվարին կազմավորեցին Անդրկովկասյան Սեյմը և երկրամասը հօչակեցին Ռուսաստանից անկախ դաշնային պետություն: Սեյմում հայերը, վրացիները և մահմեդականները ներկայացված էին նաև իրենց ազգային կուսակցություններով: Մահմեդականների մեջ գերիշխող էին կովկասյան թաթարների թուրքամետ մտավորականների կողմից 1911թ. հիմնված «Մուսավար» կուսակցության ներկայացուցիչները: Դաշնային պետության տեսքով Անդրկովկասի անկախացումը թուրքական պահներում դիտվում էր որպես երկրամասում նոր թուրքական պետություն հիմնելու առաջին քայլը<sup>14</sup>: Միանգամայն

<sup>13</sup> Տե՛ս Ե.Ա. Տոկարչևսկի. Ին պատմության պատմության մասին. Ազերբայջան. Բակու, 1957:

<sup>14</sup> Անդրկովկասյան Սեյմում ուժեղի հարաբերակցության, «Մուսավար» կուսակցության թուրքամետ քաղաքականության մասին մահմեդական տե՛ս Մ. Վոլխոնսկի, Վ. Մухանով. Ուղարկած պատմության մասին. Եղբայրություն. Բակու, 2007:

հասկանալի է, թե ինչու Բարքի խորհրդուղ նույն 1918թ. դուրս եկավ երկրամասը խորհրդային Ռուսաստանից անջատելու դեմ:

Բարքի հայության քաղաքական դիրքորոշումն իր ազդեցությունն ունեցավ երկրամասում ծավալված իրադարձությունների վրա: Մասնավորապես, երբ 1918թ. մայիսին Թուրքիայի հրահրմանը մուսավաբականները խափանեցին Անդրկովկասյան Սեյմի գործունեությունը, և Թիֆլիսում հօչակվեցին Երեք պետություններ (մայիսի 26-ին՝ Վրաստանի Յանրապետությունը, մայիսի 28-ին՝ Հայաստանի Յանրապետությունը (ՀՀ) և Աղրբեջանական Դեմոկրատական Յանրապետությունը (ԱՊՀ)), պարզվեց, որ նորահօչակ Աղրբեջանական Դեմոկրատական Յանրապետության կառավարությունը չի կարող ժամանել իր հօչակած մայրաքաղաքը Բարքու, քանի որ քաղաքական իշխանությունն այնտեղ գտնվում էր հայերի կողմից պաշտպանվող, օրինաբար ընտրված և իրադրությունը լիիրավ վերահսկող Բարքի խորհրդի ձեռքում: Կովկասյան թաթարները տնտեսական, քաղաքական ու ռազմական քավարար ներուժ չունեին Անդրկովկասի մահմեդական խորհրդի անունից հօչակված պետությանը իրական բովանդակություն տալու համար: Դա ակնհայտ դարձավ նաև այն բանից հետո, երբ 1918թ. հուլիսի 22-ին Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների առաջին համագումարը հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը ինքնուրույն վարչական միավոր է և երբեք Աղրբեջանական Յանրապետության մաս չի կազմի: Յանագումարի կողմից ձևակորված ժողովրդական կառավարությունը (հետագայում՝ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ) նույն 1918թ. ամռանը Յոյսիսային Արցախի հայկական շրջանի բնակչության նախաձեռնությամբ ու խնդրանքով դրանք հայտարարեց իր իշխանության տակ գտնվող շրջանները: Երկրամասի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարները սուսկ չեն մերժում զինաթափելու և Աղրբեջանական Յանրապետության իշխանությունն ընդունելու թուրքական զորահրամանատարության վերջնագրերը: Բոլոր համագումարները, բացառությամբ յոթերորդի, անարիկ մնացած երկրամասը հայտարարում էին նորանկախ Հայաստանի Յանրապետության մաս: Բացատրության կարիք ունի այն հարցը, թե ինչու երկրամասը հայտարարելով Հայաստանի Յանրապետության անկապետելի մաս՝ միաժամանակ տեղում ձևակորվում էին օրենսդիր իշխանության մարմինները: Ղարաբաղցիները լավ գիտեին, որ ցեղասպանության ու պատերազմի վերբեր չըուժած Հայաստանի Յանրապետությունն այդ պահին ի վիճակի չէ իր պաշտպանության տակ առնել Արցախը: Տեղում անհրաժեշտ էին համապատասխան լիազորություններով օժտված օրինական իշխանություններ՝ թուրքերի ու մուսավարների վե-

րահաս հարձակումներից հայրենիքը պաշտպանելու համար: 1918-20թթ. Լեռնային Ղարաբաղը ինքնուրույն վարչաքաղաքական միավոր էր ինքնիշխանության բոլոր բնորոշիչներով:

Արևելյան Անդրկովկասի հակայածավալ տարածքները, որոնց հավակնելու հայտ էր ներկայացրել ԱԴՀ-ն 1918-19թթ., դուրս էին նրա վերահսկողությունից: Մինչև թուրքական ռազմական ինտերվենցիան Բաքվում և Շուշիում իշխանությունների ազգային հենարանը հայերն էին, և բնական է, որ 1918-20թթ. Արևելյան Անդրկովկասի երկու գլխավոր համայնքների՝ հայերի ու կովկասյան թաթարների միջև բորբոքված էրնորքադարձական վեճն ըստ էության ողջ երկրամասի ազգային-պետական կարգավիճակի շուրջ էր: Սա նշանակում է, որ մինչև թուրքական ինտերվենցիան Ղարաբաղյան հակամարտություն, որպես այդպիսին, չկար: Կար էրնորքադարձական հակամարտություն կովկասյան թաթարների ու հայերի միջև ողջ Արևելյան Անդրկովկասի ազգային-պետական կառուցվածքի շուրջ: Էրնորքադարձական ուժերի հարաբերակցությունը 1917թ. Արևելյան Անդրկովկասում բացառում էր այդտեղ կովկասյան թաթարների ազգային պետության ստեղծումը, եթե չլիներ արտաքին միջանմտությունը: Այդ գործն իր վրա վերցրեց Թուրքիան. նոր թուրքական պետության համար Իրանի հյուսիս-արևմտյան նահանգի «Աղրբեջան» անվան սեփականումը թափանցիկ ակնարկ էր պարուկական այդ տարածքին հավակնելու Թուրքիայի պլաների վերաբերյալ (մինչ այդ Արաքսից հյուսիս ընկած Արևելյան Անդրկովկասի տարածքում «Աղրբեջան» անունով աշխարհագրական կամ վարչական տարածք չէր եղել):

## ԻՆՉՈ՞Ւ «ԱՂՐԲԵՋԱՆ», ՈՐՏԵՂԻՑ Է ԱՅԴ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԳԱԼԻՍ...\*

20-րդ դարասկզբին Արաքսի հյուսիսում գտնվող ներկայիս Աղրբեջանի վերահսկողության ներք գտնվող տարածքը կամ դրա մի մասը ստացավ անկախություն: Կանխավ որոշված էր, որ այն կոչվելու է «Արևելյան և Զարավային Անդրկովկասյան Զանրապետություն», սակայն «Մուսավաթը» կարողացավ այս որոշումը փոփոխել և երկիրը վերանվանել «Աղրբեջանի Զանրապետություն»<sup>15</sup>: Այս որոշմամբ տեղացի ժողովուրդները, որ մինչ այդ կոչվում էին թյուրքեր կամ կովկասյան թաթարներ ընդհանուր անուններով, արդեն երեսնական թվականներին դարձան աղրբեջանցիներ<sup>16</sup>: Այսպես ծնվեց աղրբեջանցի «ազգը»: Փաստորեն քաղաքական որոշմամբ մեկ ակնթարթում փոփոխվեց այս տարածքում բնակվող մեկ էրնիկ կոնգլոմերատի հավաքական անվանումը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Այսպիսով՝ մի անուն, որը դարեր շարունակ իրապես պատկանելով Արաքսի հարավում գտնվող Պարսկաստանի նահանգին, տրվեց 1918թ. ծևավորված մի երկիր, որը գտնվում էր նույն գետի հյուսիսային ափերին<sup>17</sup>: Սա բնականն կերպով հարուցեց իրանական հասարակական գործիչների (Շեյխ Մուհամմադ Խիաբանի, Խամայիլ Ամիրիխազի, Ամնադ Ջասրավի) զարմանքն ու վրդովնունքը: Նրանք նշում էին, որ «Կովկասի այս երկրամասը... ունի ուրիշ անվանում և երբևէ Աղրբեջան չի կոչվել»<sup>18</sup>:

Մի կարևոր հանգամանք ևս. աղրբեջանական աղբյուրները և պատմագրությունը սովորաբար հայտարարում են, որ իրենք կովկասի քրի-

\* Ենթագլխի պատրաստման ժամանակ բավական արժեքավոր ներդրում են ունեցել Ռ.Գալիշանի հեղինակած The Invention of History: Azerbaijan, Armenia, and Theshowcasing of Imagination by Rouben Galichian, 2009; Countries of the Caucasus in Medieval Maps: Armenia, Georgia and Azerbaijan by Galichian and Rouben, 2007, Historic Maps of Armenia: The Cartographic Heritage by Rouben Galichian, 2004. հետազոտությունները:

15 Տե՛ս Բարտոլդ Բ.Վ., Բարեկամություն Կավկազի և Վաստակած պատմությունը, 1913, համար 1, 1913, էջ 10:

16 Տե՛ս Ալեքսեև Ա.Կ., Աշխարհագրությունը Աղրբեջանում, 1960, էջ 71:


17 Տե՛ս Bayat, Kaveh. Storm Over the Caucasus: A Glance at the Iranian Regional Relationship with the Republics of Azerbaijan, Armenia and Georgia in the First Period of Independence 1917-1921 (Թեհրան. Արև. Գործ. Խախատություն, 2002), 45-47.

պարսկերենով: (Փոքրիկը Կովկասում, 2002) հղումն ըստ The Invention of History: Azerbaijan, Armenia, and Theshowcasing of Imagination by Rouben Galichian (2009):

18 Տե՛ս Moghaddam, Ahmad Khalilullah. Where is the Real Azerbaijan. Bonn: Aseman, 2008. (Persian), p 38, հղումն ըստ The Invention of History: Azerbaijan, Armenia, and of Imagination by Rouben Galichian (2009):

տոնյա աղվանացիների հետնորդներն են, սակայն այս հանգամանքը հակասում է նույն Ադրբեջանում տարածվող ադրբեջանցիների արմատների թրքական ծագման և բուրանական քարոզությանը, որի համաձայն թրքախոս բոլոր ադրբեջանցիները սերված են թրքական ցեղերից և պատկանում են Միջերկրականից մինչև Սոնղոլիա ձգվող թրքախոս ժողովորդների շարքին: Ուստի պանթուրքիզմին սիրաշահելու ու նրա հետ լավ հարաբերություններ պահպանելու, ինչպես նաև իրենց թրքական ծագումը վերահաստատելու համար Ադրբեջանի իշխանությունները հայտարարում են, որ թրքական Կարա-կոյունլու, Աղ-կոյունլու և Սեֆյան ցեղերը նույնպես նրանց նախահայրերն են: Այս պնդումը թերևս Ադրբեջանի և Թուրքիայի հարաբերությունները բարելավելուն նպաստի, բայց առաջ է բերում իրենց ժողովորդի երկու տարբեր և աշխարհագրական տեսակետից իրարից հազարվող կիլոմետրեր հեռու ապրող ցեղերից սերված լինելու պարագան<sup>19</sup>:

Այժմ, ներկայացնելով անտիկ և միջնադարյան մի քանի քարտեզներ, փորձենք որոշակիացնել, թե Ադրբեջան ասելով՝ ավանդաբար ինչ են հասկացել և նկատի ունեցել մակրոտարածաշրջանի երկրներում:



Դարավային Կովկասն ըստ Պտղոմեոսի, որը կրում է «Մեծ Հայի, Աղվանի, Վիրի և Կողմիսի (Արխազիայի) բարեզօք» անվանումը: Զեռագիրը դաշտավայր է Գերմանիայի Ռում Խաղամու 1482թ., տեղադրված Ասիհայի գլխում:

Տե՛ս Ռուբեն Գալիչյան, Դաշտավայր համաշխարհային բարեզօքության մեջ, Երևան. 2005, էջ 89:

<sup>19</sup> Տե՛ս Թամայա Ինքանի, խմբ., War Against Azerbaijan. Targeting Cultural Heritage (Քայլու: Ադրբեջանի արտաքին գործերի նախարարություն, 2007) 7, 11, 12. (Դաշտեազն ընդունված Ադրբեջանի, Քայլու. 2007), հղումն ըստ The Invention of History: Azerbaijan, Armenia, and Theshowcasing of Imagination by Rouben Galichian (2009):

Մեկ այլ վկայություն. իններորդ դարի պարսիկ գիտնական իրն խորդադրեին իր աշխարհագրական «Քիթաբ-ուլ Մասալեք վա ալ-Մամալեք» երկուն (Գիրը ճանապարհների և երկրների) Ադրբեջանի և Աղվանքի (Արրան) մասին գրում է հետևյալը.

Արրանի, Գուրզանի և Միսիջանի երկրները Կասմերի աշխարհամասի մի մասն են կազմում, որոնց միջեւ Անուշեհրվանը: Յուլիսիսը, որը Պարսկաստանի բառորդ մասն է կազմում, իշխում է Աղաղատկան անուն կրող զորավարը: Այս ցըանի մեջ են մասնում Յայաստանը, Ադրբեջանը, Ույը, Ղեմավենդը, որի կարևոր բաղանքն է Ծալանբան...<sup>20</sup>:

Իրն խորդադրեից նշում է Ադրբեջանին պատկանող հետևյալ քաղաքների անունները՝ Սարաղա, Միանջ (Միանե), Արդարիլ, Վարդան (Վարզական), Թավիկիզ, Մարանդ, Խոյ, Սողան, Բարզանդ, Զաբերվան, Ուրմիա և Սալմաստ...<sup>21</sup>:

Վերոհիշյալ բոլոր քաղաքները մշտապես եղել ու այժմ էլ գտնվում են Պարսկաստանի Ադրբեջան կամ Ատրպատական նահանգում, ինչը մեկ անգամ ևս փաստում է՝ Ադրբեջանը միշտ էլ եղել է Պարսկաստանի նահանգներից մեկը և գտնվել է Արաքսից հարավ ընկած տարածքում<sup>22</sup>:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ ազգաբնակչությանը՝ «ադրբեջանցիներ», ապա նաև երկրին «Ադրբեջան» անվանումը տալով՝ տեղի դեկավարները հետապնդում էին մի քանի հիմնական նպատակ:


Առաջին՝ պատմականորեն օրինականացնել սեփական պետություն ունենալու հավակնությունները՝ հղում կատարելով այն իրողությանը, թե «Ադրբեջան (կամ Ատրպատական)» անվանումով երկրատարածք արդեն վաղուց առկա է և ամենակին կարևոր չէ, որ այն այլ վայրում է, այլ պետության վերահսկողության ներք:

Երկրորդ՝ նմանօրինակ անվանման սեփականաշնորհումը բավական նույր ենթատեքստ ուներ՝ կապված այն հանգանանքի հետ, որ հետագայում, եթե Զարավային Կովկասում նորաստեղծ պետության համար նպաստավոր ուժային հավասարակշրության իրավիճակ ստեղծվեր, ապա չէր բացառվում, որ «Մեծ Ադրբեջան» գաղափարի իրագործման փորձեր ձեռնարկվեին ի հաշիվ իրանական այն երկրամասի, որի անունը իրենք նախապես հափշտակել էին:

<sup>20</sup> Տե՛ս Արևու-Ղասիմ Ութեյդուլլահ իրն-Արդուլլահ իրն խորդադրեի, Քիթաբ-ուլ Մասալեք վա ալ-Մամալեք, արտաքին տեքստ և ֆրանսերեն թարգմանությունը: (Լայդն. Բրիլ հրատ., 1889), 118 - 120, հղումն ըստ The Invention of History: Azerbaijan, Armenia, and Theshowcasing of Imagination by Rouben Galichian (2009):

<sup>21</sup> Տե՛ս նոյն տեղում 118-119:

<sup>22</sup> Տե՛ս The Invention of History: Azerbaijan, Armenia, and Theshowcasing of Imagination by Rouben Galichian (2009):



- 22 -

Карта 10. Ареал Азербайджан и Армении

Կոլկասայան Արքամիայի (Սովորամի), Դայաստամի և Աղրեջանի թարթական թագավորությունների բարձրագույն թագավորությունը: Բարձրագույն Աղրեջանի թագավորությունը: Արքամիայի Արքանի Մասկանիա և Արմենիա, Վրաստան, Աղրեջան և Ազգային շատթում, Տեսք սահմանագծում:

Rouben, 2007:



Դայաստամի, Աղրեջանի և Աղվանիի թարթական թագավորությունների գաղութը պատմամուլություններում: Աղվանի Արքանի և Կուր գետի հյուսիսում է, իսկ Աղրեջանի Արքանի հարավական դիրքում: Փարհպում դահլված իր Դայաստամի Աղվանի ազգային գրադարան, MS Arabe 2214, էջ 58, 1145թ., Տեսք սահմանագծում:

- 23 -

# ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ԵՎ ՆՈՐ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Աղրբեջանական Յանրապետությունն այդպես էլ կմնար «թղթի» վրա, եթե Թուրքիան չներխուժեր Անդրկովկաս և չմիջանտեր երկրամասի ազգային-տարածքային հարցերի շուրջ կովկասյան թաթարների ու հայերի միջև ծագած հակամարտությանը: Թուրքական քանակը Յայաստանի Յանրապետության վրա հարձակվեց մայիսի 28-ին՝ Յանրապետության հօչակման հենց առաջին օրը: Նպատակը պարզ էր՝ Յայոց ցեղասպանությունը շարունակել նաև Արևելյան Յայաստանում (Ռուսահայաստանում): Արևելյան Անդրկովկասում իհմնելու թուրքական նոր պետություն: Սարդարապատի տակ նորանկախ Յայաստանի գինվածությունը և աշխարհազորայիններին հաջողվեց խափանել Արևելյան Յայաստանում ցեղասպանության ծրագիրը, սակայն չհաջողվեց կանգնեցնել թուրքերի առաջնադացումը դեպի Բաքրու:

Սարդարապատից հետո թուրքական ներխուժման գլխավոր թիրախները Բաքրուն և Լեռնային Ղարաբաղն էին: Նրանց դիմակայող հիմնական ազգային ուժը թե՛ Ապշերոնում, թե՛ Ղարաբաղում հայերն էին:

1918թ. սեպտեմբերին թուրքական կանոնավոր գորքերը եռամսյա կատաղի մարտերից հետո գրավեցին Բաքրուն և իշխանությունը տեղում հանձնեցին մուսավարական կառավարությանը: Քաղաքը հանձնելու վերջնագիրը թուրքական գորքերի հրամանատար Նուրի փաշան ներկայացրեց Բաքվի հայոց Ազգային խորհրդին, չնայած հրաշալի գիտեր, որ տվյալ դեպքում Խորհրդային Ռուսաստանն էր ներկայանում որպես պատերազմող երկիր: Վերջնագրերում անընհատ հիշատակելով հայերին, որոնք քաղաքի հիմնական պաշտպաններն էին, Նուրի փաշան հող էր նախապատրաստում քաղաքը գրավելուց հետո այդտեղ հայկական ջարդեր հրագործելու համար: Թուրքական գորքերին ուղեկցող և նրանց աջակցող Գերմանական ծառայության՝ Բաքվի հայկական Ազգային խորհրդին ուղղված նամակներում առանց ավելորդ դիվանագիտական գգուշավորության էր ներկայացվում քաղաքում հայկական կոտրածներ կազմակերպելու թուրքերի մտադրությունը<sup>23</sup>:

Աղրբեջանական Դեմոկրատական Յանրապետությունը Թուրքիայի

կողմից ռազմական ինտերվենցիայով այլ ժողովուրդների տարածներում քանակերորդ դարում նոր թուրքական պետություն հիմնելու փորձ էր, որը նախորդել էր Յունաստանի Կիպրոսի Թուրքական Յանրապետությանը: Վերջինս՝ որպես ապօրինի միջամտությամբ ստեղծված գոյակցություն, առ այսօր միջազգային ճանաչում չի ստանում: Սակայն 1918թ. համաշխարհային պատերազմի ու հեղափոխական ցնցումների խառնակ ժամանակներում Թուրքիային հաջողվեց հայերի կոտորածների միջոցով (Բաքվում կոտորվել է 30 հազար հայ) ասպարեզ հանել «ինքնիշխան» մի հանրապետություն, որը հենց Թուրքիայի հետ կնքած գաղտնի համաձայնագրով առանց վերջինիս թույլտվության այլ պետությունների հետ հարաբերվելու իրավունք չուներ: Թուրք խաժամուժը և կանոնավոր գորքը Բաքվում կազմակերպեցին քաղաքի հիմնական պաշտպանների հայերի եռօրյա սպանության շարունակությունն էր դա՝ իրագործված թուրքական կանոնավոր բանակի մասնակցությամբ: Բաքվում «Վերջացնելով գործը»՝ թուրքական քանակը և մուսավարական զորամահավորումները շրջվեցին դեպի Լեռնային Ղարաբաղ: ճանապարհին իրկիզմեցին հայկական և ուղիական տասնյակ գյուղեր<sup>24</sup>:


Մահացու վտանգ կախվեց Լեռնային Ղարաբաղի՝ Արևելյան Անդրկովկասի հայության գլխավոր ամրոցի վրա: Սակայն այստեղ նահանջած հայ կամավորականներին ու տեղի ինքնապաշտպանական միավորումներին հաջողվեց անառիկ պահել իրենց հայրենիքը:

Եթե 1918-20թթ. թուրքերին ու մուսավարներին հաջողվեր հայերի դիմադրությունը կոտրել նաև Ղարաբաղում, այսօր Ղարաբաղյան հարց պարզապես չէր լինի, քանի որ արցախարնակ հայերը ոչնչացված կլինեին: Այսօր այդ հարցը կա, որովհետև 1918թ. թուրքերը չկարողացան ծնկի բերել Լեռնային Ղարաբաղը, չկարողացան ոչնչացնել երկրամասի հայությանը, ինչպես ծրագրել էին: 1918թ. այդ հարցի էռթյունն այն էր, որ Լեռնային Ղարաբաղում չունենալով ոչ քաղաքական, ոչ վարչական, ոչ տնտեսական վերահսկողություն և ոչ էլ պատմական որևէ իրավունք, պանթուրքիզմի քաղաքական գործիք դարձած մուսավարական Աղրբեջանական Յանրապետությունը հանդես եկավ բացարձակապես անհիմն տարածքային նկրտումներով (առ այսօր՝ 80 տարի անց, խնդրի էռթյունը մնում է նույնը): միջազգային հանրությունից պահանջելով ճանաչել իր ինքնիշխանությունը նաև Լեռնային Ղարաբաղում: 1919թ. Աղրբեջանն Ազգերի լիգա ներկայացրեց հողային իր պահանջները:

<sup>23</sup> Տես 2003թ. Երևանում լույս տեսած «Յայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ.» փաստաթղթերի ժողովածուի թիվ 57, 69, 70 փաստաթղթերը:

<sup>24</sup> Մանրամասն տո ԵԲԸ, թ. I, 1926, ցր. 642, ինչպես նաև՝ «Յայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ., Երևան, 2003»:

Պաշտոնապես ներկայացրած քարտեզում նրանց կողմից հավակնվող տարածքները ձգվում էին Բարվի մինչև Բարում:




**Աղբեջանի կողմից Փարիզի խաղաղության կոնֆերանս ներկայացված տարածքանային երկրների նկատմամբ Բարվի տարածքային հավակնությունների փառք, որը վայլ է իրողություն դարձնելու Մեծ Աղբեջան տանը ուրիշական գաղափարը,**  
*(Տե՛ս Հայոց Կարաբախ և մայուսական գաղափարը,*  
*(Տե՛ս Հայոց Կարաբախ և մայուսական գաղափարը,*  
ՅՈՒ. Բարսեղոս, Մ 2008ց, ստոր. 545)

1920թ. մարտին մուսավարները, որոնց գինել էր Թուրքիան, խախտելով Ղարաբաղի Ազգային խորհրդի հետ կնքված ժամանակավոր համաձայնագիրը, իրկիցեցին Արցախի պատմական մայրաքաղաքը Շուշին և շրջակա հայկական գյուղերը, որի արդյունքում սպանվեց 30 հազար հայ:

Ազգերի լիգան 1920թ. նոյեմբերի 20-ին մերժեց կազմակերպությունը ընդունվելու Աղբեջանի դիմումը հենց այն հիմնավորմամբ, որ այն հավակնում է իր կողմից չվերահսկվող և իրեն չպատկանող տարածքների<sup>25</sup>. Միջազգային հանրությունն այդպես էլ չճանաչեց Բարվի իշխանությունը Լեռնային Ղարաբաղում և հայկական այլ տարածքներում: Բայց

<sup>25</sup> Տե՛ս League of Nations. The Records of the First Assembly. Meetings of the Committees II. Geneva 1920; p. 173 - 174 //Հայոց Կարաբախ և մայուսական գաղափարը (դокументներ և կոմենտարիալ) Տոմ I, ստոր. 574. Մ., 2008.

## RÉPUBLIQUE ARMÉNIENNE



Էթնոգրաֆический состав указан на основе официальных данных по изданию агентства Кавказ 1917 года.

Армянское население: на всем Кавказе – 1.863.000;

В пределах Республики Армении – 1.293.000 (59,87 проц.)

Татар, турок, караанахов, туркменов и др. – 588.000 (27,22 проц.);

Курдов – 82.000 (3,79 проц.)

Русских, греков, грузин – 123.000 (5,7 проц.);

Христианское население – 65,57 проц.

Мусульманское население – 31,01 проц.;

**Դայաստանի տարածք փառք՝ ներկայացված 1919թ. Փարիզյան համաժողովին**  
*(Տե՛ս Հայոց Կարաբախ և մայուսական գաղափարը 1919թ. Փարիզյան համաժողովին)*  
ՅՈՒ. Բարսեղոս, Մ, 2008ց, ստոր. 544)

այդ հավակնությունների հետևանքով դրանք ճանաչվեցին վիճելի տարածքներ: Թուրքական ինտերվենցիայի աղյունքում ասպարեզում հայտնված, դե-յուրե չճանաչված, սահմաններ ծեռք չբերած մուսավաթական ԱՂՋ-ն թողեց պատմության թատերաբենը, երբ 1920թ. ապրիլի 28-ին խորհրդային Ռուսաստանի XI Կարմիր բանակը մտավ Բաքու, տապալեց խանաձիկային մուսավաթական կառավարությունը և «ապստամբած աշխատավորների անունից» այնտեղ հրչակեց խորհրդային իշխանություն: Ռուսական բանակը վերացրեց թուրքական բանակի հիմնած պետականությունը և ինքը հիմնեց Ռոտը:

# ԻՆՉՈՒ ԽՈՐՇՐԴԱՅԻՆ ՇՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՍԲ ԿԱԶՄԱՎՈՐՎԵՑ ՈՉ ԱԶԱՅԻՆ (ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ) ՏԻՊԻ ԽՈՐՇՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային գործերի Բարու մտնելու հենց առաջին օրերից հասկանալի էր, որ ազգային հարցը լուծելու առկա հնարավորությունները արդյունավետ չեն, իսկ եղած խնդիրները հնարավոր չեն շրջանցել: Ուստի հարկավոր էր մի նոր մոդել՝ ինտերնացիոնալ, արտազգային (անհապահութեան) Արդբեջանի օրինակը, որտեղ պետք է հրագործվեր ժողովուրդների սոցիալիստական բարեկամության՝ մինչ այդ չտեսնված մի փորձ, որը, սակայն, քաղաքական նպատակահարմարության և ոչ թե պետականության նյութականացման բնականոն գործընթացի արդյունք էր:

1920թ. ամռանը, երբ խորհրդային XI Կարմիր բանակն առաջ էր շարժվում դեպի Յայաստան ու Վրաստան, տարբեր ազգության բոլշևիկյան գործիչներ, այդ թվում՝ Ն.Նարիմանովը, Բարվից հատուկ մի նամակով դիմեցին Կենտրոնին հիմնավորելով Արդբեջանում ուժեղ արտազգային կենտրոն ստեղծելու գաղափարը<sup>26</sup>: Արտազգային այդ կենտրոնը պետք է դարձնար սոցիալիստական հեղափոխության առաջադիրքն Արևելքում: Փաստորեն առաջարկվում էր ստեղծել Երկրանասի ժողովուրդների ընդհանուր պետություն: Արևելյան Անդրկովկասում տեղի թուրքերի (կովկասյան թաթարների) ազգային պետության հիմնումն այդ տարիներին հնարավոր չէր դիտվում: Երկրամասը տասնյակ քնիկ ազգերի ու ազգությունների (հայերի, լեզգիների, թալիշների, թաթերի, ուդիների և այլ ժողովուրդների) ընդհանուր հայրենիքն էր, իսկ Բարուն նույնիսկ թուրքական գործերի հրագործած ջարդերից հետո էլ ուներ ավելի շատ ռուսական ու հայկական, քան թուրք-թաթարական դիմագիծ: Պատահական չէր, որ Բարվի խորհրդայնացումից անմիջապես հետո «Յոդի դեկրետը» և պետականական մյուս հիմնարար փաստաթղթերը հոչակվեցին երեք լեզուներով՝ հայերեն, ռուսեն ու թուրքերեն:

1921թ. Բարվի գավառի գյուղական համայնքներում անցկացված մարդահամարը պաշտոնական վիճակագրության տեսքով արձանագ-

րել է հետաքրքիր տվյալներ գավառի գյուղերի ազգային կազմի մասին: Բնակչության 85,59 տոկոսը ազգային պատկանելության տեսակետից հաշվառվել է որպես աղբեջանցի թուրքեր, այն դեպքում, եթե տոհմային պատկանելությամբ այդ նույն ազգաբնակչության 83,50 տոկոսը իրեն համարել է թաք: Դա ինքնության անորոշության խնդիր ունեցող գյուղական այն զանգվածն էր, որը հետո պիտի հայտնվեր «թուրքացման աղացում»՝ փոփոխելով Երկրանասի էթնիկական դեմքը և այն դարձնելով թուրքական քաղաքականության մաս<sup>27</sup>:

Բոլշևիզմի ծրագրերում ԱդրխՍՅ արտազգային բնույթին տրվում էր սկզբունքային բնույթ: Արևելյան Անդրկովկասում հայերի ու նահմեդականների ընդհանուր (ոչ ազգային) պետության ստեղծման վերջնական իմաստը բոլշևիկյան Կենտրոնը տեսնում էր դեպի Արևելք «կարմիր հեղափոխության» ծավալման հեռանկարության տակ էր իրանական Արդբեջանը, և այդ համատեքստում էլ պարզ է դառնում, թե ինչու բոլշևիկները, հետևելով թուրքերին, նոր հանրապետության անվանումը Արդբեջան թողեցին: Բոլշևիկները թուրքերից վերցրին «Սեծ Արդբեջանի»՝ արդեն պատրաստի գաղափարը՝ այն «կարմիր տարբերակով» իրագործելու համար: Մեկ այլ ձևով հսկայածավալ հայկական տարածքների օտարումը հօգուտ ԱդրխՍՅ-ի «ընկալելի բացատրություն» չէր ստանա: «Ընդհանուր պետության» գաղափարը ամենից հարմարն էր:

26 Տե՛ս «Կ истории образования Нагорно - Карабахской Автономной Области Азербайджанской ССР: документы и материалы». Баку, 1989, стр. 99 - 101

27 Առավել մանրամասն տե՛ս Հ.Г. Волкова. Этнические процессы в Закавказье // «Кавказский этнографический сборник», IV, М., 1969; «Известия Аз. ЦСУ» за 1921-1922 гг.:

# ԵՌԱՎԱՐԱՅԻ, ԶԱՆԵՉՈՒՐԻ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՃԱՆԱՇՈՒԸ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՈՂԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՔԱՏԵԼԻ ՄԱՍ

1920թ. ինտերնացիոնալ սոցիալիստական Աղրբեջան ստեղծելու գաղափարը բոլշևիկները քաղաքական իրատապ օրակարգ չմտցրին ոչ միայն այն պատճառով, որ այն կարող էր վաճել Երևանին ու Թբիլիսիին: Ուղղակի վերջնական որոշում կայացված չէր: 1920թ. օգոստոսի 10-ին Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանի Հանրապետությունը նախաստորագրեցին համաձայնագիր, որով բոլշևիկյան Կենտրոնը, հետևելով Ազգերի լիգային, Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Զանգեզուրը ճանաչեց վիճելի տարածքներ: Այլ կերպ՝ Խորհրդային Ռուսաստանն այդ տարածքները չճանաչեց Խորհրդային Աղրբեջանի մաս: 1920թ. Հայաստանի ու Վրաստանի Խորհրդայնացումն ամենից կարևոր հարցն էր Կենտրոնի համար, որը հրաշալի գիտեր, որ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը հայկական հողեր են: Բարվում նույնպես հրաշալի գիտեին այդ մասին: Եվ բնական է, որ 1920թ. նոյեմբերի 30-ին՝ Խորհրդային իշխանության հաստատման հաջորդ օրը, Բաքուն դրանք ճանաչեց Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս<sup>28</sup>:

Դեկտեմբերի 1-ին՝ Երևանում խորհրդային կարգերի հաստատման կապակցությամբ Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում նորից իրապարակվեց Աղրիելկոնի հոչակագիրն այն մասին, որ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Աղրբեջանի կողմից ճանաչվում են Խորհրդային Հայաստանի անկապտելի տարածքներ: Առավոտյան՝ դեկտեմբերի 2-ին, մամուլում հրապարակվեց Հոչակագրի փոփոխված տեքստ (Հոչակագրի բնագիրը Բաքուն մինչ օրս պահում է, ինչպես ասում են, յոր փակի տակ): Նախիջևանը և Զանգեզուրը, ինչպես և նախորդ օրը, ճանաչվեցին Խորհրդային Հայաստանի անկապտելի տարածքներ: Փոխվեց Լեռնային Ղարաբաղին Վերաբերող ծևակերպումը: Հոչակագրեց, որ Խորհրդային Աղրբեջանը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ և լրիվ ինքնորոշման իրավունքը<sup>29</sup>: Գիշերվա ընթացքում կատարված փոփո-

<sup>28</sup> Տե՛ս «Կոմունիստ» հայերեն օրաթերթ, 7 դեկտեմբերի 1920:

<sup>29</sup> Տե՛ս «Կոմмунист» (Բաքու), 2 դեկտեմբեր 1920:



Четверг, 2 декабря 1920 г.

## В. Советской Армении.

**Крестыльство и советская власть.**

БАКУ, 30 ноября. Штаб Армии. Трудящееся крестьянство Армении давно поняло, к чему ведет политика дашнаков, и составляло сельские приговоры, в которых объявляло власть дашнаков пиззегицей и требовало восстановления Советской власти.

Но эти разрозненные выступления крестьянства жестоко подавлялись дашнакским правительством. Теперь разрозненное движение крестьянства объединено, ставшей во главе его Коммунистической партии Армении.

**Коммунисты в армии.**

БАКУ, 30 ноября. Штаб Армии. Тетчас по объявлении Советской власти в Армении в Ревком стали вступать заявления от коммунистических ячеек, которые имелись в армянских войсках, но существовали подпольно. Ячейки проводили крупная работа и они уже давно имели за собой большинство солдат армянской армии.

**Утверждение заседание Бакинской Советской.**

Зал Государственного театра 1 декабря. Несколько.

С глубоким вниманием прислушиваясь к выступлениям делегатов, заседа-

Успехи трудового народа.

БАКУ, 30 ноября. Трудящиеся северной части Армении, видя предательство дашнакского правительства и его контр-революционность решили выступить на борьбу с правительством маузеристов. Коммунистическая партия Армении немедленно постаралась приступить к партизанским выступлениям организационные формы.

Повстанцами заняты Делижав и Караван-Сарай. Имеющие там 400 человек армянских войск перешли на сторону повстанцев с пулометами и офицерами.

Отношения немецко-турецкими.


БАКУ, 30 ноября. Штаб Армии. Перед лицом опасности, грозившей от наступления турок, рабочие Александроволя соорганизовались и установили там Советскую власть.

Турки, занимавшиеся восхвалением, в то время, как армяне занимали город, призывали Советскую власть, как единственную трудовую власть Армении.

ливаю, а войска Советского Азербайджана выпадает.


Народного уго, Советский Азербайджан

(Сպоги Աղբակուրուլը՝ էջ 32)




«Коммунист» (Баку) 2 декабря 1920

- 32 -



- 33 -



«Կոմունիստ» օրաթեր,  
7 դեկտեմբերի 1920. Խայերն և  
ոռուերն արքերակներ:

խորթյանը ոչ ոք նշանակություն չտվեց: Բոլորին հայտնի էր, որ Երկրա-  
մասի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարներն ար-  
դեն մի քանի անգամ Երկրամասը հռչակել էին Հայաստանի մաս: Վեր-  
ջին անգամ դա արվել է իններորդ համագումարի կողմից հենց Բաքվում  
խորհրդային կարգեր հաստատելու օրը:

## ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԱԴՐԵՆԱՆԻ ՍՏԵՂՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԶ. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Աղբյուն՝ հայկական տարածքների (Լեռնային Ղարաբաղ, Նախիջևան, հարակից շրջաններ) հաշվին «կարմիր հեղափոխության» ար-  
տահանման հենակետ դարձնելու գաղափարը օրակարգում հայտնվեց  
1921թ. ձմռանը քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի  
գործադրի արդյունքում: Երբ խորհրդային իշխանությունը «պահեստա-  
յին թղթապանակից» հանեց այդ ծրագիրը, պատմականորեն և փաս-  
տական հայկական Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղն  
արդեն հռչակված և ճանաչված էին (այդ թվում և Բաքվի կողմից)  
խորհրդային Հայաստանի մաս<sup>30</sup> (ՌՍՖՍՌ-ի արտաքին գործերի կոմի-  
սարիատի 1920-1921թթ. տարեկան հաշվետվյունը նույնպես արձա-  
նագրեց այդ փաստը)<sup>31</sup>:

Բնական է, որ հօգուտ Բաքվի խորհրդային Հայաստանից տարածք-  
ների օտարումը չէր կարող ներկայացվել օրինական ակտի ձևով: Բռ-  
նությունն ու ապօրինությունը այսպես թե այնպես պետք է ուղեկցեին  
դրան: **Եվ դրա առաջին դրսուրումը Սովորայում 1921թ. մարտի 16-ին  
միջազգային իրավունքի կողից խախտումներով կննված Ռուս-թուր-  
քական դայմանագիրն էր, որով խորհրդային կենտրոնն ու Թուրքիան  
որոշեցին երրորդ Երկրի (Խորհրդային Հայաստանի) անկարտելի մաս  
ճանաչված տարածքը (Նախիջևանի Երկրամասը) տալ մեկ այլ Երկրի  
(Խորհրդային Արտքեզանի) խնամակալությանը՝ առանց այդ Երկրնե-  
րի համաձայնության: Նախիջևանի մասով պայմանագրի իմաստը  
ավելի կոնկրետ հանգում է հետևյալն: Խորհրդային Հայաստանի մաս  
հանդիսացող Նախիջևանի Երկրամասը հանձնվում է Խորհրդային Արտ-  
քեզանին՝ պայմանով, որ վերջինս խնամակալությունը չի զիշի որևէ Եր-  
րորդ պետության: Դա բացահայտ բռնություն էր միջազգային իրավուն-  
քի նկատմամբ: Այդ ապօրինությունը նույն տարվա հոկտեմբերին «շտկ-  
վեց» Կարսի պայմանագրով, որի տակ արդեն դրվեցին ոչ միայն Անկա-  
րայի ու Մոսկվայի, այլև Երևանի ու Բաքվի ստորագրությունները: Նա-  
խիջևանը ԱրտիսՍՌ հովանավորությանը հանձնելը «ստացավ» իրավա-  
կան տեսք: **Հայաստանի նկատմամբ կատարված բռնությունը այնքան****

<sup>30</sup> Տե՛ս ՀԽՍՌ ժողկոմիսորի Հռչակագիրը // «Խորհրդային Հայաստան» օրաթերթ,  
19 հունիս 1921թ.:

<sup>31</sup> Տե՛ս «Документы внешней политики СССР», т. 4, М., 1960 стр. 711:

բացահայտ էր, որ նույնիսկ արձանագրվեց փաստաթղթում: Ոուսուրլական մուկովյան դայմանագրի 15-րդ կետով Խորհրդային Ռուսաստանը դարտավորվում էր բայլեր ծեռնարկել, որդեսզի անդրկովկասյան հանրապետությունները Թուրքիայի հետ կնքելիք դայմանագրերում դարտադրի ծեռվ ընդունեն Սոսկովյան դայմանագրի կետը: Այդ պարտադրանքը վերաբերում էր միայն Հայաստանին, քանի որ Բաքվի նկատմամբ որևէ պարտադրանք պետք չէր կիրառել Նախիջևանը նրա խնամակալությանը հանձնելու համար: **Կարսի դայմանագրով Նախիջևանը տրվեց ԱդրիՍԴ հովանավորությանը, այլ ոչ թե խնամակալությանը, ինչուս նախատեսված էր Սոսկովյան դայմանագրով:** Ընդամենը տրվեց հովանավորությանը, այլ ոչ թե որդես նրա անկատելի մաս:

Կարսի պայմանագրիը ուժի մեջ է մինչ օրս: Բայց այն իրավական նոր բովանդակություն է ստացել այն քանից հետո, երբ 1991թ. օգոստոսին Բաքվում հրաժարվեցին Խորհրդային Ադրբեյջանի իրավահաջորդությունից և վերականգնեցին 1918-20թթ. ընդամենը տասնհինգ ամիս գոյատևած Ադրբեյջանական Դեմոկրատական Հանրապետության պետականությունը, որի կազմում ոչ էր Լեռնային Ղարաբաղ և ոչ էլ Նախիջևան է եղել, և որը պատմության բեմահարթակը թողել է առանց լեգիտիմ կամ փաստացի հաստատված սահմանների: **Խորհրդային Ադրբեյջանի իրավահաջորդությունից հրաժարվելու ակտի իրավական հետևանքը ակնհայտ է՝ մերօրյա Ադրբեյջանական Հանրապետությունը Կարսի պայմանագրի կողմ չէ և չունի որևէ իրավական առնչություն Նախիջևանի հետ:** Նա դարձել է այն երրորդ պետությունը, որին Սոսկովյան պայմանագրով չի կարելի զիջել Նախիջևանի խնամակալությունը: Կարսի՝ մինչ օրս գործող պայմանագրի տեսակետից Նախիջևանը 1991 թվականից ի վեր Ադրբեյջանական Հանրապետության կողմից օկուպացված հայկական տարածք է, որտեղ 1921-91թթ. իրագործվել է այդ երկրամասի բնիկ տերերի ցեղասպանություն:

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲՌՆԱԿՑՈՒՄԸ. ՀԱՅԵՐԸ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԱՊՐԻՍԵ-Ի ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐԸ ԱԶԳ

Ապօրինությամբ պիտի ուղեկցվեր նաև Լեռնային Ղարաբաղը ԱդրիՍԴ սահմաններ մտցնելը (այն, ինչպես նշվեց, նույնպես արդեն հռչակված էր Խորհրդային Հայաստանի անքակտելի մաս): Եվ երբ ազգերի հավասարության ու ազատ նընքնորոշման մասին բոլշևիզմի կողմից հռչակված կարգախոսներին դեռևս հավատ ընծայող Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կովկասյան բյուրոյի (ՈԿ(թ)Կ Կովբյուրո) անդամները հուլիսի 4-ին Բաքվի պահանջով լսեցին արդեն իսկ լուծված Լեռնային Ղարաբաղի հացը և այն վճռեցին հօգուտ ՀԽՍՀ-ի<sup>32</sup>, պահանջվեց Կենտրոնի ճնշումը, ինչը և իրագործեց Ստալինը:

Սակայն հուլիսի 5-ին նման հարցերի լուծման իրավասություն չունեցող երրորդ երկրի կուսակցական մարմննը որոշեց՝ ողջ Լեռնային Ղարաբաղը (ոչ թե միայն ԼՂԻՄ-ի տարածքը) թողնել ԱդրիՍԴ-ին՝ նրան լայն մարզային ինքնավարություն տալու պայմանով<sup>33</sup>: Կովբյուրոյի՝ այդ ընդունված (այն չքննարկվեց և չքվեարկվեց), բայց բռնությանը ստեղծված որոշումը ելում էր ԱդրիՍԴ-ի որպես հայերի ու մահմեդականների ոչ ազգային (ինտերնացիոնալ) հանրապետության գաղափարից: Դա երևում է որոշման հենց առաջին բառերից, որոնցում տրված է նրա քաղաքական հիմնավորումը «Ելնելով մահմեդականների ու հայերի միջև ազգային հաշտության անհրաժեշտությունից...»:


Դրանով արձանագրվում էր նաև այն փաստը, որ երկրատարածքի ազգային-պետական կառուցվածքի շուրջ նախկինում գինված, իսկ այդ պահին քաղաքական բնույթ ստացած հակամարտության կողմերը մնում են հայերը և մահմեդականները («մահմեդականներ» բառը քողարկում էր այն փաստը, որ հակամարտությունն իրականում բռրըքված էր մի կողմից՝ հայերի, մյուս կողմից՝ կովկասյան թաքարների միջև):

Իրավական տեսակետից դա նշանակում էր, որ՝ ա) ինքնավար մարզը հիմնվում է որպես Խորհրդային տիպի պետականություն; բ) Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ճանաչվում է որպես ինքնորոշման սուր-

<sup>32</sup> Տե՛ս «Հայոց Կարաբախ 1918 - 1923 թ. Հայոց կարաբախ մարզը հիմնվում է որպես Խորհրդային տիպի պետականություն», Երևան, 1992. ստուգա 649 - 650, գում. N 450s

<sup>33</sup> Տե՛ս «Հայոց Կարաբախ 1918 - 1923 թ. Հայոց կարաբախ մարզը հիմնվում է որպես ինքնորոշման սուր-





յեկտ; գ) լայն իրավունքներով մարզի կարգավիճակ տրվում է ողջ Լեռ-  
նային Ղարաբաղին, ինչը արտացոլված էր նաև մարզի անվան մեջ. հա-  
յերեն՝ Լեռնային Ղարաբաղ Ինքնավար Մարզ, ռուսերեն՝ Ավтономная  
Область Нагорного Карабаха(АОНК):

Կովբյուրոյի նիստից անմիջապես հետո Բարուն տենդագին գործու-  
ներություն ծավալեց այդ որոշումը խափանելու համար: Նպատակ էր որ-  
ված ընդհանրապես ինքնավարություն չստեղծել հենց այն հիմնավոր-  
ություն, թե ԱղրևՍՇ-ն ինտերնացիոնալ, ոչ ազգային հանրապետու-  
թյուն է: Չհասնելով հաջողության և տեսնելով, որ արցախահայությունը  
հրաժարվում է հանրաքենու հավանություն տալ իր կամքին հակառակ  
ընդունված կովբյուրոյի որոշմանը՝ Բարուն ընտրեց դրա ձախողման  
մեկ այլ ուղի՝ այս անգամ այն մասնակիորեն կատարելու միջոցով: Եվ  
դա նրան հաջողվեց: 1923թ. հունիսին, երկու տարի հարցը ձգձգելուց  
հետո, հատուկ դեկրետով հրչակվեց ինքնավար մարզի ստեղծումը,

բայց արդեն Խորհրդային Հայաստանից Աղրբեջանին թողնված ողջ  
Լեռնային Ղարաբաղի մի մասի վրա՝ մարզից դուրս թողնելով հարակից  
Շահումյանի, Խանլարի (Կենտրոնական Արցախ), Թարհատի ու Շամբր-  
ուի (Յուսիսային Արցախ), Քարվաճարի, Քաշաբաղի (Լաշինի) և Լեռնա-  
յին Ղարաբաղի հարավային շրջանները:

1936թ. մարզի ռուսական անվանման մեջ կատարվեց փոփոխու-  
թյուն՝ արձանագրելու համար ԼՂԻՄ-ի սահմաններից Լեռնային Ղարա-  
բաղի մի շարք շրջաններ ապօրինաբար դուրս թողնելու փաստը:  
«Ավտոնոմա Օբլաստ Նագորնո Կարաբախ(АОНԿ)» անվան փոխա-  
րեն մտցվեց «Նագորն-Կարաբախսկա Ավտոնոմա Օբլաստ (ՀԿԱՕ)»  
անվանումը: Բոլոր թողոքներին Կենտրոնի ու Բաքվի պատասխանը  
նույնն էր՝ հայերը անհանգստանալու կարիք չունեն, քանի որ, ըստ  
իրենց, լուծել են ազգային հարցը՝ ԱղրևՍՇ-ում հիմնելով իր բնույթով  
աննախադեպ՝ մեկ տիտղոսակիր ազգ չունեցող ոչ ազգային հանրապե-  
տություն: ԱղրևՍՇ-ի ոչ ազգային բնույթի մասին փաստարկների շար-  
քում քանական թվականներին մատնացուց էր արվուն նաև այն, որ  
Աղրբեջանի կոմկուսի առաջնորդները կովկասյան թաթարներ չեն: Եվ  
իրոք, մինչև 1933թ. հանրապետության կուսակցական կազմակերպու-  
թյան առաջին դեմքերը (դրանք էին՝ Կիրովը, Գիկալոն, Պոլոնսկին, Ռու-  
բենը) ուսւա, իրեա կամ հայ էին: Եվ միայն 1933թ. հայացի Ռուբենին փո-  
խարինեց անձնագրով աղրբեջանցի համարվող Բագիրովը:

Արցախահայությանը հանգստացնելու համար ԼՂԻՄ-ի հիմնման մա-  
սին դեկրետում հատուկ ընդգծվեց, որ մարզի արոտավայրերը, անտառ-  
ները, այգիները, հողատարածքները և ջրերը մնում են իրենց տերերի  
սեփականությունը<sup>34</sup>: Այլ կերպ՝ ընդունվում էր, որ արցախահայությունը  
իրեն պատկանող տարածքներով է մտցվում ԱղրևՍՇ սահմանները:

<sup>34</sup> Տես Դեկրետ ԱզՀԿ օբ օբրազում Ավտոնոմա Օբլաստ Նագորն Կարաբախ //  
Նագորն Կարաբախ 1918-1923 թ. Սանդուղք և մասնակիորեն կատարելու միջոցով: Եվ  
դոկ N 451, стр 650:

## ԼՂԻՄ-Ը ՈՐՊԵՍ ԽՈՐՇՐԴԱՅԻՆ ՏԻՊԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՇԱՎՈՐՈՒՄ

ԼՂԻՄ-ի ձևավորման մասին դեկրետը նույնպես համապատասխան ձևակերպումով անդրադառնում է ԱդրիսՄ-ի՝ որպես ոչ ազգային հանրապետություն հիմնված լինելու քաղաքական գաղափարին: ԱդրիսՄ-ն այդտեղ որակված է որպես մահմեդականների ու հայերի՝ եղբայրաբար համագործակցող երկու ժողովուրդների «միասնական պետական միություն»: Մասնություն ու կուսակցական համագումարներում անընդհատ ընդգծվում էր, որ ԼՂԻՄ-ի ստեղծման մասին որոշումները պետական վճիռներ են, որոնք «սահմանում են հայերի ու մահմեդականների համակեցությունը Ադրիքեջանի ողջ տարածքում», որի շնորհիվ «ստեղծվում է այն անսասան հիմքը, որի վրա կարելի է կառուցել եղբայրական համակեցությունը հայ աշխատավորության հետ ողջ Ադրիքեջանական խորհրդային Հանրապետության սահմաններում»<sup>35</sup>: Քսանական թվականների բազմաթիվ փաստաթերուում տեղ գտած և վերը բերված այդ ձևակերպումները հաստատում են այն իրողությունը, որ մահմեդականների հետ միասին հայերը դիտվել են ոչ ազգային (ինտերնացիոնալ) այդ հանրապետության պետականակերտ ազգերից մեկը: ԼՂԻՄ-ը խորհրդային տիպի ազգային պետականություն էր և դիտվում էր որպես ԱդրիսՄ հայերի պետական-հրավակական պաշտպանվածության մասնակի երաշխիք: 1923թ. ընդունված պետական հաստատությունների ազգայնացման մասին դեկրետով ընդունվեց, որ ԼՂԻՄ-ի հետ հարաբերվելու լեզուն հայերնեն է, իսկ նրա սահմաններից դուրս բնակվող հայերը (ինչպես և ԱդրիսՄ մյուս ժողովուրդների ներկայացուցիչները) կարող են պետական բոլոր հիմնարկներին դիմել իրենց մայրենի լեզվով, և դեկրետը վերջիններիս պարտավորեցնում էր քաղաքացիներին պատասխանել դիմումի լեզվով (1986թ. ընդունված ԼՂԻՄ-ի մասին օրենքում հայերեն բառը դուրս է մղվել օրենքի տեքստից և փոխարինվել տեղական լեզու բառակապակցությամբ):

Հայերի՝ օրենսդրության ամրագրված տեղը ԱդրիսՄ ազգային պետական կառուցվածքում, ինչի մասին խոսում էին նշված փաստերը, իրավական լուրջ բովանդակություն էր տալիս մահմեդականների ու հայերի «միասնական պետական միություն» քաղաքական և իրավական գաղափարին: Քսանական թվականներին ԼՂԻՄ-ը բոլոր պաշտոնական փաստաթերուում ներկայացվում էր ազգային-պետական կազմավոր-

մանը բնորոշ բոլոր բաղադրիչներով: ԱդրիսՄ-ի բյուջեում և տնտեսական պլաններում ԼՂԻՄ-ը անվանվում է ազգային-պետական կազմավորում և առանձնացվում է հատուկ տողով: Ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նախագահն ի պաշտոնե ԱդրիսՄ բարձրագույն օրենսդիր նարմն՝ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալն էր, որը պետական պաշտոնների աստիճանաանդրական երկրորդ պաշտոնն էր: Միութենական հանրապետության և ազգային ինքնավար մարզի՝ որպես խորհրդային տիպի պետականությունների համեմատությունը ԽՄՀՍ Սահմանադրության հիմքի վրա ցույց է տալիս, որ դրանք պետականության՝ իրենց վերապահված և իրենցից օտարված գործառությունների ու քաղադիչների տեսակետից գորեք նույնակարգ պետական գոյացություններ են: Ինչպես ինքնավար մարզը, այնպես էլ միութենական հանրապետությունը չունեին սեփական բանակ, տարադրամ, զինված ուժերով պաշտպանվող սահմանները: Այդ գործառույթները օտարված էին թե' մեկից, թե' մյուսից: ԽՄՀՍ բոլոր բնակչները ունեին մեկ քաղաքացիություն՝ նրանք բոլորը ԽՄՀՍ քաղաքացիներ են: Ինչպես մարզի, այնպես էլ միութենական հանրապետության գլխավոր դատախազը նշանակվում էր ԽՄՀՍ դատախազության կողմից և ենթարկվում էր նրան: Միութենական հանրապետությունների սահմանադրությունները պարտադիր ծևով պետք է համապատասխանեին ԽՄՀՍ Սահմանադրությանը: Ինքնավար մարզը և միութենական հանրապետությունը նույն կարգի կազմավորումներ էին նաև պետականության՝ իրենց թողնված մի շարք ինստիտուտների տեսակետից: Ինչպես միութենական հանրապետության, այնպես էլ ինքնավար մարզի սահմանները չեր կարելի փոխել առանց նրանց համաձայնության: Ինչպես միութենական հանրապետությունը, այնպես էլ մարզը իրենց պատգամավորներով ներկայացված էին ԽՄՀՍ բարձրագույն օրենսդիր մարմնում՝ ԽՄՀՍ Գերագույն խորհրդում (տարբեր էին միայն քվոտաները):

<sup>35</sup> Տե՛ս ԱդրիսՄ կուսի «Բակինսկի ռաբոչի» պաշտոնաթերթ, 21 նոյեմբերի 1921թ.:

# ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆԱՑՈՒՄԸ

## ԻՍԼԱՍԱՂԱՎԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՂՐԲԵՇԱՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԽՈՐՀՈՎԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ


Ազգային հարաբերությունների պրակտիկան հետագա տարիներին աստիճանաբար հեռանում էր «Խորհրդային Ադրբեջանը՝ որպես ինտերնացիոնալ պետական կազմավորում» հռչակված գաղափարից ու դրա մարմնավորման իրավական սկզբունքներից: Կովկասյան թաթարների ձեռքում հայտնված Բաքուն խորհրդային բոլոր տարիներին հետևողականորեն իրագործում էր ԱդրիսՍՀ-ի՝ որպես հայերի ու մահմեդականների միասնական պետության գաղափարի արժեգրկման ու հանրապետության հետևողական աղրբեջանականացման (իրականում՝ թուրքացման) գիծը:

Երկրամասն այդ ուղղությամբ կերպափոխելու առաջին քայլերից մեկը կովկասյան թաթարների նոր ինքնանվանումն էր: Կովկասյան թաթարները, «դաշնալով» աղրբեջանցիներ, մեխանիկորեն ստացան տիտղոսակիր ազգի կարգավիճակ: «Ինտերնացիոնալ» սկզբունքի վրա հիմնված հանրապետությունը 20-րդ դարի 30-ականներին քաղաքական այս հնարքով «դարձավ» ազգային հանրապետություն: Իսկ նախաձեռնությունը խորհրդային Կենտրոնին էր: Մարքսիզմ-լենինիզմ և արեհզմ որդեգրած նոր կայսրապետության համար երկրամասի ժողովրդագրական ու քաղաքական կերպարը այլևս չէր կարող ներկայացվել «մահմեդականներ-հայեր» կաղապարով: «Մահմեդականներ» եզրն ակնհայտորեն անցանկալի էր, քանի որ իսլամադավան բոլոր ժողովրդների միավորման վտանգ ուներ իր մեջ: Կենտրոնն այս կերպ ազգային ինքնության ու ազգային պետականությունների հիմքի վրա որոշեց մասնատել ԽՍՀՄ մահմեդական հավատացյալների համայնքը: Արդեն իսկ 20-ական թվականներին ումնան ազգերի տրոհելու քաղաքական ուղեգծում Կենտրոնը որդեգրեց, այսպես կոչված, արմատականացման քաղաքականությունը (պոլիտիկա կօրենիզացի), որի իմաստը նոր ստեղծված ազգային հանրապետությունների համար ազգային կաղորերի պատրաստումն ու պետական կառավարման ապարատը նրանց հանձնելն էր: Ի տարբերություն միջինասիական թուրքմենստանի, որի ազգաբնակչության մեջ համենատարար հեշտ էր իրենց տարածքներով առանձնացնել թուրքմենների, ուզբեկների, դրդների համասեր ու ամբողջական բեկորները, խորհրդային Ադրբեջանում դա ակնհայտորեն դժվար էր: Նախ, հանրապետությունը տարբեր «քաղա-

քական առիթներով» հայտարարված էր ինտերնացիոնալ: Կովկասյան թաթարը, որ գերակշիր էր հանրապետության թուրքախոս բնակչության մեջ, իր զանգվածի մեջ մասով տեղում ընդամենը 40-50 տարվա «բնակության գրանցում» ուներ և, ի տարբերություն բնիկների, ազգային հնքնության պատմական ու մշակութային հիմքեր չուներ: Որոշվեց թալիշներից, լեզգիներից, քրդերից, թաթերից, կովկասյան թաթարներից բաղկացած իսլամադավան տարաբնույթ հավաքականությանը, որին մինչ այդ կոչում էին մահմեդականներ, տալ նոր էթնանուն՝ աղրբեջանցիներ: Այդ «գլխարկի» տակ հայտնվելիք զանգվածի հիմնական մասն արդեն պանրութքիզնով վարակված կովկասյան թաթարներն էին, և բնական է, որ հանրապետության աղրբեջանականացումը հեռանկարում պիտի տաներ դեպի նոր թուրքացմանը: Թալիշները, թաթերը, լեզգիները պետք է դրան դիմադրեին, և հանրապետության աղրբեջանականացումը պիտի ընդուներ նոր թուրքացման և բնիկ այդ ժողովուրդների բռնի ձուլման տեսքը: Բոլշևիկյան Կենտրոնը մատների արանքով էր նայում ազգային հարցում ԱդրիսՍՀ-ում սովորական դարձած կամայականություններին: Այնտեղ հուսով էին, որ աղրբեջանցի նոր «ազգ»-ի ձևավորումը ոչ միայն օրակարգում կպահի իրանական Ադրբեջանին հավակնելու և սոցիալիստական Մեծ Ադրբեջան ստեղծելու հարցը (հնչու քիչ էր մնում իրագործվեր երկորրդ աշխարհամարտի վերջում), այլև տեղում կզափի «թուրքացման հակումները» և կիեշտացնի ռուսաֆիկացման ընթացքը (թուրքացման այլընտրանքը ռուսականացումն էր, և բնիկ ժողովուրդների շատ ներկայացուցիչներ, հատկապես քաղաքաբնակները, հայերի պես նախընտրում էին իրենց երեխաներին տալ ռուսական դպրոցներ, ինչին խորհրդային իշխանությունները բնավ էլ դեմ չին):

Երեսնական թվականներին արվեցին «նոր ազգը» երկրատարածքի պատմության հետ կապելու և նոր համար սեփական պատմություն ձևավորելու առաջին քայլերը: Եվ քանի որ ազգի «պատմամշակութային թղթապանակը» դատարկ էր, որոշվեց այն լցնել ուրիշների մշակութային ժառանգության հաշվին:

Պարսկական պոեզիայի դասականներ Նիզամին, Խաքանին և ուրիշները հայտարարվեցին աղրբեջանական պոեզիայի դասականներ: Զայկական ու արևելյան ժողովորդական պարարվեստի ու երգարվեստի բազմաթիվ նմուշներ նույն հեշտությամբ ներկայացվեցին որպես աղրբեջանական ժողովորդական երգեր ու պարեր: Երկրատարածքի պատմական իրադարձությունները սկսեցին նկարագրվել որպես Ադրբեջանի և աղրբեջանական ժողովորդի պատմության դրվագներ՝ հակառակ այն բանի, որ նկարագրվող հեռավոր անցյալում այլտեղ՝ Արաքսից հյուսիսին, «Ադրբեջան» անունով ոչ տարածք է եղել, ոչ պետություն, ոչ էլ ժողովուրդ:



Համայնքի ծովի 1742թ. լուրերանը նշված է մանուկյանագոյն, տարեր խամբությունները նշված են կամաց շախատամբ նշված է թեղին, իսկ մասնաւոր կամացությունը համար գրաված տարածքի մեջ դաշտամբ է հերեւմի խամբության մի մասը, ինչպես մաս Շամախին, Գամբան և Շիվամը: Աղբեմարտ տաղապակած է Մրամի հարավուն, Պարսկաստանի շատօնում: (Ո. Գալիշի հականածի, Լոմոնդ, տաճարավուն է հերիմակի կողմից, Տեսական պատճեններուն):

Աղբեմարտականացման քաղաքականության հաջորդ քայլերից էր այն, որ իսլամ դավանող թնիկ ժողովուրդների ծովումն արագացնելու նպատակով 30-ական թվականներից նրանց համար մտցվեց հատուկ հարկատեսակ, որ ժողովուրդը կոչեց լեզգի փուլու: Այդ հարկը նրանք պետք է վճարեին երեխաներին իրենց մայրենի լեզվով կրթություն տալու համար: Հարկից խուսափելու համար շատ քրեր, լեզգիներ, թալիշներ «դառնում էին» աղբեմարտներ և իրենց երեխաներին (հատկապես գյուղական բնակավայրերում) տալիս աղբեմարտական դպրոցներ:

Վիճակագրությունն արտացոլել է հազարամյակներով իրենց հողերում ապրող ժողովուրդներին «ընդհատակ քշելու» փաստերը և մեր օրերում այնտեղից դեռևս վախսորած դուրս գալու փորձերը: Այս թալիշների հետ կապված տվյալները: 1926թ. մարդահամարի տվյալներով Խորհրդային Աղբեմարտնում ապրում էր 77,3 հազար թալիշ: 1939թ. այդ ցուցանիշը նվազել է մինչև 3,0 հազարը: Յնտագա տարիներին կատարված մարդահամարները Աղբեմարտ-ում ընդհանրապես թալիշ ազգության մարդ չեն գրանցել: 1989թ. «հանկարծ պարզվել է», որ հանրապետությունում թալիշներ, այնուամենայնիվ, կան և նրանց թիվը 21,0 հազար է: Ուղիղ տասը տարի անց անցկացված մարդահամարը «հայտնաբերել է» արդեն 80 հազար թալիշ: Եվ, իհարկե, սա թալիշների իրական քանակն արտացոլող ցուցանիշը չէ: Դեռ բոլոր թալիշները չեն համոզված, որ ազգային ընդհատակից դուրս գալն անվտանգ է այժմ արդեն «Եվրոպայի հսկողության տակ գտնվող» Աղբեմարտական Հանրապետությունում: Եվ դա միայն թալիշներին չի վերաբերում:

# ՄԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԴՐԵԶԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՐԱՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՇԻՄՔ\*

Աղրբեջանցիների՝ որպես հնագույն և բնիկ ազգի մասին միֆի հիմնավորնան նպատակով «Աղրբեջան» կոչվող պետությունն ինչպես իր գոյության մոլուսավարական, խորհրդային, այնպես էլ ներկա ժամանակաշրջանում ամեն ջանք գործադրում է վերաշարադրելու իր երկրի և «աղրբեջանցի» կոչվող ազգի պատմությունը: Իսկ չունեցած պատմությունը «Կերտելու» համար անհրաժեշտ է կամ յուրացնել ուրիշի պատմանշակութային արժեքները, կամ ոչնչացնել դրանք: Յենց այս ճանապարհն էլ ընտրեց Աղրբեջանն ինչպես մոլուսավարական, այնպես էլ խորհրդային և հատկապես ժամանակակից փուլում:

Յենց այս համատեքստում բաքուն սկսեց լայնածավալ մշակութային յուրացման և ոչնչացման գործընթաց, որի զոհը դարձան հայերի, աղվանների, թալիշների մշակութային արժեքները, խաչքարերը, վանքերն ու եկեղեցիները:

Այժմ փորձենք մի քանի անդրադարձ կատարել բազմաթիվ օրինակներից մի քանիսին, որոնք փաստում են, թե ինչպես են Աղրբեջանական պետության կողմից պետական քաղաքականության մակարդակով ոչնչացվում հայկական մշակութային կորողները:

2007թ. նարտին Ֆ. Բերլեմոնի կատարած լուսանկարներից պարզվեց աղրբեջանական իշխանությունների գործադրած մշակութային վանդալիզմի երկու նոր փաստ: Աղրբեջանցիների կողմից պայթեցվել է Ազատ գյուղի Սր. Հովհաննես եկեղեցին (17-րդ դար) և հիմնահատակ քանդվել է Կամո գյուղի Սր. Ամենափրկիչ եկեղեցին (17-րդ դար): Նման մշակութային ցեղասպանության գործողությունների ծավալներն առավել հստակ ընկալելու համար ներկայացնենք 1989 և 2007թթ. մշակութային մի շարք կորողների լուսանկարների համեմատությունը:

\* Գլուխը պատրաստվել է հուշարձանագետ Ս. Կարապետյանի տրամադրած արժեքավոր նյութերի և լուսանկարների օգտագործմամբ:

Ազատ գյուղի Սր. Հովհաննես եկեղեցի (17-րդ դար)

1989



2007



Կամո գյուղի Սր. Ամենափրկիչ Եկեղեցի (17-րդ դար)

1989



2007






Աղբակունիս գյուղի Եկեղեցին 1987 թվականին:



Ոչնչացված Աղբակունիս Եկեղեցու տեղը, 2006թ.  
(լուսանկար՝ Մթիվըն Սիմի):

Նախիջևանի հայկական Ալիապատ եկեղեցին լիովին ոչնչացվել է:  
Google համակարգի լուսանկարներում երևում է, որ երբեմնի եկեղեցու  
տեղում այսօր դատարկ տարածք է:





Նախիջևանի Շորտ գյուղի Եկեղեցին 1980 ականներին  
(Լուսանկարը՝ Արգամ Այվազյանի):



Տեղը,ուր կանգնած է Եղել Շորտ գյուղի Եկեղեցին  
(Լուսանկարը՝ Մթիվըն Սիմի, 2006)

## ԶՈՒՂԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Նախիջևանի ԻՀ տարածքում մինչև 11-րդ դարը հաշվառվել են 218 հայկական-քրիստոնեական պաշտամունքային կառույցներ (Վաճք, Եկեղեցի, մատուռ), 41 բերդ, 26 կամուրջ, 86 քաղաքատեղի և գյուղատեղի, շուրջ 4500 խաչքար և 23000 տապանաքար\*, ինչպես նաև նույն ժամանակաշրջանին վերաբերող մոտ 30 մահմեդական (պարսկական, սելջուկյան, բուրյ-թաթար-աղրթեջանական) ծագում ունեցող հուշարձաններ: Վերջիններս, սակայն, քանակական առումով ավելի սակավաթիվ են, իսկ ժամանակագրորեն դրանց մեջ մասը վերաբերում է 20-րդ դարին:

1990-ականներից Աղրբեջանում և նրա խնամակալության ներքո գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքում պետական մակարդակով իրականացվում է հայկական մշակութային հուշարձանների ոչնչացման քաղաքականություն, որի նպատակը պատմության սրբագրումն է և այդ տարածքի հայկական պատկանելության բոլոր հետքերի վերացումը:

1998-2006թթ. ընթացքում նախիջևանյան իշխանությունները, գործակից դարձնելով երկրի գինված ուժերին, իիմնահատակ ոչնչացրին 5-17-րդ դարերով թվագրվող Ձուղայի աշխարհահռչակ գերեզմանոցի շուրջ 3000 գեղաքանդակ և արձանագիր խաչքարերն ու ավելի քան 5000 տապանաքարերը: Պայթեցվեցին և ծանր բեռնատար տեխնիկայով հողին հավասարեցվեցին Ագուլսի, Ապրակունիսի, Շոռոբի, Թօնածի, Ցղնածի, Ցղնածի վանքերն ու Եկեղեցիները:

\* Այվազյան Արգամ, Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները, Երևան, 1986, էջ 11:




Զուղայի միջնադարյան հայկական գերեզմանոցի տեսքը 1915թ.  
դիմաց հյուսիսից:



Գերեզմանոցը 1980-ական թվականներին



Երկու խաչքար, 1980-ական թվականներ



Պնևմատիկ մուրճերով քարդված խաչքարեր



Չարդված խաչքարերի դաշը



- 59 -

Գնացի բաց վագոնները դաշտաս են Տիղակողմն Խաչքարերը:  
Լուսամուտված է Իրամի սարսփից, 1998թ.



Աղբեջանի բանակայիսները մեծ մուտքերով շարում են հազարերու

- 60 -




- 61 -

Բանակի բռնաւարժերից բենաթափված շարպատ իսլամական թագուհու քափառ են Մրւի մեջ



Աղյուսակի ջանքելու հետո



Զուրայի միջնադաշտային հայկական գետեզմանցի տեղում կառուցված գինուղական  
փորձադաշտը, մարտ 2006թ.



## ՀԱՅ ԱԶԳԱԲԵՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՂԻՄ-Ը ՈՐՊԵՏ ԱԴՐԲԵՅՆԱԿԱՆ ՀԱՆԱՑԱՆՔՆԵՐԻ ՈՒ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԹԻՐԱՆ

Որպես հանրապետության հիմնադիր, պետականակերտ ժողովուրո՝ հայերը Ադրբեյչանում ազատված էին «լեզգի փուլու» հարկից: Բայց ակնհայտ էր, որ նրանք իրենց կարգավիճակով, ազգային կայացած ինքնությամբ, դավանանքի ու մշակույթի ինքնատիպությամբ հանրապետության ադրբեյչանականացման (թուրքացման) գործընթացի գլխավոր արգելքն էին: Բարվում իշխանությունն իր ձեռքը վերցրած և «ադրբեյչանցի դարձած» կովկասյան թաթարը հանրապետության ադրբեյչանականացումն իրագործում էր մի կողմից՝ իսլամադավան ժողովուրդներին՝ թալիշներին, լեզգիներին, թաթերին ձուլելու և, մյուս կողմից, հայերին տնտեսական ու քաղաքական հետապնդումներով դուրս մղելու քաղաքականության միջոցով: Երկրորդ աշխարհամարտի տարիներին հայերին «գնդակի բերան» ուղարկելու, երկրանասը հայարափելու այդ հանցագործ քաղաքականության վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը փաստում է հետևյալը. **Ադրբեյչանում հակահայ քաղաքականության յուրահատուկ դրսելուն էր այն, որ դեռևս երկրորդ աշխարհամարտի տարիներին ռազմաճակատ ուղարկվեց հանրապետության յուրաքանչյուր երրորդ հայը, որը ամենաբարձր ցուցանիշն էր ԽՍՀՄ-ում:** Բարձր բնական աճի պայմաններում ԼՂԻՄ-ը միայն 1970թ. կարողացավ վերականգնել բնակչության թվաքանակի 1939թ. ցուցանիշը՝ 150.000 մարդ: Ընդ որում, այդ «վերականգնան» ընթացքում հայերի թվաքանակը մարզում նվազեց, այն դեպքում, երբ ադրբեյչանցիներինը գրեթե կոկնապատկվեց՝ 14,1 հազարից հասնելով 27,2 հազարի: Մարզի բնակչության թվաքանակն այդ՝ ավելի քան երեսուն տարիների ընթացքում մնաց նույնը, երբ հանրապետության բնակչությունն այդ նույն ժամանակաշատվածում 3,2 միլիոնից հասավ 5,2 միլիոնի:

Հայարափման նույն այդ նպատակն էր հետապնդվում, երբ մարզի վրա իշեցվում էին ծանրագույն տնտեսական պլաններ: Ոչինչ չստանալով՝ ԼՂԻՄ-ը ությունական թվականներին արտադրում էր ավելի միս (14.000տ), խաղող (170.000տ) ու կաթ (50.000), քան Անդրկովկասի մյուս չորս ինքնավարությունները (Նախիջևան, Արխագիա, Աջարիա, Օսերիա) միասին վերցրած, այն դեպքում, երբ դրանք ունեին բնակչությունն ավելի լավ պայմաններ:

Աղրբեջանում ունեին վիճակագրությամբ արձանագրվող ցուցանիշների մեկնաբանության իրենց «տրամաբանությունը»: Աշխատատեղերի պակասի պատճառով երիտասարդության արտահոսքը մարզից վիճակագրության մեջ արտացոլվում էր բնակչության միջին տարիքի բարձր ցուցանիշով: Բարուն դա ներկայացնում էր «դարաբառյան երկարակեցության» մասին ականց շոյո, բայց իրականում իհմարացնող մեկնաբանությամբ: Նույն «գովազդը» կատարվում էր մեկ շնչին ընկնող բնակելի տարածքի, հիվանդանոցային մահճակալների և այլ համանման ցուցանիշների դեպքում:

Սարզը ոչ միայն ԱղրիսՄ-ից ու ԽՄՀՄ մյուս հանրապետություններից, այլև Եվրոպական շատ երկրներից առաջ էր անցել մեկ շնչին հասնող բնակտարածքի ցուցանիշով: Բայց ոչ թե լայնածավալ բնակչինարարության, այլ արտահոսքի հետևանքով: Դա հայության ներքին գաղութացման ու շահագործման քաղաքական գիծն էր գործողության մեջ՝ քողարկված ժողովուրդների բարեկամության մասին լոգունգներով:

80-ականներին նախորդած «խաղաղ տարիներին» իրականացված ազգային ու տնտեսական հետապնդումների արդյունքում արդեն դրւու էր մղել նախիջևանահայության մեջ մասը (խորհրդային տարիներին ԱղրիսՄ-ից դուրս եկած և այլ հանրապետություններ տեղափոխված հայերի թիվը գերազանցում է մեկ միլիոնը): Նույն այդ տարիներին հանրապետության էթնիկական քարտեզից ու պաշտոնական վիճակագրության հաշվետվություններից անհետացան իսլամադավան բոլոր ժողովուրդները:

Ազգային անարդարությունը ընդունել էր ցինիկ բնույթ: Բողոքողները մեղադրվում էին ազգայնականության մեջ և հետապնդվում: Եվ, չնայած դրան, Ստեփանակերտը և Երևանը 1945, 1966, 1967, 1977թթ. բարձրացրել են ԼՂԻՄ-ի կարգավիճակի փոփոխության հարցը:

1945թ. Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Գ. Շարությունովը պաշտոնապես դիմել է Մոսկվային՝ Լեռնային Ղարաբաղի և ՀԽՄՀ-ի վերամիավորման առաջարկով: Նույնպիսի առաջարկով ԽՄԿԿ Կենտկոմին և ԽՄՀՄ Նախարարների խորհրդին 1966թ. դիմեցին Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Զոչինյանը և Նախարարների խորհրդի նախագահ Բ. Սուլրադյանը: Իրենց նամակում Խորհրդային Հայաստանի դեկավարները մատնացուց էին անում այն անբնական իրավիճակը, որ փոքրաթիվ հայ ժողովուրդը ԽՄՀՄ կազմում ունի աշխարհագրորեն միմյանց կապած երկու պետականություն՝ միութենական հանրապետությունը և ինքնավար մարզը: Հայկական մարզը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու պահանջ-առաջրկով 1967թ. դիմեցին մարզի մի խումբ մտավորականներ (այդ դիմու-

մը, որի նախաձեռնողը ԼՂԻՄ Գրողների միության նախագահ, բանաստեղծ և պատմաբան Բ. Ուլուբարյանն էր, հայտնի է «13-ի դիմում» անունով): Խնդիրը, թվում էր, նոտ էր լուծման: Սակայն Բաքվին հաջողվեց խափանել այն: Մի քանի անգամ կազմակերպվեցին զանգվածային ստորագրահավաքներ (1987թ. ավելի քան 80 հազար արցախցի է մասնակցել ստորագրահավաքին, որն ըստ էության ընդունել էր հանրաքեցի բնույթը):

70-ականներին, երբ Աղրբեջանը գլխավորում էր Յեյդար Ալիևը, Բաքվում տնտեսական ու քաղաքական լծակներից բացի գործի դրեց նոր գործոն՝ ժողովրդագրական գրոհը: Արցախում իհմնվում էին աղրբեջանակ նոր գյուղեր: Յայկական գյուղերից խվալում էին հողատարածքներ: Աղրբեջանական բնակչության քանակը 1970-1979թթ. 27 հազարից (24%) հասավ 37 հազարի (36%): Ահա այսպիսի պայմաններում վրա հասան գորբաշովյան վերակառուցման՝ «գլաստնուստի» քաղաքականության փոթորկալից տարիները: Արցախահայության պայքարը մտավ նոր փուլ:

## ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՏԱՐԺՈՒՄ ԽՄՀ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՇԱՍՏԵՔՍՈՒՄ

1985թ. ԽՄԿԿ ապրիլյան պլենումի կողմից «գլաստոնուստի» գորբաշովյան ուղեգծի հիշակումից հետո պահանջվեց ընդամենը վեց տարի, որպեսզի միջազգային քաղաքական ասպարեզում Արևմուտքին հակակշռող ԽՄՀ-ը և նրա հովանու տակ ստեղծված սոցիալիստական ճամբարը կազմաքանդվեն ու դադարեցնեն իրենց գոյությունը:

Դրապարակայնության ու վերակառուցման կարգախոսները 1985թ. շատերի մեջ հույսեր արթնացրին, թե ԽՄՀ-ը մտնում է ժողովրդավարական զարգացման մի փուլ, երբ վերջ կդրվի ԽՄԿԿ քաղաքական մենաշնորհին, հնարավոր կդառնան տնտեսական ազատությունները և կուղղվեն ազգային հարցում բոլշևիզմի անարդարությունները: Ճենց այդ հույսերով էլ ԼՂԻՄ-ում սկիզբ առավ մարզը Խորհրդային Յայստանին վերամիավորելու շարժումը՝ Դարաբարյան շարժումը: Կենտրոնը «Վարագույրի հետևից» նպաստում էր Շարժման ծավալնանը: Դարաբարյան շարժման առաջնորդներից մեկը՝ Վազգեն Մանուկյանը, հավաստում է, որ Երևանում Շարժման ակտիվիստներն այն տպավորությունն ունեին, թե Կենտրոնը բարյացակամ է տրամադրված հարցին արդար լուծում տալու խնդրում:

1987թ. ԼՂԻՄ-ը Խորհրդային Յայստանին վերամիավորելու պահանջով ստորագրահավաքին նախնակցեց մարզի ավելի քան 80 հազար բնակչի: Մինչ այդ նման ստորագրահավաքները կազմակերպվում էին գորեք զարդնի, ահ ու սարսափի մթնոլորտում: Այս անգամ նույնիսկ թվում էր, թե այն «արտոնված է վերևներից»: Դա յուրօրինակ հանրաքաղաք էր: Կենտրոնը ընթացիկ լսում էր գերագույն իշխանություններին տեսակցության եկած մարզի պատվիրակներին և ճանապարհ էր դնում հուսադրող խստումներով: Արցախիներին հուսադրում էին, իսկ Բաքվին (ինչպես հավաստում է Զարդուշը Ալիզադեն իր «Աղրբեջանական էլիտան և զանգվածները ԽՄՀ տրոհման շրջանում» հոդվածում) հրահանգում՝ «Ոչինչ չձեռնարկել, չմիջամտել»<sup>36</sup>:

Ահա նման իրադրության մեջ ԽՄՀ-ի հետ մարզի վերամիավորման հարցը 1988թ. փետրվարի 20-ին նտցվեց ԼՂԻՄ ժողովադամավորների մարզային խորհրդի արտակարգ նիստի օրակարգը: Յակառակ Կենտրոնից ստացվող «Չմիջամտել» հրահանգներին, Բաքուն, այնուամենայնիվ, մարզային իշխանություններին «ներքին կարգով» սպառնում էր հաշվեհարդարով: Անտեսելով այդ սպառնալիքները՝ մարզխորհութին նիստը կայացավ: Այն ընդունեց հետևյալ որոշումը. «Ընդհառաջելով

ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Աղրբեջանական ԽՄՀ Գերագույն խորհրդին ու Յայկական ԽՄՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսւորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իդենտիքն և լուծել ԼՂԻՄ-ը Աղրբեջանական ԽՄՀ-ի կազմից Յայկական ԽՄՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդին՝ ԽՄՀ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Աղրբեջանական ԽՄՀ-ի կազմից Յայկական ԽՄՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»<sup>37</sup>: Թե մարզի բնակչությունը, թե իշխանությունները, թե՝ պատգամավորները պատրաստ էին վճռական այդ գործողության և գիտակցում էին, որ գնում են ԽՄՀ պատմության մեջ աննախատեալ մի քայլի:

Ի դեպ, մինչ 1988թ. ԽՄՀ-ում արձանագրվել էր ազգային ինքնավարությունները մեկ հանրապետությունից մյուսին փոխանցելու կամ նրանց կարգավիճակը փոխելու մի շարք դեպքեր: Բայց դրանք բոլորը կատարվել են վերևից՝ Կենտրոնի որոշմանը: Ղարաբարյան դեպքի առանձնահատկությունը այն պիտի լիներ, որ ինքնավարության կարգավիճակը պիտի փոխվեր ներքևների ցանկությանը՝ ժողովրդավարության ոգուն ու տառին համապատասխան: Տվյալ դեպքում այդ ցանկությունը ներկայացված էր նույնիսկ ոչ թե պահանջի, այլ խնդրանքի ձևով: Թվում էր, թե ամբողջատիրության դաժան տասնամյակներից հետո ժողովրդավարության կարգախոսներ որդեգրած Կենտրոնը պիտի քաղաքակիրք ընթացք տար բարձրացված հարցին: Սակայն հաջորդ իսկ օրը ԽՄԿԿ քաղբյուրոն իր նիստում նարգիշորհի որոշումը պիտակեց որպես ծայրահեղականությունը<sup>38</sup>:

Քետագա իրադարձությունները եկան հաստատելու, որ մինչ այդ չեղոք կեցվածք ընդունած Կենտրոնը բնավ էլ հակված չէ հարցը ժողովրդավարության սկզբունքը լուծելու: Ավելին, պարզվեց, որ հենց Կենտրոնի գիտությամբ փետրվարի 22-ին «Ստեփանակերտում կարգ հաստատելու նպատակով» Աղդամից դեպի Ստեփանակերտ շարժվեց մի ամբոխ, որի զգալի մասը այդ «միջոցառման» համար բանտերից բաց թողնված անձինք էին: Բացազում է, որ Բաքվում նախապատրաստված այդ քայլի մասին մոսկովյան ՊԱԿ-ը անտեղյակ լիներ, մանավանդ, որ կուսակցության մարզային կոմիտեի նիստերում փետրվարի 13-ին ու 14-ին նման երթով սպառնացել էին Աղրկոմկուսի կենտկոմի քարտուղար Օրութեալ և բաժնի վարիչ Ասադովը<sup>39</sup>:

Ստեփանակերտ տանող ճանապարհը անցնում է Ասկերան շրջենտրոնով, և ասկերանցիները դուրս եկան մայրուղի՝ կանգնեցնելու դեպի մարզկենտրոն շարժվող ամբոխին: Նախատեսված ընդհարումը տեղի

<sup>37</sup> Տես «Խորհրդային Ղարաբաղ», 21 փետրվարի 1988:

<sup>38</sup> Տես «Правда» ու 21 փետրվարի 1988:

<sup>39</sup> Տես Բ. Բ. Արյուոնյան. Հօնական աշխատավայրերը. Երևան 1990, էջ 35-36:

չունեցավ, բայց երբ ամբոխը սկսեց ցրվել՝ կրակոցներ լսվեցին: Երկու երիտասարդ աղդամցիներ սպանվեցին: Հաջորդ օրը պարզ դարձավ, որ սպանված Ալի Հաջիկի հետ վեճի բռնվել ու նրա վկա կրակել է աղդամցիներին անծանոթ մի աղդեքանցի ոստիկան, որին դեպքի վայրից փախցրել է արդեն տեղացի մեկ այլ ոստիկան<sup>40</sup>: Ստեփանակերտում դա հայտնի դարձավ սպանված Ալի Հաջիկի հորեղբոր վկայությամբ: Կուսակցության մարզային կազմակերպության նորընտիր քարտուղար Հենրիկ Պողոսյանն այդ նասին տեղեկացրեց ԽՄԴՍ գլխավոր դատախազի տեղակալ Կատուևսկին (նա Մոսկվայից ժամանել էր իր հրավասության սահմանմերում կանխելու դեպքի սրացումը)՝ խնդրելով, որ դեպքի մասին հաղորդագրություն տալու դեպքում ասվի ճշմարտությունը կամ գոնե չհայտնվի սպանվածների ազգությունը: Կատուևսկը խոստանում է, բայց չորս օր հետո ինքն է հայկական ու աղդեքանական հեռուստատեսությամբ ելույթ ունենում և դեպքի մասին ասում միայն, որ Ասկերանի մոտ տեղի ունեցած ընդհարման ժամանակ սպանվել են երկու երիտասարդ աղդեքանցիներ: Եվ ոչ մի խոսք այն նասին, որ հայերը կապ չունեն դրա հետ: Դա հակամարտության կայծը ազգամիջյան մեջ հրդեհի վերածելու Կենտրոնի առաջին և ոչ վերջին խոչըր սադրանքն էր:

1988թ. փետրվարին մարզխորհրդի որոշման ընդունման հաջորդ օրը Խորհրդային Հայաստանի Ղափան քաղաքից, որտեղ ազգամիջյան ոչ մի կոնֆլիկտային դեպք չէր գրանցվել, աղդեքանցիները կազմակերպված ցուցադրական սկսեցին զանգվածային կերպով դուրս գալ: Նման զանգվածային գործողությունները ԽՄԴՍ պայմաններում ինքնաբույս ձևով չեն կարող տեղի ունենալ: Եվ իրոք, հետագա դեպքերը ցույց տվեցին, որ դա մանրակրկիտ պատրաստված սադրանք էր: Ուրիշ առաջադրանք էին կատարում խաղաղ Ղափանը լքած և Բաքու ժամանած աղդեքանցիները, որոնք «հայենի իշխանություններին» պետք է տեղյակ պահեին իր իրենց նկատմանը Ղափանում կիրառված անարդարությունների մասին: Բայց, ինչպես հավաստում է բարվեցի քաղաքացեր Զարդուշտ Ալիզադեն, նրանք տարօրինակ ձևով չներկայացան իշխանական նարմիններին՝ Նախարարների խորհուրդ կամ կուսակցության կենտրկոն, այլ սկսեցին այցելել բանվորական և ուսանողական հանրակացարանների<sup>41</sup>: Բաքվից նրանց ուղարկեցին Սումգայիթ, որտեղ կազմակերպված հանրահավաքներում հակահայկական ելույթներ էին ունենում: Տեղաբնակ հայերը չգիտեին, թե այդ ելույթները ինչի համար են հող նախապատրաստում:

<sup>40</sup> Դեպքի մանրամասն նկարագրությունը տես Աлексանդր Վասիլևսկի. «Туча в горах» // журнал «Аврора», 10, 1988г.:

<sup>41</sup> Տես «Ազերբայջանական զինաքանակ» // Ազերբայջան և Ռուսական իշխանությունների առաջնորդությունը. Մ., 2001, стр., 1795

## ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՊԵՍ ԴԱ ՊԱՏԱՇԵՑ...

Սումգայիթը Բաքվի արբանյակ քաղաքն է, ուր ապրում էր 18 հազար հայ: 1988թ. փետրվարի 26-29-ը Սումգայիթում կատաղած աղդեքանական ամբոխը, բաժանվելով խմբերի, շարժվեց դեպի հայերի տները: Քաղաքի ելունուտը փակված էր, համապատասխան տեղերում թափված էին քարակույտեր, ամբոխին զինելու համար նախապես մետաղյա ձողեր էին պատրաստված: Հայերի տներում հեռախոսներն այդ օրերին անջատված էին: Քաղաքի աղդեքանցի բնակիչները ջարդերի ժամանակ իրենց բնակարաններում մարել էին լույսերը, որպեսզի ջարդարները հավելյալ հեշտությամբ գտնեն հայերի բնակարանները: Այս ամենը խոսում էր մեկ հանգամանքի մասին, որ դա լավ կազմակերպված հատուկ գործողություն էր՝ ուղղված քաղաքի հայ ազգարնակչության ֆիզիկական ոչնչացմանը: Դետագայում, երբ ԽՄԴՍ իշխանությունները սումգայիթյան ոճրագործների նկատմամբ ձևական դատական գործընթաց նախաձեռնեցին, վկաներից մեկի ցուցմունքներում նշվում էր հետևյալը. «Ես կարծում եմ, որ նրանք (ջարդարարները) հայերի հասցեները գիտեին: Այդ հետևությունը ես արեցի, քանի որ ջարդարները անսխալ մուտք էին գործում իրենց այն բնակարանները, որտեղ հայեր էին ապրում: Փետրվարի 28-ին քաղաքի փողոցներում քարերի կույտեր էին լցված, որպեսզի ոչ ոք չկարողանա փախչել»: «Այդ բոլոր գործողությունները չեն բխում խուլգանական նկատառումներից, այլ ուղղված էին կոնկրետ մեկ ազգի դեմ՝ հայերի դեմ: Ոչ թե ռուսների, կամ այլ ազգերի, այլ իրենց հայերի դեմ: Նրանք փնտրում էին հայերին»: «Ստեղծուվ մեր քաղաքանակ՝ նրանք միանգամբ նոտան այն մուտքեր, որտեղ հայեր էին բնակվում: Իսկ բարձրախոսների օգտագործումը ձևականություն էր, զանգվածային հոգեբանության վրա ազդելու միջոց: Իրականում հայերի հասցեները նրանք գիտեին և գործում էին անթերի»:

Ըստ պաշտոնական տվյալների, Սումգայիթում սպանվել է 32 հայ. մինչդեռ հարյուրավորները անհետ կորել են, ենթարկվել ամենատարբեր բնությունների, տասնյակ հազարավորները արտագաղթել են՝ թողնելով իրենց գույքը, բնակարանները, ամեն ինչ:

Միջազգային մանուլն իր անենատարբեր հրապարակումներում անդրադարձակ Սումգայիթում տեղի ունեցած ոճրագործությանը, սակայն Խորհրդային Կենտրոնի արձագանքը համաշափ չէր տեղի ունեցած իրողություններին:



Սումգայիթյան ցեղաստանությունից փրկվածներ



Սումգայիթյան ջարդարարության զոհեր և վիրավորներ



Սումգայիթյան ոճրագործության օդերին Բաքվուն էին գտնվում Մոսկվայից տարածաշրջան գործուղված ԽՄԿԿ քաղբյուրոյի անդամության թեկնածուներ Գ. Պ. Ռազումովսկին և Պ. Ն. Ղեմիչևը: Սումգայիթից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող «Նասոսնի» բնակավայրուն տեղակայված էին խորհրդային զորքեր, որոնք այդպես էլ դեպքերին միջամտելու որևէ հրաման չստացան: Ամիսներ հետո, երբ ԽՄՀՍ Գերագույն խորհրդի նախագահության նիստում քննարկվում էր հարցը, Մ. Գորբաչովը պիտի արդարանար, թե իբր զորքն ընդամենը երկու ժամով է ուշացել դեպքերից, այնինչ կան բազմաթիվ վկայություններ, որ նույնիսկ քաղաք մտնելուց հետո զորքը կարգի չի հրավիրել վայրենի ամբոխին ու չի պաշտպանել հայերին:




## Soviet trial begins for ethnic riots

MOSCOW (AP) — An Azerbaijani metalworker went on trial for murder Wednesday in connection with ethnic riots that killed at least 32 people in February. Pravda reported. He was the first of more than 80 people charged to stand trial.

The Communist Party newspaper said the defendant, identified as T. Ismailov, was accused of participating in the riots in the Azerbaijan city of **Sumgait** and intentionally killing someone for "hooligan motives." Ismailov is an employee of a pipe plant.

Ethnic violence broke out Feb. 28 in Sumgait during a territorial dispute between Azerbaijan and the republic of Armenia.

## Panel: Shift NATO



Սովորական ջարդարարության զոհեր

Н Е П О Л Н Й Й С П И С О С  
ГРАЖДАН АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОСТИ, ПОГИБШИХ  
ВО ВРЕМЯ СУМГАЙСКОГО ГЕНОЦИДА

1. Авакян Лола Павловна
2. Авакян Юрий Багратович
3. Аванесян Альберт Арменович
4. Аванесян Геворг Манукович
5. Амбарумян Миша Арсенович
6. Аракелян Артур Левонович
7. Аракелян Ашот Ашотович
8. Арамин Артур Арменович
9. Арутюнян Геворг Геворгович
10. Арутюнян Геворг Аганесович
11. Бабаян Аршак Асланович
12. Бабаян Елена Марковна
13. Бабаян Александр Александрович
14. Григорян Эмика Шириновна
15. Даниелян Николай Артемович

Список составлен по данным на 7 сентября 1989 года. Сведения о других гражданах армянской национальности, погибших в феврале-марте 1988 г. в Сумгаите, в настоящее время уточняются.



АВАКЯН ЛОЛА ПАВЛОВНА, 1951 г. рождения.  
Проживала по адресу: Сумгаит, 45 квартал, д. 10/13, кв. 37.

29 февраля 1988 г., после нападения на квартиру, Л. Авакян около дома раздели и вывели на улицу, заставляя танцевать, колоти ножами, резали грудь, тушили на теле сигареты, изнасиловали. После убийства тело было изуродовано, опознать удалось по мизинцу на руке.

Отец — Манвелян Павел сказал, что он был в трех моргах: в Сумгаите, Баку, Мардакянах (в 20 км от Баку) и нашел труп своей дочери в Мардакянах. Она была под номером 71 среди идентифицированных трупов. Манвелян Павел «жил» для свидетельских показаний в Москве и подтвердил. В трех моргах он видел более 100 трупов, склоненных штабелями.

Муж Л. Авакян — Авакян Александр, был погиб до полусмерти.




МЕЛКУМЯН РАЙСА АРСЕНОВНА, 1934 г. рождения.

Родом из с. Джилан Гадрутского р-на НКАО. Проживала по адресу: Сумгаит, квартал 41а, д. 26, кв. 21. Убита вместе с мужем и тремя детьми. Обнаружено выедены в подъезде дома. После убийства над телом издавались подростки. Убийство на улице. «Острые кровопотеки, рана головы, рубленная рана с лица черепа, прободная рана правой щеки с кровотечением, перелом левого ребра справа, ссадины и кровоизлияния тела».

Սակայն ոչ ոք դեռևս չգիտեր, որ սումգայիթյան ջարդերը միայն զանգվածային բռնությունների մեկնարկ էին. Կատարված ոճիրին հետևեցին զանգվածային բռնություններ համբավետությունով մեկ՝ Գանձակ (Կիրովաբաղ), Բաքու, Շամբոր, Խոջալու, Մարտաղ և այլն:

Յանայնավարության տարիներին խորհրդայնացման աղացում համայնքային կյանքի ավանդույթները կորցրած և իր անվտանգության համար խորհրդային իշխանությանը միամտաբար հավատ ընծայած հայ ազգաբնակչությունը, ի տարբերություն արցախահայության, պատրաստ չգտնվեց այդ ջարդերից ու բռնություններից ինքնապաշտպանվելու<sup>42</sup>: «Խորհրդային իշխանության օրոք ոչ ոք չի կարող խուժել իմ բնակարանը» («При советской власти никто не может ворваться ко мне в квартиру») - այսպիսին է եղել սումգայիթցի հայերի ընդիանուր նույնությունը: Այս թե ինչու հանրապետության հյուսիսային շրջաններում, Ապշերոնում և Բաքվում նրանք չկարողացան ինքնապաշտպանության համարժեք քայլեր ձեռնարկել:

1988թ. իրադարձությունները ցույց տվեցին, որ ԽՍՀՄ գերագույն իշխանությունները, Ս.որբաշովի գլխավորությամբ, նոտարիունակության լուծում տալ հարցին: Կիսատ-պարտ որոշումներն ավելի շատ նպաստում էին լարվածության պահպանմանը և հակամարտության հետագա բորբոքմանը, քան այն կարգավորելուն: Պարզվեց, որ Կենտրոնը համարժեք քաղաքական գնահատական չի ցանկանում տալ նույնիսկ սումգայիթյան եղեռնագործությանը: Յանցագործության միասնական գործը նախ բաժանվեց մասերի, ապա ցեղասպանական ակտոր որակվեց որպես «խուլգանական արարթներ»: Բարվում դա չէին կարող չտեսնել: Այս թե ինչու 1988թ. ամռանն այնտեղ միլիոնանոց ցույցերի ժամանակ պահանջում էին ազատ արձակել «սումգայիթյան հերոսներին»:



ТРАДАТОР ԳԱԲՐԻԵԼ ԱԲՐԱМОՎԻՉ, 1955 թ. рождения.

Родом из с. Керкендж Шемахинского р-на Аз. ССР. Проживала по адресу: Сумгаит, З мкрон, д. 6/2а, кв. 6. Обнаружены вместе с сыном, женой и двумя соседями (Адамином Грахтом и его летом — Товհаннесом Раֆиковым) в течение 8 часов от бандитов-извербанджиков, которые пытались проникнуть в дом через дверь, в пролом перегородки из соседней квартиры, с балкона верхнего этажа и, нащупав, по лестнице пожарной машины, проникнув в квартиру, причинив три кожных ранения, два узара топором по голове, от удара камнем попытка баранины переноска левого уха. Скончался в больнице в ночь с 3-го на 4-е марта.

<sup>42</sup>Տես «Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев». Под ред. С.Шахмурадяна., Ереван, 1989, стр. 326:



**Սումգայիթյան ջաղդարարության գոհերի մահվան վկայականներ**



**Սումգայիթյան ոճագործության «հերոսներ»**

Կենտրոնը չհապալեց իր դրական վերաբերմունքը դրսւորել մեկ այլ ձևով՝ ոճագործ Սումգայիթը հաղթող ճանաչելով երիտասարդ սերնդի կոմունիստական դաստիարակության համամիութենական մրցույթում:

«Սումգայիթներ»-ի մեղավորներին հերոսացնելու պետական քաղաքականության արդյունքում էր, որ հետագայում Ադրբեյջանը տվեց Հունգարիայում ՆԱՏՕ-ի կազմակերպած համատեղ կրթական ծրագրերի օրերին քնած վիճակում հայ սպային կացնահարած Ռամիլ Սաֆարովի պես ցեղասպան «հերոսներ»:

## **ՀԱՅԵՐԻ ՈՒ ԱԴՐԵՑԱՆՑԻՆԵՐԻ ԸՆԴԱՍՈՒՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՆԳՐՎԱՆԸ**

1988թ. (ինչպես և այսօր) ադրբեյջանցիները երնիկապիս տպասեն այն հանրությունն էին կազմում, որը 20-ականներին ներկայանում էր մահմեդականների հավաքական անվան տակ և որի քառսային զանգվածում իշխող դիրքերը ունեին կովկասյան թարարները: Բնական է, որ այն բանից հետո, երբ կովկասյան թարարները անվանափոխվեցին և «դարձան» ադրբեյջանցիներ, «մահմեդականների ու հայերի ընդհանուր պետություն» քաղաքական բանաձևը պետք է վերաձևակերպվեր և փոխարինվեր «ադրբեյջանցիների ու հայերի ընդհանուր պետություն» բանաձևով: Թե Բաքուն, թե Կենտրոնը ԱդրիսՄ-ի ոչ ազգային, ինտերնացիոնալ բնույթի մասին հիշում էին միայն հանդիսավոր նիստերում և ընդունելություններում՝ «քաժակածառերի ձևաչափով»: Դարաբաղյան շարժումը ստիպեց գաղափարը վերիիշել նորից:

1988թ. հուլիսի 13-ին ԱդրիսՄ ԳԽ նախագահությունը, քննարկելով հարցը, որուեց ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների 20-րդ արտահերթ նստաշրջանի որոշումը մարզը ԱդրիսՄ-ից ՀՆՍՄ-ի կազմ փոխարիտու մասին «...անընդունելի համարել, քանի որ նրա իրազործումը հակասում է հանրապետության ադրբեյջանի և հայ ազգաբնակչության (ընգծումը մերն է - Ա.Ս.) շահերին»<sup>43</sup>: Զևակերպման մեջ տեսանելի էր ԱդրիսՄ-ը որպես հայերի ու մահմեդականների (որոնք 1988թ. արդեն ներկայացվում են որպես ադրբեյջանցիներ) ընդհանուր պետություն հիմնելու՝ 20-ական թվականներից եկող զաղափարը, որը դրված էր նոյն 1988թ. մարտի 24-ին ԽՍՀԿ կենտրոնի և նախարարների խորհրդի ընդունած «ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման մասին» որոշման հիմքում: Չորս օր հետո (հունիսի 17-ին) ԱդրիսՄ Գերագույն խորհրդը փոխեց նախագահության ձևակերպումը հետևյալ կերպ՝ ԱդրիսՄ Գերագույն խորհրդն անընդունելի է գտնում բարձրացված հարցի դրական լուծումը, քանի որ «...դա հակասում է մարզի ու հանրապետության ադրբեյջանցի ու հայ ազգաբնակչության, այլ ազգերի ու ազգությունների (ընդունմը մերն է - Ա.Ս.) շահերին...»: Իսկ այն բանից հետո, երբ զանգվածային բռնություններով ու ջարդերով հայերը հանվեցին գրեթե ողջ հանրապետությունից, Բաքուն սկսեց խոսել միայն մարզի հայ և ադրբեյջանցի (երկու համայնքների) շահերի մասին՝

43 Տես գազետ “Բաքինский рабочий”, 14 июня 1988г.:

այլևս չտալով ինտերնացիոնալ, ոչ ազգային Ադրբեյջանի անունը: 1998թ. Մինսկի խումբը, այնուամենայնիվ, Բաքվին հիշեցրեց այդ մասին՝ «ընդհանուր ղետություն»-ը առաջարկելով որպես հակամարտության լուծման ելք: Ողջ Արևելյան Անդրկովկասում հայերի ցեղասպանությունն ավարտած Բաքուն կտրականապես մերժեց այն:

## ՀԱՏՈՒԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԼՂ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶՈՒ

Կենտրոնի ընտրած քաղաքական ուղեգծի շրջանակներուն 1989թ. ԼՂԻՄ-ում մտցվեց հատուկ կառավարում: Շրջանավորում էր նաև մարզում նախագահական կառավարում մտցնելու գաղափարը: Այդ դեպքում խնդրի կարգավորման ձախողումների և մարզի նկատմանը կիրավող բոլոր ապօրինությունների պատասխանատվությունը պիտի ընկներ Մ.Գորբաչովի վկա, ինչից նա ակնհայտորեն խուսափում էր: Հատուկ կառավարման մասին որոշումն ինքնին ներքուստ հակասական էր: Կենտրոնը դադարեցրեց ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործունեությունը՝ վերջինիս գործառույթները հանձնելով այնտեղից նշանակված Հատուկ կառավարման կոմիտեին (իր այդ մասով մարզում հատուկ կառավարում մտցնելու ԽՍՀՄ ԳԽ որոշումը հակասահմանադրական էր, ինչը 1991թ. նոյեմբերի 28-ին իր թիվ 28 որոշմանը հաստատեց ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեն): Արցախիներին հանգստացնելու համար կատարվեց որպան արտաքուստ հավասարակշռող քայլ: 1989թ. մարզի բոլոր վարչական կառույցները, ինչնարկներն ու ձեռնարկությունները, արհմիություններն ու ստեղծագործական միությունները դուրս բերվեցին Բաքվի Ենթակայությունից ու դրվեցին Մոսկվայի ու Երևանի ենթակայության տակ: Փաստորեն մարզը դե-ֆակտո հանվեց Արցախ-ից: Արցախուն ճիշտ կրահեցին Կենտրոնի քայլը: Բաքվի ենթակայությունից ձեռնարկություններն ու ինչնարկները դուրս բերելը ժամանակավոր էր և Պարաբայան շարժման քափը կոտրելու, մարզը գլխատելու և հետագայում այն նորից Բաքվին հանձնելու համար էր արվում: Սահմանադրական կարգը պահպանելու համար և հենվելով 1918-20թթ. ինքնակառավարման փորձի վրա՝ մարզի քաղաքական շրջանակները 1989թ. օգոստոսի 16-ին վերականգնեցին ժողովրդահիշխանությունը՝ այն հանձնելով մարզի ազգաբնակչության Լիազոր ներկայացուցիչների համագումարին և նրա կողմից ընտրված Ազգային խորհրդին՝ «Վերակառուցմանը ու ժողովրդական զանգվածների ստեղծագործությամբ» ծնված այդ ժողովրդական ինքնակառավարման մարմնին: Համագումարը որոշեց իր գործունեության մեջ առաջնորդվել ԽՍՀՄ Սահմանադրությամբ և օրենքներով՝ դրանով իսկ հաստատելով իր որոշումների սահմանադրական բնույթը: Սա եղակի դեպք է ԽՍՀՄ պատմության մեջ, եթե «վերաները» խախտում են երկրի Յիմնական օրենքը, իսկ «ներքները»՝ պաշտպանում այն:

Հատուկ կառավարման կարգավիճակը վերացվեց 1989թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ ԳԽ որոշմամբ: Պարզվեց, որ Արցախում ճիշտ էին կանխատեսել հրադարձությունների ընթացքը: Հակառակ այն եզրակացությունների, որոնց հանգել էին մարզ ժամանած ԽՍՀՄ ժողովատգամավորները (Ազգությունների խորհրդի ազգային հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Գ. Սարավկիչի գլխավորած պատգամավորական հանձնաժողովը 1989թ. ամռանը տեղում խնդիրն ուսումնասիրելուց հետո առաջարկել էր մարզը դուրս բերել ԱդրխՍՀ կազմից), հակառակ նախօրյակին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունում հարցի քննարկման ոգուն, որտեղ ընդգծվել էր հատուկ կառավարման կոմիտեի իրավասությունների ընդլայնման անհրաժեշտությունը, գորբաշնության ապարատը ԽՍՀՄ ժողովատգամավորների երկրորդ համագումարին առաջարկեց մի որոշում, ըստ որի մարզում վերացվում է հատուկ կառավարման ինստիտուտը և հավասար ներկայացուցչության սկզբունքով մարզային իշխանությունների վերականգնման համար Ադրկոմկուսի կենտրոնի երկրորդ քարտուղար Վ.Պոլյանիչկոյի գլխավորությամբ ստեղծվում է Կազմկոմիտե (ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեն իր վերը նշված որոշմամբ հակասահմանադրական որակեց այդ փաստաթուղթը ևս): Դա մարզը նորից Բարձի Ենթակայությանը հանձնելու որոշում էր, որ ընդունվեց հայ պատգամավորների բացակայությամբ, որոնք ի նշան բողոքի թողել էին նիստերի դահլիճը: Կազմկոմիտեն, որի հետ արցախցիները կապի մեջ չնտան, անկարող եղավ կատարել իր վրա դրած հանձնարարությունը: Եվ երբ 1991թ. ԽՍՀՄ-ը լուծարվեց, պարզվեց, որ հատուկ կառավարման կարգավիճակը, որով ԼՂԻՄ-ը դե-ֆակտո հանվել էր Բարձի Ենթակայությունից, ժամանակագրորեն եղել է մարզի վերջին կարգավիճակը խորհրդային տարիներից:

## ՇԽՄ ԳԽ ԵՎ ԼՂ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՇՐԴԻ ՀԱՍՏԵՐ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ


1989 թվականը հատուկ է Ղարաբաղյան շարժման պատմության մեջ՝ մի կողմից ԱդրխՍՀ-ում հայերի նկատմամբ բռնարարքների սաստկացման, Բաքվի կողմից ԼՂԻՄ-ի շրջափակման և, մյուս կողմից, միջազգային հանրության կողմից Ղարաբաղյան շարժման նկատմամբ համակրանքի ու աջակցության տարեր դրսւորումների տեսակետից: 1989թ. ԱՄՆ Սենատը երեք անգամ անդրադարձել է հարցին: Նոյեմբերի 19-ին ընդունած քանաձնում Սենատը հորդորում էր Մ. Գորբաչվին հարցին տալ այնպիսի լուծում, որը «կիամապատասխանի մարզի բնակչության հայացքներին»: Դա, ըստ եռթյան, հարցը «ազգերի ինքնորոշման» սկզբունքի հիման վրա լուծելու հորդոր ու կոչ էր: Վստահ, որ իրենց պահանջը արդար ու օրինական է թե՝ միջազգային իրավունքի և թե՝ ԽՍՀՄ օրենքների տեսակետից, վերջնականապես համոզված, որ Կենտրոնը պատրաստակամ չէ հարցը լուծել ժողովրդավարության ու ժողովուրդների հավասարության հիմքի վրա, Պոլյանիչկոյի գլխավորությամբ Կազմկոմիտե ստեղծելու մասին որոշումը գնահատելով որպես մարզը նորից Բարձի Ենթակայությանը հանձնելու փորձ և հավատարիմ խնդիրը խաղաղ ու քաղաքակիրթ միջոցներով լուծելու ընտրված ուղեգին՝ 1989թ. դեկտեմբերի 1-ին ՇԽՄ Գերագույն խորհրդությունը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդությունը իրենց համատեղ նիստում միաձայն ընդունեցին ՇԽՄ և ԼՂԻՄ վերամիավորման մասին որոշումը<sup>44</sup>: Միացումը, որի կարգախոսի տակ բարձրացել էր Ղարաբաղյան շարժումը, կայացավ: Կենտրոնի բացասական արձագանքը սպասելի էր, և այդ կապակցությամբ սկզբունքային բնույթը է ստանում Միացման մասին որոշման՝ որպես իրավական ակտի լեգիտիմության և դրա դեմ Կենտրոնի բերված փաստարկների վերլուծությունը:

<sup>44</sup> Տես «Խորհրդային Հայաստան», 3 դեկտեմբեր, 1989:

## ՀԽՍՇ ԵՎ ԼՂԻՄ ՎԵՐԱՍԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ 1988թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՅԹԻ ԵՎ ԽՍՀՄ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՑՈ

Չկա միջազգային իրավունքի որևէ սկզբունք, որի տեսանկյունից ՀԽՍՇ և ԼՂԻՄ վերամիավորման մասին ընդունված «Համատեղ որոշումը» դիտվի ոչ օրինական: Հայտնի է, որ միջազգային իրավունքի՝ «ժողովուրդների ազատ ինքնորոշման» սկզբունքը ՄԱԿ-ը հրչակել է որպես պետությունների ու ազգերի հարաբերությունների կարգավորման համապարտադիր սկզբունք: «Համատեղ որոշման» պարագայում այն կիրառվել է անբասիր ձևով: Թե՛ Խորհրդային Հայաստանը, թե՛ ԼՂ ինքնավար նարզը դեռևս 20-ական թվականներին ԽՍՇ կազմավորման գործնաբացներում արդեն իսկ ճանաչված էին որպես ինքնորոշման իրավունքի սուբյեկտներ<sup>45</sup>: Միացման ակտը միջազգային իրավունքի տեսակետից որևէ առարկություն չի հարուցում, մանավանդ, որ խոսքը ոչ թե ինքնորոշման առաջնային ակտի, այլ արդեն ինքնորոշման սուբյեկտ հանդիսացող պետական երկու կազմավորումների մասին է: Որևէ արգելք չկար նաև ԽՍՇ օրենքներում, որտեղ նախընթաց տարիներին հանրապետությունների ու ազգային պետական կազմավորումների սահմանների փոփոխության գրեթե երկու տասնյակ դեպք էր արձանագրված (Կարելովի հանրական միութենական հանրադեսությունն, օրինակ, վերակազմավորվել է ինքնավար հանրադեսությամ, իսկ Ուսասաւագի Դաշնության Դագախստանի ինքնավար հանրադեսությանը Կենտրոնից տրվել է միութենական հանրադեսության կարգավիճակ): ԽՍՇ-ի՝ որպես միասնական պետության ներսում տարբեր ազգային կազմավորումների սահմանների փոփոխությունները երբեք չեն կապվել սահմանների անխախտելիության ու տարածքային անբողջականության սկզբունքների հետ: Դրանք դիտվել են որպես միութենական դաշնային անտության ներքին գործը նաև իրավական այն հիմքով, որ նման վերակազմավորումներն ու վերաենթարկումները չեն կապվում ԽՍՇ-ի՝ որպես միասնական պետության սահմանների փոփոխության կամ նրա տարածքային անբողջականության խախտման հետ: Բայց ԼՂԻՄ դեպքում խորհրդային Կենտրոնը «հանկարծ հիշեց», որ առանց հանրապետության համաձայնության նրա սահմանները փոփոխել չի կարելի, եթե խորհրդային տարիներին ավելի քան 500 քառ. կմ տարածք է ՀԽՍՇ-ից անցել Աղբյուր-ին՝ սահմանների ճշգրտման մտացածին փաստարկումով:

<sup>45</sup> Առավել մանրամասն տես Յ. Գ. Բարսեցով. Հարու Հայոց Կարաբախ - սբյեկտ ու սահմանների ճշգրտման մտացածին փաստարկումով:




ՀԽՍՇ-ի 1928թ. բարեկի հարավ-արևելյան հատվածը

1928թ. և 1938թ. Հայաստանի քարտեզների համեմատություն:




ՅԱՄՆ-Ի 1938թ. բարեկայի հարավ-արևելյան հատվածը

- 86 -



- 87 -

Բավական է նշել, որ 20-ական թվականների քարտեզներում ԼՂԻՄ-ը և ԱՀՀ մասով սահմանակցություն ուներ Խորհրդային Դայաստանի հետ (մարզը երեսնական թվականներին դարձրին առանձնատարածք (անկայություն) (Տես նկար 30):



ԱՄՆ-ի դեւական աշխարհագրական դեղաբանական քարտեզ, որտեղ երևում է, թե ինչպես 1930թ. հետո առանց հաշվի առնելու ՀԽՍՇ-ի կամք՝ փոփոխվել են Լեռնային Դարարադի հայկական ինքնավարության սահմանները

(Տես Հայոց Կարաբախ և մայրական պատմությունը պատմության մեջ)

Յ.Գ. Բարսեցով, Մ, 2008թ, էջ 654)

«Տարածքային ամբողջականության» սկզբունքը, որը մինչ այդ լրջութեն չէր կիրառվում հանրապետությունների ու ինքնավար կազմավորումների նկատմանք, հանկարծ ծեռք բերեց սկզբունքային նշանակություն հենց ԼՂ դեպքում, երբ հայտնի էր, որ այն բռնությամբ է մտցված Ադրիանության կազմ և երբ ակնհայտ էր, որ Ադրիանության իրագործվում է հանրապետության հայ ազգաբնակչության ցեղասպանություն: Բայց եթե միութենական հանրապետությունների տարածքային ամբողջականությանը նույնիսկ տրվեր նման սկզբունքային բնույթ, ապա սահմանադրական արգելք դարձյալ չէր առաջանաւ, քանի որ խոսքը ինքնորշման իրավունքի սուբյեկտ հանդիսացող և ԽԽՍՇ ազգային-պետական կառուցվածքի երկու կազմավորումների մասին է: ԼՂԻՄ-ի վերամիավորումը ՀԽՍՇ հետ չէր հակասում ԽԽՍՇ Սահմանադրության 78 հոդվածին, որ արգելում էր փոփոխության ենթարկել միութենական հանրապետության սահմաններն առանց նրա համաձայնության: Մարզը ՀԽՍՇ ենթադասությանը (Խորհրդակցության) տալը չէր նշանակի, թե խախտվում է Ադրիանության ամբողջականությունը: Դենց դրա հաշվառումով էլ 1988թ. փետրվարին ժողովադատական վորոշիչ մարզային խորհրդությունը բարձրացրել է ՀԽՍՇ հետ միայն մարզի վերամիավորման հարցը, չնայած բոլորը գիտեին, որ Լեռնային Դարարադի հայկական տարածքներ, որոնք կովրյությոի որոշմամբ պետք է լինեին ԼՂԻՄ կազմում, կամայականորեն դուրս են թողնվել նրա սահմաններից: Ժողովադատական վորոշիչ մարզային խորհրդությունը բարձրացրեց մարզից ազօրինաբար խված տարածքների հարցը: Շարժման առաջնորդները մտածում էին, որ պետք է փրկել գոնե այն, ինչ հնարավոր է փրկել առանց ԽԽՍՇ օրենքների տեսակետից շեղվելու առումով նվազագույն կասկածներ հարուցելու:

Գորրաչովյան Կենտրոնը, սակայն, այլ ուղի բռնեց: Միաւ մեկնաբանելով «ազգերի ինքնորշման» ու «տարածքային ամբողջականության» սկզբունքները, դրանք մինչան հակադրելով և առաջինը ստորադասելով երկրորդին՝ Կենտրոնը հարցը մտցրեց փակությի, որտեղ հակամարտությունը կարող էր միայն ավելի բորբոքվել և հանգուցալություն չստանալ: Պետության քաղաքական առաջնորդը հենց դարարադան հակամարտության կապակցությամբ հանրապետությունների սահմանների վերաբերյալ Սահմանադրության 78 հոդվածի հիշատակումով սկսեց հանրապետությունների ինքնիշխանությանը վերագրել բացարձակ ինաստ (եթե երկրի ղեկավարը տանում էր ԽԽՍՇ-ը կազմաքանդելու քաղաքական ուղեգիծը, ապա միութենական հանրապետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի նման աննախադեպ բա-

ցարձակացումը կարող էր լինել այդ ծրագրի կարևոր կետերից մեկը): Բնական է, որ հարցադրումը շահեկան էր միութենական հանրապետությունների համար, որոնց ներկայացուցիչները 1988թ. հուլիսի 18-ին Լեռնային Ղարաբաղին նվիրված ԽՍՀՄ ԳԽ նախագահության նիստում պիտի արտահայտվեին հօգուտ Բաքվի: Եթե ննան հարցադրումը կենտրոնախույս միտումներն ուժեղացնելու ազդակ էր միութենական հանրապետությունների համար, ապա Բաքվի համար դա նաև հանրապետությունը հայաթափելու անուղղակի թույլտվություն էր:

Սարգի և ՅիՍՀ բարձրագույն իշխանությունների կողմից վերամիավորման նախին «Համատեղ որոշմանը» Բաքուն պատասխանեց շրջափակման ու բռնությունների սաստկացմամբ: Սովորական երևույթ էին դարձել մարդկանց առևանգումները, սպանությունները: 1989թ. արդեն հայաթափել էին հյուսիսային Արցախի հայկական շրջանները: Կենտրոնական Արցախի Շահումյանի շրջանը և Խանլարի շրջանի Գետաշենի ենթաշրջանը ծանրագույն պայմաններում շարունակում էին դիմակայել: Խորհրդային բանակը սումգայիթյան եղեռնից սկսած անճարակ դիտողն էր ԱդրևՍՀ-ուն մոլեգնող բռնությունների, և նրա այդ կեցվածքում երևում էր երկրի փաստական դեկավարի՝ ԽՄԿԿ գլխավոր քարտուղարի կողմնորոշումը: «Համատեղ որոշման» ընդունումից հետո՝ 1990թ. հունվարին, դա հատկապես ակնհայտ դարձավ:

## ՑԵՂԱՍՊԱՆԻԹՅՈՒՆԸ ՏԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե. ԲԱՔՎԻ 1990թ. ՇԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԸ...

1988թ. հուլիսի 18-ին, երբ ԽՍՀՄ ԳԽ նախագահության հատուկ նիստում քննարկվում էր Լեռնային Ղարաբաղի հարցը, ԽՄԿԿ գլխավոր քարտուղարը անակնկալ կերպով հայ պատգամավորներին դիմեց խնդրի հետ կապ չունեցող հարցով՝ իսկ ինչպես վարպետ Բաքվի հայության հետ: Հարցադրումը երկակի իմաստ ուներ: Թվում էր, թե թարգի խնդրանքը մերժելու համար Կենտրոնը անուղղակի հիշեցնում էր, որ ԱդրևՍՀ-ի իիմնվել է որպես հայերի ու մահմեդականների (1988-ին՝ արդեն ադրբեջանցիների) ընդհանուր պետություն: 1988թ. մարտին ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի կողմից ընդունված «ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման մասին» որոշումն այդ ոգով էր ընդունվել: Զնայած վերնագրում հիշատակվում էր միայն ԼՂԻՄ-ը, որոշմամբ նախատեսվող սոցիալ-տնտեսական ծրագրերը վերաբերում էին հանրապետության ողջ հայաբնակ շրջաններին:

Բաքվում՝ ԱդրևՍՀ-ի նայրաքաղաքում, 1988թ. դրությամբ բնակվում էր 217 հազար հայ: Քաղաքի պավանդական կենտրոնից բացի առավելապես հայկական էին Արմենիքներ, Մոնտին, Վորովսկի, Չավուկզանյան բաղամասերը: Բաքվի հայությունը Ղարաբաղյան շարժմանը որևէ մասնակցություն չէր ցուցաբերել: Հաշտության ու խնդրի խաղաղ կարգավորման կոչերից ու հորդորներից բացի նրանք ոչինչ չեն ձեռնարկել: Ինչ-որ չափով նրանք արդեն ոռւսաֆիկացված էին (նրանց գերակշիռ մասը այդ պահին ռուսախոս էր) և խորապես հավատում էին, որ Խորհրդային հզոր իշխանությունը ունակ է պաշտպանել իրենց ֆիզիկական անվտանգությունն իրենց իսկ ձեռքերով կառուցված քաղաքում: Սակայն նրանց մի մասը սումգայիթյան եղեռնից հետո, Կենտրոնի նկատմամբ իրենց հավատը կորցրած, բնակարանավորիսանակությամբ տեղափոխվել էր ՅիՍՀ:

1990թ. հետամանորյա օրերը (հունվարի 13-15-ը) մղձավանջային դարձան Բաքվում մնացած հայ ազգաբնակչության համար<sup>46</sup>: Սումգայիթը կրկնվեց ավելի զարհութելի ու լայն մասշտաբով, և նորից հաստավվեց, որ Կենտրոնը ադրբեջանամետ է: Ի դեպ, շաբաթ օրը՝ 1990 թ. հունվարի 13-ը, իենց այնպես չէր ընտրվել: Այդ տարիներին հայերի նկատմամբ բոլոր սադրանքները ծրագրավորվում և իրականացվում էին ուրբաթ և շաբաթ օրերին, քանի որ առջևում հանգստյան օրեր էին, իսկ դա նշանակում էր, որ Կենտրոնի բարձր դեկավարությունը անհասանելի է:


<sup>46</sup> Տե՛ս Ի. Մոսեսովա, Ա. Օվնանյան. «Վանդալիզմ և Բաքվում»: Երևան, 1991:

Այդպես էր և Սումգայիթում, Կիրովաբաղում, Գետաշենում, Ստեփանակերտում, Բաքվում և շատ այլ վայրերում:

Աղբեջանի ժողովովական ճակատին հայկական կոտորածների հարցում քաջալերող Աղբկոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Վեզիրովը հունվարի 13-ի իր հեռուստաելույթում որպես ջարդերն սկսելու ազդանշան ուղղակի տեքստով նշեց՝ «Կենտրոնը մեր ծերքերում է»։ Բայց հարցը միայն Վեզիրովի հայտարարությունը չէ։

Ի դեպ, Բաքվում սպանում էին ոչ միայն հայերին, ուստաներին, իրեներին, այլ ազգությունների ներկայացուցիչներին, այլ նաև այն աղբեջանցիներին, ովքեր փորձում էին օգնել հայերին։ Բազմահարկ բնակարանների պատուհաններից ջարդարարները դուրս էին նետում ոչ միայն գույքը, այլ նաև մարդկանց։ Մինչդեռ այդ ժամանակ Կրեմլում դեռ որոշում էին՝ զորամիավորումներ նշանել Բաքու, թե՝ ոչ։ Զարդերի նախօրեին խորհրդային զորքերի հատուկ ստորաբաժանումներ էին բերված Բաքվի «Բինա» օդանավակայան՝ իրու թե արտակարգ դեպքերի համար։ Սակայն կոտորածների օրերին Մոսկվայից միջամտության հրաման չստացվեց։ Չորքերը քաղաք նտան միայն այն քանից հետո, երբ ջարդարարները «Վերջացրել էին գործը»։ Միայն հունվարի 19-ին Ս. Գորբաչովը հրամանագիր ստորագրեց «Բաքվում արտակարգ իրավիճակ հայտարարելու» մասին, որը հրապարակվել էր «Պրավդա» թերթում հունվարի 21-ին։ Շատ քան կփոխվեր և կդասավորվեր այլ կերպ, եթե ԽՍՀՄ զինված ստորաբաժանումները Բաքու մտնեին հունվարի 13-ին կամ մեկ շաբաթ առաջ։ Սակայն այդպես չեղավ։ Անեն դեպքում հունվարի 19-20-ը Բաքու զորամիավորումների մուտքով կանգնեցվեցին զազազած և մինչև ատամները զինված ամբոխի հետագա վայրագությունները։ Ավելի քան 30 զինվոր և սպա իրենց կյանքով վճարեցին դրա դիմաց։

Բաքվի ցեղասպանությանը զոհ է դարձել 300-400 հայ, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ է ստացել մի քանի հազար, Աղբեջանից արտագաղթել է մի քանի հարյուր հազար, գույքային վնասը, որ կրել են հայերը, զնահատվում է մոտ 10 մլրդ դոլար։



- НЕПОЛНЫЙ СПИСОК ЛИЦ, ПОГИБШИХ  
В ХОДЕ ПОГРОМОВ В БАКУ В ЯНВАРЕ 1990 Г.**
1. Гаврюшин Александр Михайлович, русский. Убит 13.01.90 г. 40 лет.  
 2. Миносян Гурген Саруханович, 62 года. Убит 13.01.90 г.  
 3. Балаян Рачик, за 40 лет, убит 13.01.90 г.  
 4. Мирзабекян Завен Акопович, 1910 г.р., убит 13.01.90 г.  
 5. Аракелов Георгий Васильевич, 62 года, убит 14.01.90 г.  
 6. Шарифов Георгий Аркадьевич, 1917 г.р. Убит в ночь с 13.01.на 14.01.90 г  
 ф С 7. Мелик-Пашаева Евгения Артшесовна, 1937 г.р. Убита в ночь с 12 на 13.01.90 г.  
 8. Пашаян Зарвард Агаджановна, 1912 г.р. Скончалась в больнице.  
 9. Тер-Симонян Лолита Рафаиловна, 1969 г.р. Скончалась в больнице. 20.01.90  
 ф С 10. Дацалова Елена Аркадьевна, 53 года. Убита 13.01.90 г.  
 11. Григорян Степан Макарович, 66 лет. Убит 13.01.90 г.  
 ф С 12. Саруханов Михаил Андроникович, 1930 г.р. Скончалась в больнице 17.01.90 г.  
 13. Налбандян Галуст Сергеевич, 1926 г.р. Скончалась в больнице 17.01.90 г.  
 14. Саркисян Володя, 45 лет. Скончалась в больнице 23.01.90 г.  
 15. Мирахова Лисия Авансесовна, 79 лет. Скончалась в больнице 29.01.90 г.  
 16. Торосян Аршалуйс Ваганович, 1922 г.р. Убит 13.01.90 г.  
 17. Телунц Сатеник Сергеевна, 1903 г.р. Убита 13.01.90 г.  
 18. Арутюнова Таки, 1925 г.р. Убита 13.01.90 г.  
 19. Григорян Нора Григорьевна, ж.р. Убита 13.01.90 г.  
 20. Хачатуров Иван Саркисович, 1928 г.р. Убит 13. 01.90 г.  
 21. Григорян Григорий Семенович, 1901 г.р. Убит 13. 01.90 г.  
 22. Газарянц Георгий Аркадьевич, 78 лет. Касабова Мария из-за погромов.  
 23. Касабова Мария Тиграновна, более 70 лет. Убита 13.01.90 г.  
 24. Андриянц Гаяк, около 80 лет. Убит 13.01.90 г.  
 25. Петросян Ашken, лет за 90-91. Убита 14.01.90 г.  
 26. Аргуманова Арусяк Нерсесовна, 1905 г.р. Убита 15.01.90 г.  
 27. Шакарян Варвара, 1924 г.р. Убита 16.01.90 г.  
 ф С 28. Тер-Арутюнова Ирина Андreeвна. Убита 13.01.90 г.  
 ф С 29. Тер-Арутюнов Борис Григорьевич, 1928 г.р. Убит 13.01.90 г.  
 ф С 30. Погосянков Григорий Семенович, 1919 г.р.  
 ф С 31. Хачикян Эмма Осиповна, 1916 г.р.  
 ф С 32. Мандрикян Софья Осиповна, 1905 г.р.  
 33. Авакимова Варсеник Мкртычевна, 1913 г.р. Убита 13.01.90 г.  
 34. Петросян Александр Ашотович, Убит 14 января 1990 г.  
 ф С 35. Шаген Абагян. Убит 13 или 14.01.90 г.  
 ф С 36. Багдасаров Михаил Согомонович, 1930 г.р. Убит 13.01.90 г.  
 37. Карагамов Вартан Аракеловиch, 1926 г.р. Убит 18.01.90 г.  
 ф С 38. Шахназарян Сашик Назарович, 1930 г.р. Скончалась в больнице 16.01.90г  
 39. Оганов Герман Суренович, лет 55. Убит 20 января 1990 г.

- 2-**
40. Арутюнян Сергей Гукасович, 1942 г.р. Убит 11 января 1990 г.  
 41. Аванесов Аркадий Гарегинович, 1960 г.р. Убит 15.01.90 г.  
 42. Маркосян Арутян, 78 лет. Скончалась в больнице 17.01.90 г.  
 43. Арутюнян Григорий, 65 лет. Скончался в больнице 19.01.90 г.  
 44. Багирян Э.А., 70 лет. Скончался в январе в больнице.  
 45. Арутюнов Петрос, 78 лет. Скончался в больнице 17.01.90г.  
 46. Саркисян Сатеник, 82 года. Скончалась в больнице 20.01.90 г.  
 47. Саркисова Анна. Скончалась в больнице 22.01.90 г.  
 48. Петросян Мкртич, 78 лет. Скончался в больнице 24.02.90 г.  
 49. Бадалян Софья, 90 лет. Скончалась в больнице 29.01.90 г.  
 50. Айрапетов Зартик, 80 лет. Скончался в больнице 29.01.90 г.  
 51. Шушанов Анатолий, 53 года. Скончался в больнице 29.01.90 г.  
 ф С 52. Габриелян Анна, 74 года. Скончалась в больнице 31.01.90г.  
 53. Мусаелян Ашот, 72 года. Скончался в больнице 2.02.90 г.  
 54. Казарбекова Варвара. Скончалась в больнице 14.01.90 г.  
 55. Барсегов П.Н., 78 лет. Скончался в больнице 14.01.90 г.  
 56. Лоломян Амбарцум, 80 лет. Скончался в больнице 15.01.90 г.  
 57. Карапланов Сергей, 67 лет. Скончался в больнице 5.02.90 г.  
 58. Сармакянян Лусик, 85 лет. Скончалась в больнице 5.02.90 г.  
 59. Мнацаканова Сатеник, 83 года. Скончалась в больнице 6.02.90 г.  
 60. Маркосян Татьяна, 66 лет. Скончалась в больнице 14.02.90 г.  
 61. Манукова Сирануш, 78 лет. Скончалась в больнице.  
 62. Меликов Л.Н., 78 лет. Скончался в больнице 20.02.90 г.  
 63. Додохян Вавара, Скончалась в больнице 5.03.90 г.  
 64. Григорян Роберт Асатурович, 60 лет. Скончался в больнице 5.03.90 г.  
 65. Каспарова Инна Арменаковна, 70 лет. Скончалась в больнице 13.03.90 г.  
 66. Мкрտчян Араксия, 65 лет. Скончалась 15.03.90 г.  
 ф С 67. Хачян Леонид Завенович, 1954 г.р. Скончался в больнице 2.02.90 г.  
 68. Макарова Соня Бабековна, 70 лет. Скончалась 18.03.90г.  
 69. Осипян Анна Тиграновна, 62 года. Скончалась в больнице 27.03.90 г.  
 70. Товмасова Анна, 18 лет. Скончалась в больнице 16.01.90 г.  
 71. Погосян Ана, 85 лет. Скончалась в больнице в январе.  
 72. Паремуян Арсен, 75 лет. Скончалась в больнице в январе.  
 73. Аракелова Сирануш, 75 лет. Скончалась в больнице в январе.  
 74. Саакян Маргарита, 81 год. Скончалась в больнице в январе.  
 75. Надаян Рантик, 1927 г.р. Скончалась в больнице в январе.  
 76. Аванесова/Авакова/ Надежда Лазаревна, 1912 г.р. Убита 13.01.90 г.  
 77. Асриян Р. Около 50 лет, Убит в январе 1990 г.  
 78. Асриян Юрий, 1966 г.р. Убит в августе 1990г./Приехал за документами  
 о гибели отца Асрияна Р./
- 89г.
- ф С 79. Григорян Сурен Бахтиевич, 1929 г.р. Убит зверски 10.12.90г. Вырваны  
 золотые протезы /зубные/. Баку,ул.40 лет Сов.Армии, д.69, кв.4.  
 /есть фото после смерти /

- φ 79. Абаджян Сергей Санасарович /есть фото/, 1937 г.р. Исчез 13.01.90 после погрома. Жил в Баку, пос. Ахмедлы, ул. Саревская, д. 18, кв. 104. Сообщил сын Абаджян Владимир Серопович.
80. Налбандян Ева Ованесовна, 1912 г.р. Исчезла 16.01.90 г. Проживала по адресу: Баку, ул. Островского, д. 25, кв. 13. Сообщила дочь Налбандян Амалия Левоновна.
81. Саркисов Ю.Н., 1938 г.р. Проживал по адресу: Баку, 7, ул. Фабрициуса, д. 24, кв. 8. Пропал без вести в январе 1990 г.
82. Языджян Грант Ишанович, уведен из дома после погрома и избиения 15 января 1990 г. Проживал по адресу: Баку, 8-й микрорайон, ул. Мамедова, д. 3, кв. 192. Заявила жена Саружанова Венера Батраковна.
83. Айрумова Эмма Айдумовна. В январские дни 1990 г. квартира была разгромлена. Пропала без вести. Проживала по адресу: Баку, ул. Мамедалиева, д. 4, кв. 60. Сообщила жена сына пропавшей
- φ 84. Коcharov Григорий Арминакович, 1924 г.р. Пропал без вести. 13.01.90 г. Увезли в неизвестном направлении. Сообщила жена Коcharova Роза Аршаковна.
85. Арутюнова - жена Арутюнова Ашота Лазаревича. 13.01.90 г. выбросили из окна (Показания очевидца)
86. Две пожилые женщины скончались на пароме. Одной было 85 лет. Личность не установлена. 15.01.90 г. Показания очевидца.
87. Убито 6 армян 13.01.90 г. в доме по ул. Кянлара, 24, кв. 44. Показания жильца дома.
88. Аршавир, лет 60. Убит 14.01.90, жил ул. Оспияна, д. 35<sup>2</sup>. /сообщил сосед /
95. Ахиян, армянка, парализованная .убита на глазах у мужа Ахияна Петра Аршаковича. Муж 1932 г.р. 1990г в январе.
96. Михаил, армянин около 50 лет. Убит в Баку на ул. Р. Ахундова, 17.01.90. похоронил русский φ сосед, жена с дочкой в Ереване.
97. Валера, 35 лет, полуармянин-полурусский. Истязали в штабе НКА Кировского района Баку. Убит 20.01.90 /показания нескольких очевидцев-заложников/
98. Вартан, зав. клубом электроучастка им. Фиолетова, выброшен с 3 этажа дома 14 января 1990г.
99. Армянин /старческого возраста/ = скончались на пароме Баку 14.01 -
- 100 Армянин /старческого возраста/ = 15.01. Красноводск. Один старик
- 101 Армянка /старческого возраста/ = азерб. командой парома выброшен за борт /очевидец, справка №20/
102. Армянин /старик/ = Скончались на пароме "Сов. Грузия", 15.01. Баку -
103. Армянка /старая/ = 16.01. Красноводск. Выбросить за борт не дали беженцы.
104. Армянин /старик/ = Убит в штабе НКА Кировск. р-на, 13.01.90/очевидцы/

- φ 105. Айрапетян Мелик Тадевосович, 1927 г.р., Умер 14 февраля 1990 г. 14 января во время погромов в Баку подвергся нападению и был избит.
106. Айрапетова Роза Петровна, 1926 г.р., адрес: Баку, ул. Ага-Нейматулла, 20, кв. 50. Убита 13 января 1990 г. на улице 28 апреля.
107. Шафирова Арфения Аркадьевна, 1914 г.р., адрес: Баку, 4-й микрорайон, ул. Дадибекова, 20А, кв. 89. Пропала без вести во время погромов.
108. Майлов Сергей Григорьевич, 1894 г.р., склон. Адрес: Баку, ул. Солнцева, 79, кв. 5. Избит до смерти 13 или 14 января 1990 г.
109. Евгения Арапетовна Мовсесян, 1922 г.р., адрес: Баку, ул. 28 апреля, д. 60, кв. 107. Убита 13-16 января после избиений.
110. Варданян Гагик /мать/, адрес: Баку, Индометский пер., 31. Убита в январе 1990 г.
- φ 111. Варданян Сергей /сын/, убит в январе.
112. Ташразян Эдвард Григорьевич, 1956 г.р., адрес: Баку, п. Кирова, ул. Бакрабочий, д. 38. 20 января совершен нападение, в результате тяжелых телесных повреждений умер 30 января в больнице им. Семашко в Баку.
113. Мурдзян Левон, убит и сброшен с балкона, затем растерзан толпой у своего дома на пересечении улиц Первомайской и Розы Люксембург.
114. Нерсесова Анна Викторовна, 1927 г.р., убита в январе, пр. Ленина угол улицы Кецховели.
115. Армянне мужчины и женщины избиты и сожжены на вокзале 14 января 1990 г. примерно в 19.00.
116. Старик армянин убит на ж.-д. вокзале.
117. Армянин 80 лет погиб в кинотеатре "Нафаг" во время погрома, 17 января 1990 г.
118. Армянин 21 года повешен на улице Торговая недалеко от магазина "Военторг". 14 января 1990 г.
119. Армянин лет 40 сожжен заживо на вокзале при большом скоплении народа, толпа смеялась и хлопала. 14 января 1990 г.
120. Армянин 50 лет, подполковник медслужбы, содержался в качестве заложника в штабе НКА Кировского р-на. Убит 16 января 1990. Труп выброшен из окна.
121. Армянская семья, муж, жена и дети - мальчик и девочка 15-16 лет, брошены под поезд на вокзале 13 января 1990 г. примерно в 20.00 ч.
- φ 122. Арутюнян Карен
- φ 123. Григорий Энтина Асаурович
- ← 124. Аствацет Асаур Аветисович
- φ 125. Арапетян Владимир Аракелянович

Հետագայում, երբ 1990թ. մարտի 5-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում քննարկվում էր Բարվում տեղի ունեցածը, Ներքին գործերի նախարար Վ. Բակատինը հայտարարեց, թե Ադրբեյջանական ԽՍՀ ղեկավարությունը ազատ է արձակել Բարվի հայկական ջարդերի բոլոր կազմակերպիչներին, որոնք կալանավորվել էին, և նրանց նկատմամբ հարուցված գործերը ընթացքի մեջ են. «Սասնավորապես ազատության մեջ է հայտնի Պանախովը, որին մենք փնտրում ենք և որը կազմակերպել է ջարդերը»։ Ավելին, Բակատինի խոսքերով՝ իրենց հաջողվել է բացահայտել առնվազն 300 հանցագործություններ, որոնց բացահայտման գործնթացին ամեն կերպ խոչընդոտում էին ադրբեյջանական տեղական իշխանությունները։ Ի հավելումն Բակատինի խոսքերի՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յազովն իր ղեկույցում բավական կոնկրետ նշեց, որ Բարվի դեպքերի նախօրեին հանցագործները կողոպտել են սահմանապահ զորամիավորումների մի ամբողջ զորամաս։ Մեկ այլ վայրում նրանք ձեռք են բերել 155 ինքնածիգ, 500 ական, մեծ թվով այլ զինատեսակներ։

Այսօր ադրբեյջանական քարոզամեքենան աղմկում է, թե Բարվի, Սուլազայիթի ջարդերը միֆ են, որ ստեղծվել են Ադրբեյջանի «բարի» անունն ու հեղինակությունը Վարկարեկելու համար։ Սակայն լիովին այլ պատճեր է բացվում, երբ դիտարկում ես ադրբեյջանական ժամանակակից քաղաքական վերլուծաբանների գրագրությունը։ Մասնավորապես ադրբեյջանական «AzerTAG» գործակալության Բեռլինյան թղթակից վուգար Սեհիդովը կարծիք է հայտնում, թե «ժողովրդական ճակատն» իրոք ուներ սադրիչներ (օրինակ՝ Նայմատ Պանախովը և նրա խումբը)։ Ըստ Սեհիդովի, չլինելով դասական կուսակցություն՝ ԺԿ-ի ղեկավար հատվածն ազատական էր, մյուս հատվածը՝ ազգայնական, որոնք հայերի նկատմամբ բռնության գործադրման կողմնակից էին։ Սեհիդովը նշում է, որ տեղյակ է, թե ինչպես Պանախովի մարդիկ իրենց շտար՝ Սաթարխանի (նախկին Շմիդտի) անվան գործարան էին տեղափոխում հարհստահարված և սպանված հայերի բնակարանների գույքը։ Իսկ այդօրինակ ջարդերի համար պատճառ կարող էր հանդիսանալ ամեն հարնար առիթ. օրինակ՝ հայ ընտանիքի փորձը պաշտպանվել ադրբեյջանական ջարդարար խմբերից, որոնք մտել էին բռնաբարելու, կողոպտելու և սպանելու։ Սեհիդովի խոսքերով, ինեն այս միջադեպից հետո ջարդարարների թիվը բազմապատկվեց, և նրանք ուղղվեցին հայկական քաղանասերը բնաջնջելու։

## 1990թ. ԱՊՐԻԼԻ ՅԻ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԽՍՀՄ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1990թ. ապրիլի 3-ին Կենտրոնի նախաձեռնությանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդունքում վերաբերելու «Միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» օրենքը, որը կոչված էր օրենսդրորեն կարգավորել ԽՍՀՄ-ից միութենական հանրապետությունների դուրս գալու գործնթացը։ Այն ակնհայտորեն ուներ երկակի բնույթ։ Մի կողմից միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու գործնթացն այդ օրենքով կարծեն թե բարդացվում էր այն աստիճան, որ ԽՍՀՄ-ից դուրս գալու նրանց մղումը մարի, քանի որ օրենքն արտոնում էր միութենական հանրապետության կազմի մեջ մտնող ինքնավար կազմավորումներին՝ ԽՍՀՄ-ից վերջինիս դուրս գալու դեպքում ինքնուրույն որոշել իրենց կարգավիճակի հարցը։ Օրենսդրութեն ամրագրվում էր դուրս եկող հանրապետության կազմում մնալու և նրա հետ ԽՍՀՄ-ից դուրս գալու, ԽՍՀՄ կազմում մնալու կամ անկախ պետություն ստեղծելու նրանց իրավունքը։ Օրենքը համանաներու հրավահում հանրապետության սահմաններում հավաք ապրող, բայց ինքնավարություն չունեցող ազգություններին։ ԱդրիսԱ-ի պարագայում դա նշանակում էր, որ ԽՍՀՄ-ից նրա դուրս գալու դեպքում այդ երկիրն իրավունք չուներ բռնությամբ «իր հետ տանել» ԼՂԻՄ-ը և նրա հարակից հայկական շրջանները (դեռևս հայարնակ Շահումյանի և համալարի շրջանները), ինչպես նաև Նախիջևանի ինքնավար Հանրապետությունը (վերջինիս խնդիրը փոքր-ինչ այլ է, որին մենք արդեն իսկ անդրադարձել ենք՝ ընդգծելով, որ այդ երկրամասի կարգավիճակի հարցը հետխորհրդային շրջանում չի կարող կարգավորվել կարսի բազմակողմ միջպետական պայմանագրի շրջանցումով)։ Օրենքը փաստորեն վերահաստատում էր խորհրդային տիպի պետական կազմավորումներ ունեցող ժողովուրդների ազատ ինքնորոշման սուրյեկտ լինելու փաստը և ամրագրում միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու պարագայում ինքնիշխան պետականություն հիմնելու նրանց իրավունքը։ Այն փաստորեն ինքնորոշման իրավունք էր տրամադրում նաև հավաք ապրող ազգություններին։

**Այսինքն, ԼՂ-ի ինքնորոշման իրավունքը հանրաքեի միջոցով իրացնելը ԽՍՀՄ օրենսդրության տեսանկյունից անթերի էր։**

Թվում էր, թե օրենքը հղացվել է ԽՍՀՄ կազմաքանդումը կանխելու համար, քանի որ բազմազգ և հատկապես ինքնավար կազմավորումներ ունեցող հանրապետությունները հազիվ թե համարձակվեին դուրս

գալ ԽՍՀՄ-ից: Սակայն այն կարելի է նաև մեկնաբանել որպես գերտերության լուծարման խթանից: Պատահական չէ, որ բոլոր հանրապետությունները և ինքնավար կազմավորումները ներկայացնող ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորները միաձայն ընդունեցին այն: Բան այն է, որ ԽՍՀՄ լուծարումը կարող էին սկսել այն հանրապետությունները, որոնք իրենց կազմում ինքնավարություններ չունեին: «Առանց գլխացավանքի» այդ քայլին կարող էին դիմել մերձալթյան ու միջինասիական հանրապետությունները (բացառությամբ Ղազախստանի, որտեղ ուսները կազմում էին բնակչության գրեթե 40 տոկոսը և որը վերջինը հոչակեց իր անկախությունը), Բելառուսը, Յայաստանը, ինչը անկասելի կդարձներ լուծարման գործընթացը: Որոշ ժամանակ է պետք, որպեսզի վկայություններով ու փաստաթղթերով պատմությանը հայտնի դառնա, թե որ մի գաղափարն է դրվել օրենքի հիմքում՝ ԽՍՀՄ լուծարումը կանխելո՞ւ, թե խթանելու: Բայց արդեն իսկ տեղի ունեցած պատմական իրադարձությունների հիման վրա կարելի է արձանագրել, որ օրենքն արագացրեց ԽՍՀՄ լուծարումը:

1988 թվականից ի վեր Բաքում խորհրդային Կենտրոնին ահարեկում էր, թե ինքնավար մարզի խնդրանքի (իսկ հետագայում նաև պահանջի) կատարումը կհանգեցնի ԽՍՀՄ փլուզմանը: 1991թ. պարզվեց հակառակը՝ մարզի արդարացի պահանջի մերժումը և սումգայիթյան ոճրագործության պարտակումը ի վերջո դարձան ԽՍՀՄ լուծարման ներքին գլխավոր շարժչները, քանի որ նրանք երկրի մեջ ու փոքր ժողովուրդներին ցույց տվեցին, որ պետությունն անկարող է ապահովել նույնիսկ նրանց ֆիզիկական անվտանգությունը, և ուժեղացրեցին ԽՍՀՄ-ից անվտանգ ձևով դուրս գալու վստահությունը:

Առաջինը, ինչպես և սպասելի էր, ԽՍՀՄ-ը օրինականորեն լրելու քայլեր ձեռնարկեցին մերձալթյան հանրապետությունները: Մայիսի 4-ին Լիտվայի Գերագույն խորհուրդն ընդունեց պետության անկախության մասին հոչակագիրը: Մայիսի 8-ին Խորհրդային Էստոնիայի Գերագույն խորհուրդը հոչակեց անկախ Էստոնական Հանրապետությունը: 1991թ. մարտի 3-ին Էստոնիայում և Լատվիայում կանխատեսելի ելքով տեղի ունեցան անկախության մասին հանրաքվեներ: Մերձալթյան հանրապետությունների անկախությունը ԽՍՀՄ-ը, ի դեմս նրա Պետական խորհրդի, ճանաչեց 1991թ. սեպտեմբերի 6-ին: 1991թ. ընթացքում միութենական բոլոր հանրապետությունները շրեթով դուրս եկան ԽՍՀՄ-ից. որոշները՝ պետական անկախության վերականգնան իրավական ակտով, մյուսները՝ ուղղակի անկախության հոչակման ձևով, ինչպես, օրինակ, միջինասիական հանրապետությունները, որոնք մինչև ԽՍՀՄ կազմավորումը ինքնիշխան պետություններ չեն եղել: Վերջինը

ԽՍՀՄ-ը լրեցին Ուկրաինան և Ղազախստանը: 1991թ. դեկտեմբերի 6-ին Ուկրաինայի Գերագույն խորհուրդը անվավեր հոչակեց 1922թ. դեկտեմբերի 30-ի միութենական պայմանագիրը և որոշեց, որ հանրապետությունների թափ առաջ անկախացնան գործնթացում այլևս խստորեն չեն պահպանվում 1990թ. ապրիլի 3-ի օրենքում ԽՍՀՄ-ից դուրս գալու ընթացակարգի համար նախատեսված բոլոր կետերը: Կենտրոնը ուղղակի չեր հետևում դրան:

## «ՕՂԱԿ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՇՈԳԵՎԱՐՔԸ

Լավ գիտակցելով ապրիլերեքյան օրենքի հնարավոր ազդեցությունը «կայսրության» փլուզման գործընթացում՝ խորհրդային Կենտրոնի համար արդեն կարևոր էր, որպեսզի մյուս հանրապետություններում նշյալ օրենքի հիմքով ինքնորոշման հաջողված նախադեպեր չլինեն: Ամենաիրական թեկնածուն, որ կարող էր օգտվել օրենքից, Լեռնային Ղարաբաղն էր, որտեղ ծավալված ազատազրական շարժումը մինչ այդ խրախուսվում էր Արևմուտքի կողմից: Փաստորեն Ղարաբաղին զսպելն առաջին հերթին Կենտրոնին էր ձեռնոտու, քանի որ պայթյունի «ապրիլերեքյան ականց» ամենից շատ նույսաստանին էր սպառնում: Պետք էր Լեռնային Ղարաբաղին հնարավորինս արագ «կոտրել», որպեսզի չդառնա օրենքի կիրառման նախադեպ: ԽՍՀՄ վրա հասնող վախճանի նախօրյակին Մ. Գորբաչովը, ինչպես ցույց են տալիս փաստերը, հաշվեհարդար էր ուզում տեսնել Արցախի հետ: 1991թ. ապրիլից մինչև հուլիս Կենտրոնը ադրբեջանական իշխանությունների հետ ձեռք ձեռքի տված իրականացրին Արցախը հայաբափելու «Օղակ» («Կոլցո») պատժի գործողությունը:

Ադրբեջանում տեղակայված խորհրդային 23-րդ դիվիզիան դրվեց Սպառականի կառավարության Ենթակայության տակ: Խորհրդային զինված ուժերը մասնակցում էին Խանլարի շրջանի՝ դեռևս հայարձնակ զյուղերի բնակչության բռնի տեղահանությանը: Ապրիլի 30-ին Գետաշենից ու Մարտունաշենից ստացվեց փրկության խնդրանքով ռադիոգիր, որտեղ ասվում էր. «Սովետական բանակը բնաշնչում է սովետական մարդկանց: Կրակում են ցամաքից ու երկնքից, հրանորներից ու ավտոմատներից... Մենք անկարող ենք որսորդական հրացաններով դիմակայել բանակին: Աշխարհի մարդիկ, օգնեցք»: Աղրևս ներքին գործերի նախարարի առաջին տեղակալ Ռ. Մամեդովը և 23-րդ դիվիզիայի հրամանատարի տեղակալ Ե. Միշինը մայիսի 1-ին, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության հետ համաձայնեցված, վերջնագիր ներկայացրին Գետաշենի ու Մարտունաշենի բնակչությանը:

Զրահատեխնիկայով շրջապատված գյուղի վրա ուղղաբիռներից թափվող թերթիկներում հայտնվում էր, թե իբր տեղահանությունը կատարվում է օյուղի բնակչության խնդրանքով: Խանլարի շրջանից հայթափության «Օղակ» գործողությունը տեղափոխվեց Շահումյանի շրջան: Հուլիսի 4-ին Գորբաչովը հրամանագիր ստորագրեց շրջանում արտակարգ դրությունը վերացնելու մասին: Նույնիսկ արտակարգ դրու-

թյան պայմաններում ադրբեջանական ՕՄՕՆ-ի կողմից անընդհատ կազմակերպվող հարձակումների ետնապատկերին նման հրամանագիրը կարող էր միայն շրջանի բնակչության բռնի տեղահանության ազդանշան լինել: Յրամանագիրն այլ նպատակ էր էր հետապնդում՝ հանել պատասխանատվությունը անմիջապես Կենտրոնին Ենթարկվող խորհրդային գործերից, որոնց խնդիրն էր շրջանը պաշտպանել ադրբեջանական հարձակումներից: Արտակարգ դրությունը վերացվեց, սակայն խորհրդային գործերը մնացին՝ այս անգամ ադրբեջանական միլիցիայի ու ՊԱԿ-ի գործերի հետ մեկտեղ հայ բնակչության դեմ արդեն հուլիսի 6-ին սկսված բռնություններին ու տեղահանությանը մասնակցելու համար: Իրենց տներն ու ընտանիքները որսորդական հրացաններով պաշտպանող ինքնապաշտպանական ուժերը անկարող էին դիմակայել ժամանակակից տանկերով գյուղ մտած խորհրդային գործերին ու ավտոմատներով զինված ադրբեջանական զինյալ խնդիրին: Ուժերն անհավասար էին:



**Գետաշեն գյուղի բնակիչ Մելիքն Շիլիմգայրանը:  
«Անձնագրային ստուգման» արդյունելու հեռացվել էր  
նրա գլխամամակից մի մասը:**

Հունիս - հուլիս ամիսներին Բաքուն և Կենտրոնը բռնությունների ու տեղահանությունների օղակը սեղմում էին նաև Զադորութի ու Շուշիի շրջաններում: Շուշիի շրջանի Բերդանորի Ենթարջանի և Զադորութի շրջանի հարավային հատվածի օյուղերի բնակիչներն անզոր էին դիմակայել ժամանակակից զինտեխնիկայով հագեցած խորհրդային գործերի ստորաբաժնություններին: Նրանք զինված էին որսորդական հրացաններով, ինքնաշեն ատրճանակներով և ականեներով: Զայրենի օջախը լրելու պահանջին նվազագույն դիմադրությունը ցանկացած բնակչի համար ունենում էր մահացու ելք: Զաշված օրերի ընթացքում դատարկվեցին, ապա հիմնահատակ կործանվեցին ավելի քան երկու տասնյակ հիմակուրց հայկական գյուղեր: Ղարաբաղի բնակիչներին դեռևս անհյույս «Օղակ» կոչվող այդ գործողության նախնական փուլում զոհվեց

41, վիրավորվեց աելի քան 70 անգեն օյուղացի, կանայք, երեխաներ: Անհայտ ուղղությամբ պատանդ տարվեց 335 հայ, որոնցից ազատ արձակվեց ընդամենը 189-ը: Հայտնի տվյալներով պատանդներից 3-ը գագանաբար հոշոտվել են աղրբեջանական բանտերում:

«Օղակ» գործողությունն իրականացվեց ոչ միայն Ղարաբաղի կազմի մեջ մտնող Շուշիի շրջանում, այլ ԼՂԻՄ-ի ողջ տարածքով մեկ՝ բազմաթիվ հայկական այլ գյուղերում: Խանլարի, Ջաղուռի, Շուշիի, Ասկերանի շրջանների Բուլգլուխ, Մանաշի, Գետաշետ, Մարտունաշետ, Զրաբերդ, Քուշի-Արմավիր, Ազատ, Կամո, Քարինգ, Արաքյոլ, Բանազուր, Կարմրաքար, Սարալանջ, Արևշատ, Քարագլուխ, Մյուլքությարա, Պետրոսաշետ, Սպիտակաշետ, Ցամձոր, Ցոր, Խանձաձոր, Մեծ Շեն, Կիրով, Եղծախս, Արցախաշետ, Ցամձոր, Ցոր, Խանձաձոր, Մեծ Շեն, Կիրով, Եղծախս, Արցախաշետ, Բաղարա գյուղերը և մի շարք այլ՝ ընդհանուր թվով մոտ 40 գյուղեր դարձան հայաբահման աղրբեջանական և խորհրդային տեղական հրամանատարական կազմի գործողությունների թիրախը: Եվ գուց նարզն ընդհանրապես հայաբահման գյուղերում կազմի գործողությունների թիրախը: Եվ գուց նարզն ընդհանրապես հայաբահման գյուղերում կազմի գործողությունների թիրախը: Մուսկան այլ հոգսերով սկսեց ապրել: Խռովության ձախողությունից հետո կայսրության լրտարումը մտավ ավարտական փուլ: Արդեն օգոստոսի 30-ին Բաքվում իրապարակվեց «Պետական անկախության վերականգնման մասին» հոչակագիրը:



*Բուլգլուխ և Մանաշի գյուղերի բնակիչները, ահաբեկված աղրբեջանական օսօն-ի գորամիավորումներից, լուս են իրենց բնակավայրերը:*

Ի հավելումն վերոգրյալի՝ նշենք, որ «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպության տվյալներով՝ «Օղակ» գործողության ընթացքում առնվազն 5000 հայ բնակիչ է դարձել փախստական:



## ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՇԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՂՐԲԵՋԱՆԻ ԻՐԱՎԱՀԱԶՈՐԴՈՒԹՅՈՒՆԻՑ

1991թ. օգոստոսին Բաքվում որոշեցին իրաժարվել Խորհրդային Աղրբեջանի իրավահաջորդությունից և վերականգնել 1918թ. բուրքական կանոնավոր բանակի կողմից հիմնված Աղրբեջանական Ղենոկրատական Հանրապետության պետականությունը: Մեկուկես ամիս անց՝ հոկտեմբերի 18-ին, Աղրբեջանական Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունեց «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտը, որում բավականին ծավալուն տրվում էին ԱղրիսՍՀ-ի իրավահաջորդությունից իրաժարվելու քաղաքական հիմնավորումները: Օգոստոսի 30-ի «Պետական անկախության վերականգնման մասին» հոչակագիրը և հոկտեմբերի 18-ի «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտը խորհրդային Աղրբեջանի (նախօրյակին կատարված անվանափոխությամբ այն փաստաթթերում ներկայանում էր՝ Աղրբեջանական Հանրապետություն)` ԽՍՀՄ-ից դուրս գալու գործընթացի իրավական ձևակերպումն էին: Սահմանադրական ակտում 1920թ. ապրիլին խորհրդային XI բանակի կողմից Բաքվի գործումը և տեղում «օրինական իշխանությունների տապալումը» (նկատի է առնվում բուրքական բանակի կողմից Բաքու բերված խան Խոյսկու կառավարությունը) դիտվում էր որպես Աղրբեջանի բռնազավթում: Ակտն ապօրինի և ուժից գոկված էր հայտարարում ԽՍՀՄ կազմավորումից ի վեր Աղրբեջանի վերաբերյալ բոլոր ակտերը և Աղրբեջանական Հանրապետությունը սահմանադրուեն հայտարարում էր 1918-1920թթ. գոյատևած, միջազգային հանրության կողմից դե-յուրէ չճանաչված և առանց սահմաններ ձեռք բերելու պատմությունից հեռացած ԱՂՅ-ի իրավահաջորդ: Այն, որ ԱՂՅ-ը փաստացի հաստատված ու ճանաչված սահմաններ չի ունեցել, պարտավիրեցնում էր Բաքվին հոչակել, որ ինքը իրաժարվում է այն տարածքներից, որոնց հավակնում էր ԱՂՅ-ը և որոնք 1991թ. արդեն գտնվում էին Թուրքիայում (խոսքը Կարսի մարզի մասին է), Վրաստանում (խոսքը Բաքումի մասին է) ու Հայաստանի Հանրապետությունում (խոսքը Զանգեզուրի մասին է): Աղրբեջանը պարտավոր էր անդրադարձնալ նաև Նախիջևանի հարցին՝ 1920թ. Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված այն երկրամասին, որը Կարսի բազմակողմն և ցայսօր ուժի մեջ գտնվող պայմանագրով 1921թ. հանձնվել է ԱղրիսՍՀ-ին: Բաքվում սակայն նախընտրեցին լրել

այդ բոլորի մասին և «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտում տարածքային հարցին անդրադառնալ իրավունքի տեսակետից անհմաստ հետևյալ ձևակերպումով՝ «Աղբբեջանական Հանրապետության տարածքը պատճականորեն ձևավորված սահմաններում միասնական է...»: Միջազգային իրավական այնպիսի արգելք, որպիսին կար ԱղրիսՄ սահմաններում Աղբբեջանական Հանրապետության անկախացման ժամանակահին, չուներ և ոչ մի խորհրդային միութենական հանրապետություն: Բանն այն է, որ Կարսի պայմանագրով Նախիջևանը չի տրվել Խորհրդային Աղբբեջանի ինքնիշխանությանը: Պայմանագրով Նախիջևանին ընդամենը հովանավորվող տարածքի կարգավիճակ էր տրվում, և անկախ նրանից՝ կմնար Աղբբեջանական Հանրապետությունը ԱղրիսՄ-ի իրավահաջորդը, թե՝ ոչ, 1991թ. Կարսի պայմանագիրը արգելում էր նրան իր ինքնիշխանության տակ վերցնել Նախիջևանը: Նման արգելք ոչ մի այլ միութենական հանրապետություն չուներ, և այդ իմաստով Աղբբեջանական Հանրապետությունը միակն էր նրանց շարքում:

ԱղրիսՄ իրավահաջորդությունից հրաժարումը և առանց սահմաններ ձեռք բերելու իր գոյությունը դադարեցրած Աղբբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականության վերականգնումը Կարսի գործող պայմանագրի առկայությամբ այսօր էլ անհնարին է դարձնում տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառումը Աղբբեջանական Հանրապետության նկատմամբ: Մերօրյա Աղբբեջանական Հանրապետության իրավական փաթեթում չկա որևէ իրավական իմք այդ հանրապետության սահմանների և նրա ինքնիշխանության մասին այն տարածքներում, որոնք նա այսօր համարում է իրեն պատկանող: Եվ դա միայն Նախիջևանը չէ:

## ԻՆՉՈ՞Ւ ԲԱՔՎՈՒՄ ՇՐԱԺԱՐՎԵՑԻՆ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԱՂՐԲԵՋԱՆԻ ԻՐԱՎԱՀԱԶՈՐԴՈՒԹՅՈՒՆԻՑ

Առաջին հայացքից թվում է, թե անհմաստ էր իրաժարվել ԱղրիսՄ իրավահաջորդությունից և վերականգնել փաստորեն 19 ամիս գոյատևած, սահմաններ ծեռք չբերած և Ազգերի լիգայի անդամության մերժումը ստացած մի պետականություն: Բայց դա՝ միայն առաջին հայցքից: Իրականում Բաքուն լուրջ հիմքեր ուներ նման քայլի դիմելու համար:

**Առաջին:** Յայտնի է, որ Խորհրդային Աղբբեջանը իմանվել է որպես մահմերականների ու հայերի ընդիմանուր պետություն, որպես ոչ ազգային (ինտերնացիոնալ) խորհրդային հանրապետություն, որը յոթ տասնմյակների ընթացքում հետևողականորեն աղբբեջանականացվել է (իրականում թուրքացվել է): Եթե այդ նույն հարթությունում հաշվի առնենք, որ 1988-1991թթ. տեղի թուրք հանրապետության մեջ մասից դուրս էր մղել էթնոքաղաքական հարցերում իր գլխավոր ընդդիմախսուհն՝ հային, ապա հասկանալի կլինի ԱղրիսՄ-ի՝ հայերի հետ մեկտեղ ընդհանուր պետության մասին իրավաքաղաքական ժառանգությունը մոռացնության գետը նետելու Բաքվի ծերնարկած քայլը:

**Երկրորդ:** Ինտերնացիոնալ ԱղրիսՄ-ի իմանադիր ժողովուրդներից մեկի՝ հայերի ցեղասպանությունը իմանականում իրագործվել է Խորհրդային տարիներին: 1991թ. Սումգայիթի, Բաքվի ջաղդերի և «Օղակ» գործողության օրերին միջազգային տարբեր կազմակերպություններ, քաղաքական ու հասարակական գործիչներ դրանք գնահատել են հենց որպես ցեղասպանություն: Արևելյան Անդրկովկասի հայության ցեղասպանության հետ կապված ԱղրիսՄ-ի՝ այդ ժառանգության հետ առնչություն չունենալու համար Բաքուն նպատակահարմար գտավ չդառնալ նրա իրավահաջորդը:

**Երրորդ:** Ինչպես արդեն նշել ենք, Խորհրդային Աղբբեջանը 1920թ. նոյեմբերի 30-ին Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը ճանաչել է որպես Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս: Յոշակագիրը իրապարակվել է Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում՝ դեկտեմբերի 1-ին: Յաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ին, այդ Յոշակագիրը թերթում լույս է տեսել Լեռնային Ղարաբաղի մասով փոփոխված տեքստով, որտեղ արձանագրված է, որ Խորհրդային Աղբբեջանը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի ժողովողի ազատ ու լրիվ ինքնորոշումը: Յասկանալի է, որ

Բարվում կուգենային ազատվել թե Լեռնային Ղարաբաղը Հայաստանի անկապտելի մաս ճանաչելու, թե՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի «լրիվ ինքնորոշման» իրավունքը ճանաչելու ժառանգությունից, թե՝ Նախիչևնը ՀիւՄՇ անկապտելի մաս հոչակած ԱղրիւՄ-ի այդ քայլից:

**Չորրորդ:** 1988-1991թթ. հանրապետությունից բռնություններով դուրս մղված հայերը այսպես թե այնպես պետք է փոխհատուցում ստանային իրենց քալանված, բռնագրավված բնակարանների ու գույքի համար: Իրենց բնակության վայրերուն նրանք թողել էին ավելի քան 90 հազար բնակարան ու առանձնատուն: Թողել էին դարերով իրենց պատկանող տարածքները: 1988թ. Սպիտակի Երկրաշարժի նախօրյակին ու հենց աղետի օրերին խորհրդային Հայաստանից հեռացած աղրեջանցիները համապատասխան փոխհատուցում ստացել էին: ԱղրիւՄ-ից բռնի տեղահանությանք դուրս մղված հայերը մինչ օրս չեն ստացել ոչ քաղաքական, ոչ բարոյական, ոչ էլ նյութական որևէ փոխհատուցում: Իսկ նյութական փոխհատուցումը միշտարդների է հասնում: Ահա նաև դրանից խուսափելու համար Բարվում իրաժարվեցին ԱղրիւՄ իրավահաջորդությունից:

**Քինգերորդ:** Բարվում հաշվարկեցին, որ ԱղրիւՄ իրավահաջորդությունից իրաժարվելով՝ իրենք կչեղորդացնեն Լեռնային Ղարաբաղի գլխավոր փաստարկներից մեկը՝ 1990թ. ԽՄՀՍ ապրիլի 3-ի օրենքից օգտվելու իրավունքը: Ուղղակի հաշվի չէին առել, որ անկախ նրանից՝ կմնա՝, թե չի մնա Աղրեջանական Հանրապետությունը ԱղրիւՄ-ի իրավահաջորդ, ապրիլերեքյան օրենքը մնում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման սուբյեկտ լինելու ճանաչված իրավունքի վերահսկատումը:

Ակնհայտ է ԱղրիւՄ իրավահաջորդությունից իրաժարվելու թվարկված նկատառումների լրջությունը և ընդունված որոշման շահեկան լինելը Բարվի համար: Կշռքի մյուս նժարին իրաժարումի ակտից բխող իրավական այն հետևանքներն էին, որ կապված էին սահմաններ ծեռք չբերած այն պետականության իրավահաջորդը դաշնալու հետ, որն իր կազմում ոչ Լեռնային Ղարաբաղ, ոչ էլ Նախիչևնան է ունեցել: Բարվում հաշվարկեցին, որ այդ վտանգները կողքով կանցնեն, քանի որ մի շարք պետություններից արդեն իսկ «մեսիջ» էր ստացված առ այն, թե նորանկախ հանրապետությունները ճանաչվելու են նախկին միութենական հանրապետությունների սահմաններում:

## ԼՂՀ ԿԱՅԱՑՄԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆ ԽՄՀՍ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՍՏԵՔՄՈՒՄ

1991թ. օգոստոսի 30-ին Բարվում «Պետական անկախության վերականգնման մասին» հոչակագրի իրապարակումից անմիջապես հետո՝ սեպտեմբերի 2-ին, Լեռնային Ղարաբաղի ինքնավար Սարգի և դեռևս չհայաթափված հարակից Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների խորհուրդների ժողովրդական պատգամավորների մասնակցությամբ տեղի ունեցած նստաշրջանն ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակման մասին» հոչակագիրը<sup>47</sup>: Դուքսակագիրը՝ որպես ԼՂՀ անկախության գլխավոր իրավական իիմք, արձանագրեց պատագրական պայքարի տարիներին անցկացված և վավերացված հանրաբեկների արդյունքները, Աղրեջանի Հանրապետության կողմից «Պետական անկախության վերականգնման» հոչակումը և ԱղրիւՄ իրավահաջորդությունից իրաժարվելու իրավական փաստը, ինչպես նաև ԽՄՀՍ օրենքները, «որոնք ինքնավար կազմավորումներին և համահավաք ապրող ազգային խմբերին իրավունք են տալիս ինքնուրույնաբար լուծել իրենց պետականական կարգավիճակի հարցը ԽՄՀՍ-ից միութենական հանրապետության սուբյեկտ գալու դեպքում»:

Դուքսակագիրը ծևակերպված էր այնպես, որ այն սպառիչ պատասխաններ պարունակի հանրապետության անկախացման կապակցությամբ հնարավոր իրավական բնույթի հարցադրումներին: Ակնհայտ է, որ ժողովուրդների ազատ ինքնորոշման միջազգային իրավական սկզբունքը բոլոյ էր տալիս արդեն իսկ ինքնորոշման սուբյեկտ ճանաչված Լեռնային Ղարաբաղի ժողովրդին հոչակել իր անկախությունը: Սակայն Դուքսակագիրը իիմնավորում է ԼՂՀ անկախության հոչակման օրինականությունը ոչ միայն ԽՄՀՍ օրենքների, այլ նաև Բարվում պետական անկախության վերականգնման և ԱղրիւՄ իրավահաջորդությունից իրաժարվելու մասին ընդունված պետական կարգավիճակի տեսակետից: Դուքսակագիրը ծածկում է հնարավոր իրավական առարկությունների դաշտը այնպես, որ բացարի իրավական այնպիսի փաստարկի գոյությունը, ինչը կասկածի տակ կդներ ԼՂՀ հոչակման օրինականությունը: Իրավական այդ ինքներից մեկը ԽՄՀՍ 1990թ. ապրիլի 3-ի օրենքն էր, որն արտոնում էր ինքնավարություններին ու հավաք ապրող ազգային խմբերին ինքնուրույն որոշել իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցը:

<sup>47</sup> Տես «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 3 սեպտեմբերի 1991թ.:

Բայց դա Արցախի ժողովրդի միակ և, որ կարևոր է, գլխավոր իրավական փաստարկը չէր: ԼՂՀ հօչակման իրավական հիմքերում ավելի սկզբունքային նշանակություն ուներ իրավական այն փաստարկը, որ բխում էր Բաքվում 1991թ. ընդունված «Պետական անկախության վերականգնման նախին» ակտից, որով Ադրբեջանական Հանրապետությունը հրաժարվեց ԱդրիՍՀ իրավահաջորդությունից և վերականգնեց Ազգերի լիգայի կողմից դեյուրե չճանաչված, առանց հաստատված սահմանների ասպարեզից հեռացած մի աետականություն, որն իր կազմում չի ունեցել ոչ Նախիջևան, ոչ էլ Լեռնային Ղարաբաղ: Փաստորեն այդ հօչակագրով նորահօչակ Ադրբեջանական Հանրապետությունը կորցնում էր իր բոլոր այն կապերը, որ նա ուներ Խորհրդային Հայաստանից Կովբյուրոյի որոշմամբ հօգուտ ԱդրիՍՀ-ի օտարված Լեռնային Ղարաբաղի հետ: Եվ դա միայն մարզի տարածքը չէ, քանի որ Կովբյուրոն Խորհրդային Հայաստանից օտարել է ողջ Լեռնային Ղարաբաղը՝ նրան լայն մարզային ինքնավարություն տալու պայմանով: Բաքվում ոչ միայն հրաժարվեցին ԱդրիՍՀ իրավահաջորդությունից, այլև 1991թ. նոյեմբերին անվավեր հայտարարեցին Կովբյուրոյի որոշումը՝ միակ փաստարությունը, որով մինչ այդ հիմնավորում էին իրենց իրավունքները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ (Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդը Կովբյուրոյի որոշման անհրավագորության մասին որոշում ընդունել էր 1990թ. Վետրվարի 13-ին): Տայսօր անհասկանալի է մնում, թե ինչ նկատառումով են Բաքվում անվավեր հայտարարել մի որոշում, որը նրան տալիս էր գոնե կեղծ փաստարկման հնարավորություն, եթե ստուգապես հայտնի է, որ որոշմանը նախորդած ժամանակներում նման (գոնե կեղծ) որևէ հիմք ինքը չուներ:

Կովբյուրոյի՝ առանց այն էլ ապօրինի (և իրականում չընդունված) որոշման խախտումով մարզից կամայականորեն դուրս քողնված տարածքներից 1991թ. դեռ հայաթափված չէր Կենտրոնական Արցախի Շահումյանի շրջանը: ԼՂՀ-ը իր անկախությունը հօչակեց նախկին ԼՂ ինքնավար մարզի և Շահումյանի շրջանի տարածքում:

Ստեփանակերտը, 1991թ. սեպտեմբերին ընդունելով «Անկախության մասին» հօչակագիրը, նպատակ ուներ միջազգային հանրությանը ներկայացնել իրավական տեսակետից անխոցելի և առարկություն չընդունող «անկախության հայտ»: Եվ այդ հայտի գլխավոր իրավական փաստարկն այն էր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հօչակվում է այնպիսի տարածքներում, որոնց հետ Ադրբեջանական Հանրապետությունը իրավական որևէ առնչություն չունի և չի պատկանել անկախ Ադրբեջանին:

Հետխորհրդային տարածքում նորանկախ միակ պետությունը, որը կարող էր արգելք լինել ԼՂ անկախացմանը, Յայաստանի Ղանրապետությունն էր, որից 1921թ. ապօրինաբար ինել էին Լեռնային Ղարաբաղը (ողջ Լեռնային Ղարաբաղը, այլ ոչ միայն ԼՂ ինքնավար Մարզի տարածքը): ԼՂ անկախությանը առարկելու համար Յայաստանի Հանրապետությունը կարող էր հիմնվել նաև 1989թ. դեկտեմբերի 1-ի վերամիավորման մասին ՀԽՍՀ ԳԽ և ԼՂԻՄ Ազգային խորհրդի «Համատեղ որոշման» վրա: Սակայն Երևանը հարգեց անկախ պետականություն հիմնելու ԼՂ ժողովրդի կամքը և «Համատեղ որոշումը» խոչընդոտ չդարձրեց ԼՂ անկախացման ճանապարհին: Երևանում մտածում էին, որ դա Բաքվի հետ հարաբերությունները հարթելու և հարցը առանց բարդությունների լուծելու ամենակարծ ճանապարհն է: 1991թ. դեկտեմբերի 10-ին միջազգային դիտորդների ներկայությամբ անկախության մասին անցկացված հանրաքվեն վերահստատեց Երկրամասի ժողովրդի՝ հայրենիքը Բաքվի Ենթակայությանը չհանձնելու 1918 թվականից ի վեր բազմիցս արտահայտված կամքը: 1991թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին Երևանում, Բաքվում և Ստեփանակերտում ընդունված պետականական ակտերից բխող իրավական գլխավոր եղուակացությունն այն է, որ մինչև մերօրյա Ադրբեջանական Հանրապետության միջազգային ճանաչումը (այն ՄԱԿ է ընդունվել 1992թ. մարտին) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացել է Ադրբեջանին իրավաբանութեն չպատկանող տարածքներում և այսօր էլ վերահսկում է այդ տարածքները:

## ՊԱՐՏԱԴՐՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄ. ԲԱՁՈՒՆ, ՀԱՅԵՐԻՆ ՑԵՂԱՍՊԱՆԵԼՈՎ, ՓՈՐՁՈՒՄ Է ԼՈՒԾԵԼ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ԽՆԴԻՐԸ\*

Ղարաբաղյան շարժումն ի սկզբանե ուներ քաղաքակիրք բնույթ: Այս, առաջ քաշելով՝ մայր հայրենիքի հետ վերամիավորվելու գաղափարի իրականացման անհրաժեշտությունը, հետապնդում էր Արցախ աշխարհի գոյության վտանգների կանչնման, սահմանադրական եղանակով պատճական արդարության և ազգային արժանապատվության վերականգնման նպատակ: Տասնյակ տարիներ պարբերական ճնշումները և խորականության դրսւորումները պայմաններ էին ստեղծել բնակավայրի հայարափման համար: Աղրբեջանի կազմում ԼՂ ինքնավարության տարիներին հայ ազգաբնակչությունը 95%-ից 20-րդ դարի 80-ականների վերջին հասել էր 75%-ի: Հայարափման այսօրինակ միտումները սպառնում էին ընդգրկել առավել լայն ծավալներ՝ վտանգելով ԼՂ-ում հայերի գոյությունն ընդհանրապես, ինչպես ականատես եղանք Նախշելանում:

Ղարաբաղյան շարժման հենց սկզբում Խորհրդային Կենտրոնի ճիգերը՝ քաղաքական նպատակահարմարությունից ելնելով՝ շարժումը հանգեցնել ծայրահեղականության քաղաքական դրսւորումների, և փորձերը՝ այդ խնդիրը լուծել տնտեսական եղանակով, անցան ապարդյուն: Եվ դա բնական էր: Հակասությունները առավել խորքային էին, քան դա պատկերացնում էին Կենտրոնում: Օրակարգում էր Ղարաբաղում և նրա հարակից տարածքներում հայկական տարրի լինել-չլինելու, ֆիզիկական գոյության հարցը, որը, բնականաբար, հնարավոր չէր լուծել կոսմետիկ քայլերով:

Այս պայմաններում ԼՂ տարածքում և նրան հարակից աղրբեջանական գյուղերում տեղակայված հատուկ նշանակության ջոկատների հիմնական խնդիրն էր ահաբեկչական գործունեություն իրականացնել շրջակա հայկական գյուղերի շրջակայքում, որի արդյունքում լարվածություն էր տիրում ԼՂ աղրբեջանաբնակ գյուղերին սահմանակից հայկական գյուղերում, որոնք արդեն զբաղված էին իրենց ինքնապաշտպանության խնդիրներով:

Աղրբեջանցիների՝ հայարափման այս ծրագիրը բացահայտվեց առավել վաղ, քան աղրբեջանական տեղական և հանրապետական իշ-

\* Գյուղը պատրաստելիս օգտվել ենք Ս. Հասրաբյանի հեղինակած «Գոյամարտ» (1998թ.) և «Ղարաբաղյան պատերազմ»(2001թ.) աշխատություններից

խանությունները կարող էին ակնկալել: Այս պայմաններում կենսական դարձավ աղրբեջանական գյուղերի շրջակայքում գտնվող, ինչպես նաև սահմանամերձ հայկական գյուղերի պաշտպանությունը: Ի դեպ, նշենք, որ մինչ այդ աղրբեջանական ղեկավարության հեռահար ցուցումով կանխավ առգրավվել էին երկրամասի բնակչության մի զգալի մասի մոտ գտնվող որսորդական հրացանները, հակակարկուային հրանոքները և հաշված ժամերի ընթացքում տեղափոխվել Աղրբեջանի կողմից վերահսկող տարածքներ:

Խորհրդային կարգերի փլուզման դեպքում իր ամբողջականության վտանգը չեզոքացնելու նպատակով Աղրբեջանը ծերնամուխ էր եղել ԼՂ-ն հիմնահատակ կործանելու, հայ բնակչությանը ոչնչացնելու հետևողական մշակված ծրագրի իրականացմանը, որին անմիջական մասնակցություն և աջակցություն էր ցուցաբերում կաշառված խորհրդային հրամանատարական կազմը: Այս տեսանկյունից ԼՂ մայրաքաղաքը Ստեփանակերտը հայտնվեց նրանց հանցավոր ծրագրերի կենտրոնում: Իրավիճակը բարդ էր նաև այն տեսանկյունից, որ Ստեփանակերտը ճակատագրի բերումով հիմնականում շրջապատված էր մի շարք աղրբեջանական գյուղերով, ուր իր բնակչության անվտանգությունն ապահովելու և հայերի հարձակումներից պաշտպանելու նպատակով տեղակայվել էին աղրբեջանական ներքին գործերի հատուկ գորամիավորումները: Այդ գյուղերում ամեն օր վայրէջ էին կատարում ռազմական և քաղաքացիական նշանակության ուղղաթիռներ, որոնք թնդանոթներ և այլ զինատեսակներ էին մատակարարում տեղական գորամիավորումներին:

Որքան էլ տարօրինակ է, սակայն միութենական կառավարությունն այս շրջանում քար լուսաբառ էր պահպանում իրավիճակի կայունացման գործում՝ չձեռնարկելով ոչ մի քայլ պատանմերի՝ իրենց բնակավայրեր վերադարձնելու հարցում:

Եվ այս ամենի պարագայում կարգավորմանն ուղղված միջոցառումների փոխարեն Կենտրոնը՝ Ս. Գորբաչովի հրահանգով, տարածաշրջանի հայազգի ազգաբնակչության իրավունքների պաշտպանության միակ երաշխավոր համարեց Աղրբեջանին՝ այդկերպ կամաց լուս վառելով վերջինիս՝ հայարափման ծրագրերի իրականացման համար: Դա հոդ էր նախապատրաստում Աղրբեջանի պատժիչ գործողությունների համար, որոնք իրենց երկար սպասել չտվեցին:

Չնայած Ստեփանակերտում կոահեցին վտանգը, սակայն չէին պատկերացնում դա ծավալները: Հաշված ժամերի ընթացքում Խորհրդային գործերի անմիջական մասնակցությամբ հայարափման լայնածավալ գործողություն իրականացվեց Հահումյանի շրջանում: 1991թ.

ապրիլից տարբեր հաճախականությամբ մինչև հուլիսի սկիզբ շարունակվեց ադրբեջանական զորամիավորումների և խորհրդային զորքերի համատեղ ռազմական գործողությունը, որն ուներ «Օղակ» անվանումը: Դրա նպատակը հայարձնակ գյուղերի հայաթափումն էր: Իրականացնելով Շահումյանի հայաթափման գործողությունը՝ Ադրբեջանը մտադիր էր ապակյունացնել ԼՂ-ի ներքին դրույթունը, իյուսիսային Ղարաբաղից տասնյակ հազարավոր փախստականների մուտքով լարվածություն տարածել ԼՂ հայ ազգարնակչության շրջանում, կոտրել հնարավոր պայքարի թափն ու ոգին:

Ադրբեջանի իշխանությունները, ձեռնամուխ լինելով ռազմական պատժամիջոցների, դրանք իրականացրին ոչ միայն բուն ԼՂԻՄ տարածքում, այլ նաև 1923թ. նարզից բռնի անջատված հայկական բնակչայրերում՝ Գետաշենում, Մարտունաշենում և մի շարք այլ հայկական բնակավայրերում:



**Մինչ ինքնառաջաշտանության կազմակերպումը ԼՂ ազգաբնակչությունը միայնակ էր մնացել ադրբեջանական զորամիավորումների և խորհրդային զորքերի տեղական հրամանատաների առջև:**



**Գետաշենի փախստականները**

Այս անելանելի դրության պայմաններում ստեղծվեցին ինքնապաշտպանության ուժերի մարզային շտաբեր, որոնք ընդգրկում էին 14-50 տարեկան մարդկանց և նպատակ ունեին պարտիզանական նարտերով դիմագրավել ադրբեջանական լավ զինված խմբավորումներին:

«Օղակ» գործողության արդյունքում տեղահանվեցին հազարավոր հայ բնակիչներ, նրանց մի մասը ենթարկվեց խոշտանգումների, մի մասը սպանվեց:

Այս պայմաններում լիարժեք շրջափակման մեջ գտնվող ԼՂ-ն հայտնվեց նոր փորձությունների առջև: Ադրբեջանի դեկավարության ցուցումով անջատվեց ԼՂ Էնթրանանցումը և գազամատակարարումը, բնակչության բռնի տեղահանումը նոր ծավալ ստացավ: Այդ շրջանում տեղահանվել էր բնակչության 1/3-ը, փաստացի անդամահատվել էր ողջ երկրամասը:



Սեփականակերտի բնակիչները ջուր են հայթայթում

Այս զարգացումներին զուգահեռ՝ հայ կամավորականների խմբերը, որ զինված էին հիմնականում որսորդական հրացաններով, փորձում էին պարտիզանական պայքարի միջոցներով ինչ-որ կերպ հակադարձել ադրբեջանական ՕՍՕՆ-ին:

Ուզմաքաղաքական նման իրավիճակում ԼՂ-ի հայության համար ինքնապաշտպանության կազմակերպման գաղափարը՝ որպես կենսական անհրաժեշտություն, վերաճել և դառնում էր գոյատևման առանցքային կարևորության գործոն: Տարերայնորեն կազմավորված կամավորական ջոկատները ժամանակի և իրավիճակի թելադրանքով վերակազմավորվում էին և համալրում սեփական շարքերը: Յուրաքանչյուր բնակավայր իր պարտքն էր համարում ունենալ ինքնապաշտպանական իր ջոկատը, որը թույլ էր զինված, բայց կարողանում էր որոշակի պաշտպանական գործողություններ իրականացնել: Այս պարագայում, կարելի է ասել, իրականացվող բոլոր գործողությունները բխում էին իրավիճակային համատեքստից ու բխում էին դեպքերի զարգացման հաջորդականությունից և ունեին ընթացիկ բնույթ:

Այս ժամանակահատվածում Ադրբեջանի դեկավարության հաշվարկները՝ կայծակնային արագությամբ, մինչև միջազգային հանրությունը կտեղեկանա, արյան մեջ խեղդել ԼՂ-ի հարցը՝ ոչնչացնելով նրա ինքնավարությունը, բավական իրատեսական էին թվում, քանզի նախ և առաջ առկա իրողությունների ներքո ադրբեջանական կողմը սկսում էր աստիճանաբար զինվել իր տարածքում առկա խորհրդային պատկանելության զինատեսակներով. հանգամանք, որն այդ երկրի հայածննման գործունեությունը լիովին նոր ռելսերի վրա կղմեր:

ՈԴ-Ծ, որպես Խորհրդային Միության իրավահաջորդ, 1992թ. մայիսի 5-ին Տաշքենդյան համաձայանգրով փորձեց թույլ չտալ անդրկովկասյան որևէ հանրապետության ռազմական գերազանցությունը մյուսների նկատմամբ: Անդրկովկասյան բոլոր հանրապետությունների համար սահմանեց զինամթերքի համահավասար մասնաբժիններ, ըստ որի հանրապետություններից յուրաքանչյուր ստանալու էր 220 տանկ, 285 իրետանային կայանք, 110 մարտական ինքնաթիռ, 50 հարվածային ուղղաթիռ: Սպառազինությունների նման հավասարազոր բաշխումը ձեռնոտու չէր Ադրբեջանին, այդ պատճառով նա ընդդեմ Տաշքենդյան արձանագրությունների հայտարարեց, որ իր տարածքում գտնվող ողջ զինամթերքը իրեն է պատկանում: Պատճառը պարզ ու հասկանալի էր. նրա տարածքում էր գտնվում անդրկովկասյան զորքերի մի զգալի մասը, ռազմական ինքնաթիռներ, ուղղաթիռներ, զինամթերքի պահեստներ: Միայն ծանր զինտեխնիկական (տանկեր, գրահապատ մեքենաներ, հրետանի) իր թվաքանակով գերազանցում էր Հայաստանին 15%-ով և Վրաստանին 27%-ով: Ավելի կոնկրետ՝ Ադրբեջանում տեղակայված 4-րդ բանակն ուներ 1310, Հայաստանի 7-րդ բանակը՝ 1107, իսկ Վրաստանի բանակային 31-րդ կորպուսը՝ 995 միավոր ծանր տեխնիկա:

Փաստացի տարատեսակ զինամթերքի մասով Ադրբեջանը գերա-

զանցում էր Հայաստանին և Վրաստանին միասին վերցրած: Աղրբեջանի տարածքում առկա էին մեկ ռազմավարական (7700-ից ավել), երկու օկրուգային (1100-ից ավել) և երեք դիվիզիոնային զինամթերքի պահեստներ (յուրաքանչյուրում 150-200 վագոն), որոնց ընդհանուր տարողությունը կազմում էր ավելի քան 10000 վագոն: Այսօրինակ ռազմական գերազանցությունը Աղրբեջանին վստահություն ներշնչեց, որ ԼՂ հարցի լուժնան բանալին ռազմադաշտն է: Իրավիճակը ԼՂ և Հայաստանի համար ավելի հստակեցվեց, եթե Աղրբեջանի նախագահ Ա.Մութավիրովը հայտարարեց, թե ամեն բան՝ այդ թվում տնտեսությունը, պետք է աշխատի հանրապետության տարածքային անբողջականությունը ռազմական ճանապարհով վերականգնելու համար:

Այսօրինակ զարգացումների համատեքստում ԼՂ-ի ղեկավարությունը, հասկանալով, որ մարտահրավերը նետված է, 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում գումարած Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի և Շահումյանի շրջխորհրդի միացյալ նիստում ընդունեց պատմական որոշում, ըստ որի Մարզի և Շահումյանի շրջանն ընդգրկող ողջ տարածքը հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Սա անսպասելի էր Աղրբեջանի համար, և 3 շաբաթ անց սկսվեց Բաքվի պատասխան գործողությունը: 1991թ. սեպտեմբերի 25-ին Շուշիից առաջին անգամ «Ալազան» տիպի հրթիռներով ռմբակոծվեց Ստեփանակերտը: Մայրաքաղաքը շրջապատող ռազմական խոշոր հենակետերի վերածված աղրբեջանական գյուղերում հասուլ նշանակության զինված ջոկատները կազմ ու պատրաստ՝ հարմար առիթի էին սպասում՝ ներխուժելու նրա արվարձաններ: Հանդիպակաց բարձունքներից նշանառությունը հաճախ էին կրակի տակ առնում անգեն քաղաքացիներին:

ԼՂ քաղաքացիների մի մասը վստահ էր, որ խորհրդային բանակի 366-րդ գունդն այս պայմաններում թույլ չի տա, որ ողբերգական որևէ դեպք տեղի ունենա ԼՂ-ում, եթե անգամ ակտիվ չնասնակցի, ապա գոնե իր հովանու տակ կառնի հայ ազգաբնակչությանը, սակայն ապարդյուն գունդը մտադրություն չուներ պաշտպանության տակ առնել Ստեփանակերտը:

Այս ամենի ներքո ինքնապաշտպանական նպատակներով 1991թ. վերջերին և 1992թ. սկզբներին ԼՂ-ում կազմավորվեցին հայերից կազմված 10-ից ավելի վաշտեր և դասակներ, ուր ընդգրկվեցին մոտ 1000 ազատամարտիկներ: Կենսական խնդիր էր ինքնապաշտպանության կազմակերպման հարցը:


1992թ. հունվարի 26-ին Քարինտակ գյուղի (Շուշիից 1 կմ հարավ) մատուցմերում 12-ժամյա արյունահեղ մարտում ջախջախիչ պարտություն կրեցին Աղրբեջանի պաշտպանության նախարար Մեհսիլի գլ-

խավորությամբ Շուշիից հարձակման անցած աղրբեջանական մեծաքանակ ուժերը:

1992թ. փետրվարի 16-ին Շուշիից աղրբեջանական կողմն «Գրադ» և «Ուրագան» ռեակտիվ կայաններից զանգվածային գնդակության ենթարկեց Ստեփանակերտը (300 արկ): Գրանցվեցին մեծաթիվ ավերածություններ և մարդկային կորուստներ:



<http://press.karabakh.info>



27-30. С ноября 1991 года по 8 мая 1992 г. из Шуши и прилегающих к Степанакерту азербайджанских сел (которые были превращены в опорную базу азербайджанской армии) по столице НКР было выпущено около 15 тысяч снарядов и ракет. Фотоснимки (NN 27-30) показывают лишь некоторые жилые здания разрушенного Степанакерта.  
Фото апрель 1992 г.



*Ստեփանակերտը հերթական գնդակոծությունից հետո*


1992թ. փետրվարի 17-ին Արցախյան ինքնապաշտպանական ուժերը գրավեցին ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Ղարադաղուի աղբբեջանական ռազմական հանգույցը (ԼՂՀ Մարտունու շրջան):

Դեպքերի նմանօրինակ զարգացման պարագայում ազատամարտիկների առաջնահերթ խնդիրներից մեկը եղավ Ստեփանակերտ արդեն օր ու գիշեր ռմբակոծող հենակետերը լրեցնելը:

Ստեփանակերտի հարակից գյուղերում աղբբեջանական կրակակետերը գնդակոծում էին մայրաքաղաքը բոլոր տիպի զինատեսակներից: Քաղաքը պարենային անվտանգության, բուժսարքավորումների և դեղորայքի կարիք ուներ, սանդի պաշարները չէին բավարարում: Ի դեպ, գնդակոծման էին ենթարկվում հենց բնակելի թաղանասերը և հիվանդանոցները:

Անհրաժեշտ էր չեզոքացնել Ստեփանակերտի արվարձաններից մեկի՝ Երբեմնի Կառկառաշենի (Կրկժան), ինչպես նաև Մայլիբեյլի և Շուշի լար բնակավայրերի աղբբեջանական կրակակետերը, որտեղ տեղակայված աղբբեջանական ՕՍՕԾ-ի հենակետերից ամեն օր գնդակոծվում էին Ստեփանակերտը և հարակից հայկական բնակավայրերը:

ԱՏԵՓԱՆԿԵՐԸ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԹԵՍԱՎԱԿԱԿ  
ԴԵՆԱԿԵՏԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԱՎԱՍՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՕՊԵՐԱԾԻ ՊՈ ՄԱԿՈՅՈՒՅՆ ՎՐԱՋԵՍԿԻ  
ՕՊՈՐՆԻ ՊՈՒՆԿՏՈՎ ՅՈՒՐԳ ՍՏԵՓԱՆԱԿԵՐԸ  
11.02 - 09.05.92



Ստեփանակերտը շրջապատող աղբբեջանական կրակակետերը

Ի պատասխան արցախահայերի ինքնապաշտպանական ջոկատների գործողությունների, 1992թ. փետրվարի 23-ին Շուշից հրթիռների տարափ տեղաց Ստեփանակերտի վրա: Այդ ժամանակ Աղդամում գտնվող աղբբեջանցիների ազգայնական խմբավորումները առանց դիմադրության հարձակվեցին և կողոպտեցին խորհրդային բանակի ռազմամթերքի օկրուզային պահեստը (728 վագոն հրետանային, 245 վագոն ռեակտիվ արկեր, 131 վագոն հրաձգային զինամթերք): Գրավված զինամթերքը բավարար էր նույն մեկ տարի ակտիվ ռազմական գործողություններ իրականացնելու համար:



<http://pres-ka.ru>

#### ԼՂ Պատմանական զորամիավորումները

Մի քանի օր անց աղբբեջանական զորամիավորումները սկսեցին հայկական բնակավայրերի լայնածավալ գնդակոծությունները: Ռազմական և քաղաքացիական ուղղարիռներով օրական մի քանի անգամ ռազմական տեխնիկա և զինամթերք էր մատակարարվում Ստեփանակերտի շրջակա աղբբեջանական խոցալու, Զանհասան, Ղայրալիշեն, Քյոսալար, Նարիլար գյուղեր և Շուշի քաղաք, որոնք վերածվել էին հայ ազգարնակչության ռմբահարման կրակակետերի: Ամեն օր հարյուրավոր արկեր էին թափվում Ստեփանակերտի բնակելի թաղանասերի վրա՝ հողին հավասարեցնելով բնակելի ամբողջ թաղանասեր: Իրավճակը իրապես անելանելի էր, և ԼՂ ինքնապաշտպանական ուժերը խնդիր դրեցին ճեղբելով շրջափակումը՝ լրեցնել Ստեփանակերտը ռմբահարող կրակակետերը: Դրա համար անհրաժեշտ էր չեզոքացնել Ասկերանի շրջկենտրոն տանող ճանապարհին գտնվող խոցալուի կրակակե-

տր: Դա հնարավորություն կտար քաղաքի ռմբահարման թափը կոտրել և անցնել մյուս կրակակետերի լոեցմանը:

1992թ. փետրվարի վերջին ԼՂ հնբնապաշտպանական զորամիավորումները կարողացան լոեցնել Ստեփանակերտն ամեն օր գնդակոտող խոշալուի կրակակետը, որի արդյունքում հակառակորդը մարտադաշտում բռնեց 3 զրահամեքենա, 2 հրթիռային կայանք, 1 թնդանոթ, շուրջ 100 մարտական հրացեն և զգալի զինամթերք: Իսկ հայկական հնբնապաշտպանական զորամիավորումների՝ դեպի Աղդամ նահանջի թողնված ճանապարհին խոշալուի բնակչության գազանաբար ոչնչացրին Աղբեջանի ժողովակատայինները:

Իրավիճակը ողջ ԼՂ-ում շարունակում էր մնալ պատերազմական: Այս իրադարձությունների ներքո, սակայն, խորհրդային 366-րդ մոտոհրածգային գունդը չեզոքություն էր պահպանում, քանի որ Մոսկվայից դեռևս միջամտության հրահանգ չէր ստացել: Իսկ հրահանգը չուշացավ. Կենտրոնը մարտի 10-ին կարգադրեց գունդը դուրս բերել ԼՂ տարածքից: Արանով լիարժեք արձանագրվեց մեկ կարևոր փաստ. հարցը պետք է լուծվեր տեղում, առանց Կենտրոնի միջամտության: Իսկ այդ պահին հարցի լուծնան միայն մեկ տարբերակ էր միայն իրական՝ ռազմական, որով և փորձեց առաջնորդվել աղբեջանական կողմը: Եվ պատերազմը նոր թափով շարունակվեց:

1992թ. մարտի 26-ին ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր ստեղծվեց Պաշտպանական կոմիտեն, որի նախագահ նշանակվեց Սերժ Սարգսյանը: Սա նշանակալի քայլ էր ԼՂՀ զինված ուժերի ձևավորման գործընթացի, զարգացման և հետագա ընթացքի տրամաբանության տեսանկյունից, քանի որ հնբնապաշտպանական գործողությունները հետայսու սկսեցին առաջնորդվել կազմակերպական մեկ տրամաբանությամբ:

Խոշալուի ռազմական կրակակետի լոեցման գործողությամբ Ստեփանակերտի վրա թափվող հրետանային կարկուտը չդադարեց: Զանհասանից մինչև Քիրս ծզվող աղբեջանական գյուղերը շարունակում էին համալրվել աղբեջանական թարմ ուժերով: Իսկ Շուշին հակառակորդը վերածել էր տարբեր զինատեսակներով հագեցած հզոր ամրոցի: Օրվա ընթացքում մի քանի անգամ այնտեղից հայուրավոր արկեր էին թափվում հնչակ նայրաքաղաքի, այնպես էլ մոտակա հայկական բնակավայրերի վրա: Գործում էին համարյա բոլոր տեսակի հեռահար զինատեսակները:

1992թ. մարտի 29-ին Շուշի քաղաքից, Ղայբալու, Զանհասան, Քյոսալար գյուղերից Ստեփանակերտի ուղղությամբ հարձակման անցած աղբեջանական ուժերը կատաղի մարտերում ջախջախվեցին և հետ շպրտվեցին ելման դիրքերը:

1992թ. ապրիլի 29-ին Արցախյան ինքնապաշտպանական ուժերը ջախջախիչ հակահարվածով հետ շպրտեցին Ստեփանակերտի և Քարինտակի վրա զանգվածային հարձակման անցած աղբեջանական մեծաքանակ զորամիավորումներին:

1992թ. մայիսի 7-ին աղբեջանական հետևակն ու զրահատեխնիկան, ինչպես նաև Մի-24 մարտական երեք ուղղաթիռներ լայնածավալ հարձակում ծեռնարկեցին Ստեփանակերտի հարավ-արևմտյան պաշտպանական դիրքերի վրա: Միաժամանակ նույն օրվա ընթացքում Շուշի և Զանհասանի բարձունքներից մայրաքաղաքի վրա արձակվեցին «Գրադ» կայանքի մոտ 200 հրթիռ և մի քանի տասնյակ այլ տիպի արկեր: Արդյունքում զոհվեցին բազմաթիվ խաղաղ բնակչներ, շատերը վիրավորվեցին: Նրինչակոծության հետևանքով հրդեհ բռնկվեց երկաթուղային կայարանում, մի շարք բնակելի շենքերում:



**Ստեփանակերտ գնդակոծությունից հետո**

ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի պատասխան գործողությունների արդյունքում առավելագույն ժամանակը 10-ին կոտրվեց հակառակորդի դիմադրությունը Զանհասանի և Քյոսալարի բարձունքներում. հակառակորդից գրավվեց մեկ «Գրադ» կայանք, մյուսները ոչնչացվեցին, առգրավվեց մեծ քանակությամբ զինամթերք: Զուգահեռաբար ռազմական գործողություններ էին ընթանում Շոշ գյուղի և Քիրս լեռան ուղղություններում՝ նպատակ ունենալով վերահսկողության տակ առնել Լաշինից Շուշի տանող մայրուղին:

Շուշիի մերձակա կրակակետը ոչնչացնելուց հետո ահեղ մարտեր


բռնկվեցին բուն քաղաք-ամրոցի համար: Մայիսի 8-ի կեսօրին Շուշիի պաշտպանությունը ճեղքվեց հյուսիսից և արևելքից: Մարտերը տեղափոխվեցին քաղաքի կենտրոն: Այս իրավիճակում ադրբեջանական ռազմական դեկավարությունը ձեռնամուխ եղավ ռազմաճակատի ողջ գծով՝ լայնածավալ ռազմական գործողությունների՝ նպատակ ունենալով հայկական ուժերի ուշադրությունը շեղել Շուշի-Լաչին գծից: Մայիսի 8-ին ադրբեջանական ուղղաթիռները նտան ԼՂՀ տարածք և գնդակորության ենթարկեցին Մարտունու շրջանի Ավրու, Սյուլիշեն, Նորշեն և Ասկերանի շրջանի Շոշ և Քռասնի գյուղերը: Այս ամենը, սակայն, չխանգարեց, որ ԼՂ պաշտպանական միավորումները հաջողության հասնեն Շուշիի գործողությունում: Մայիսի 9-ին Շուշին ազատագրվեց:

Սակայն այս մասին ադրբեջանական դեկավարությունը երկար ժամանակ լրում էր՝ ցանկանալով բարցնել այդ փաստը: Որպես այս ամենի տրամաբանական հետևողական՝ Արցախի պաշտպանական գորամիտավորումները ակնկալում էին, որ ադրբեջանական բանակը կանցնի պատասխան լայնածավալ գործողությունների ռազմաճակատի ողջ երկայնքով: Մայիսի 10-ին Մարտունու շրջանում ադրբեջանական զինյալների հենակետ հանդիսացող Կուրովապատկինո գյուղի շրջակա բարձունքներից և Ֆիզուլու շրջանի տարածքից ուժգին հրթիռահրետակոծության ենթարկեցին Մարտունի քաղաքն ու նրա շրջակայքը: Ընդհանուր առմամբ մի քանի ժամվա ընթացքում նշված տարածքների վրա արձակվեց 44 հրթիռ, իսկ մեկ օր հետո՝ նախօրեին կրած անհաջողություններից գազազած հակառակորդն աննախադեպ ուժեղ գրոհ ձեռնարկեց այս անգամ արդեն Մարտակերտի սահմանամերձ գոտու հայկական բնակավայրերի վրա: Մայիսի 11-ի առավոտյան «Գրադ» կայանքներից ու ծանր թնդանոթներից նախապես ուժգին հրետակոծելով շրջանի Չայլու, Մարտալա, Կարմիրավան գյուղերը և Մարտակերտ քաղաքը՝ Ադրբեջանի զինուժը գրահատեխնիկայով և մեծաքանակ հետևակով Աղդամից առաջ ընթացավ դեպի Մարտալա գյուղի պաշտպանական դիրքերը:

Պատերազմի բոցերը ներառող շրջանակը օրըստօրե ավելի էր ծավալվում: Սահմանամերձ տարածքներում ծավալված պաշտպանական մարտերին զուգահեռ՝ դարաբաշյան ուժերին հաջողվեց հարվածներով ջլատել, ապա՝ չեզոքացնել հակառակորդի դիմադրությունը Շուշի - Լաչին հատվածում: Մայիսի սկզբին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ստորաբաժանումներին հաջողվեց ազերիներին դուրս մղել ռազմական հենակետերի վերածված հսաբուլադ, Զարիսլու, Լիսագոր գյուղերից, ապա զարգացնել առաջխաղացումը: Մայիսի 17-ին՝ ադրբեջանական ՕՍՕՆ-ի կողմից Բերդաձորի ենթարդանի գյուղերը հայաթափելուց ու-

ղիղ մեկ տարի անց, ազատագրվեցին Ծաղկաձոր, Կանաչ Թալա, Մեծ Շեն, Եղծահող բնակավայրերը, դրանով իսկ լիակատար և վերջնական հսկողություն հաստատվեց ամբողջ Շուշի շրջանի վրա: Մայիսի 18-ին ԼՂՀ ինքնապաշտպանական միավորումները մտան Լաչին (Քաշաթաղ): Դա առանցքային հաղթանակ էր, քանի որ բացվեց Ղայաստանի հետ կապի կյանքի ճանապարհը:

ԼԱՂԻՆԻ ԵՎ ՂԱՐԱԿԻՑ ԹՃԱՍՎԱԿԱՆ ՀԵՆԱԿԵՏԵՐԻ  
ՎԵՐԱՑՎԱԾ ՊԱԶՄԱՎԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ОПЕРАЦИЯ ПО УНИЧТОЖЕНИЮ ВРАЖЕСКИХ ОПОРНЫХ  
ПУНКТОВ ЛАЧИНА И ПРИЛЕГАЮЩИХ РАЙОНОВ  
05 - 10.92



Լաչինի ազատագրման գործողությունը

Մայիսի 20-ի առավոտյան ադրբեջանական Շաֆագ և Թողան ռազմակայաններից ուժքին գնդակոծության ենթարկվեցին հայկական Ղարաջինար գյուղը և Շահումյան շրջկենտրոնը:

Նույն օրը Ֆիզուլիի շրջանի Դիլաղարդա գյուղի տարածքից հրթիռակողմանը գյուղը: «Գրադ» կայանքից և ծանր թնդանոթներից գյուղի վրա արձակվեց 35 հրթիր և արկ: Ծնտրելով մարտավարության նման տարբերակ՝ ադրբեջանական կողմը ձգտում էր դրանով իսկ, թե կուզ արհեստականորեն, պահպանել լարվածությունը տարածաշրջանում՝ միաժամանակ նպատակ ունենալով ավերածությունների միջոցով հոգերանական գրոհի ենթարկել և ընկճել Արցախի սահմանամերձ գյուղերի բնակչությանը:

Մայիսի վերջերին և հունիսի սկզբներին հակամարտության գոտում լարվածությունը համեմատաբար նվազեց: Միայն առանձին հատվածներում ընդմիջումներով գրանցվում էին հրետակոծության դեպքեր, ինչը հիմնականում պայմանավորված էր նրանով, որ այդ ժամանակահատվածում Բաքվի կառավարող շրջանակների և ընդդիմության ուշադրությունը բևեռված էր հունիսի 7-ին հանրապետությունուն կայանալիք նախագահական ընտրությունների նախապատրաստնան:

Չնայած լայնածավալ ռազմական գործողությունների բացակայությանը, այնուամենայնիվ, ամառվա սկզբներին ԼՂՀ սահմանամերձ գոտու երկարությամբ, ըստ ԼՂ ինքնապաշտպանության ուժերի հետախուզության տվյալների, նկատվում էին ադրբեջանական զինյալների մեծ տեղաշարժեր: Ուրաքարուի, Զարբայիլի, Աղդամի, Թարթարի և Գերամբոյի շրջաններում կուտակվում էին ադրբեջանական բանակի մեծաքանակ ուժեր:

1992թ. հունիսի 7-ի գիշերը, այն բանից հետո, երբ արդեն հայտնի դարձավ որ Աժճ-ի դեկավար Ա. Էլշիրեյը հաղթանակել է Ադրբեջանի նախագահական ընտրություններում, ուժեղ հրիհարետակության ենթարկեց Մարտակերտ քաղաքը: Աղդամի շրջանի տարածքից «Գրադ» կայանքներից և ծանր հրետանուց շրջկենտրոնի վրա արձակվեց 100-ից ավել հրթիր: Նույն օրը հրասայլերից, տարբեր տրամաչափի թնդանոթներից և այլ զինտեխնիկայից ուժբակովնեցին Ասկերանի և Յաղորւթի շրջանի մի շարք բնակավայրեր:

Հունիսի 12-ին ռազմական օժի հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան ուղղություններով ազերական զրամիավորումները անցան լայնածավալ հարձակման: Շուրջ 120կմ երկարությամբ մարտական քատերաբեմի վերածված ռազմաճակատային հատված նետվեց ռազմական ողջ ներուժը, այդ թվում՝ Գյանջայում տեղակայված նախկին ԽՍՀՄ 4-րդ բանակի ուժերը՝ մոտ 150 տանկ և տասնյակ հազարավոր հետևակ:

Զենարկված հանկարծակի և լայնածավալ հարձակման հետևան-

քով ԼՂ-ում ստեղծվեց ծանր կացություն: Իրավիճակը ծանր էր հատկապես Ասկերանի ուղղությամբ. զավելվով Նախիջևանիկ գյուղը, Փրձամալը և Աղբուղաղը՝ հակառակորդն ընդհուած մոտեցավ Ասկերան շրջկենտրոնի նատույցներին: Նույն վիճակն էր նաև Կիչան-Սրիխավենդ հատվածում: Մարտակերտի շրջանում իրավիճակը նույնպես ծանր էր:

Հունիսի երկորրդ կեսին մարտերը շարունակվեցին Մարտակերտի հյուսիս-արևելյան հատվածում: Ադրբեջանական ուժերը, ունենալով տեխնիկայի և կենդանի ուժի մեջ առավելություն, հիմնահատակ ավերեցին Շահումյանի ողջ շրջանը, ապա Մարտակերտի դաշտային մասը՝ իր խոշոր բնակավայրերով: Մարտակերտ քաղաքը հայտնվեց հրետակոծության կիզակետում: Աննախաղեակ հարձակման արդյունքում բռնագաղթի ճանապարհը բռնեց առնվազն 40 հազար բնակիչ: Ստեղծված իրավիճակում ԼՂ դեկավառությունը ԼՂ-ում հայտարարեց արտակարգ իրավիճակ և մասնակի զորահավաք:

Ծանր էր վիճակը նաև ռազմաճակատի արևելյան և հարավ-արևելյան հատվածներում: Հունիսի 28-ի լուսադեմին Ադրբեջանի ազգային բանակը հետևակի գրոհից առաջ հրետանային նախապատրաստության դիմեց Ասկերանի, Մարտունու շրջանի նարտար, Մածկալշեն գյուղերի, Կարմիր Շուկա ավանի և Յաղորւթի շրջանի Տող, Ցոր ու Սարիշեն գյուղերի ուղղությամբ: Իրավիճակը հուսադրող չէր: Յայկական միավորումները անհավասար մարտերի արդյունքում նահանջեցին, սակայն նույն օրը երեկոյան ԼՂ ինքնապաշտպանական ուժերը, բացառությանը Ցոր գյուղի, Վերագրավեցին բոլոր զիջած դիրքերը: Մարտական գործողությունների ընթացքում հակառակորդը կրեց կենդանի ուժի և ռազմական տեխնիկայի մեջ կորուստներ: Սպանվեց հակառակորդի առնվազն 300 զինվոր: Գերի վերցվեցին 4-ը, որոնցից մեկը՝ ազգությամբ չեղեն: Ոչնչացվեց 9 հրասայլ, 7 միավոր այլ ռազմական տեխնիկա:

1992թ. հուլիսի 4-ին երեք ուղղություններով՝ Լենինավանի, Կարմիրավանի և Փափրավենդի կողմից հարձակման անցած ադրբեջանական հսկայական ուժերի (նաև մեծաթիվ վարձկաններ ԱՊՃ-ից և Թուրքիայից, 70 հրասայլ և այլ զինտեխնիկա) ճնշման ներքո հայկական ուժերը կեսպիշերին մոտ բռնեցին ԼՂ Մարտակերտ քաղաքը: Մարտական գործողությունների ողջ ընթացքում Մարտակերտը գնդակոծվում էր ՍՈՒ-25 ինքնաթիրից: Արդիական տեխնիկայով և խորհրդային զինապահեստների ռազմամթերքով զինված ադրբեջանական զրամիավորումները բնաջնջում էին այն ամենն ինչ հայտնվում էր հրենց ճանապարհին: Ոչնչացվեցին տասնյակ բնակավայրեր, սպանվեցին հարյուրավոր խաղաղ բնակիչներ, հազարավորները հայտնվեցին բնաջնջման սպառնալիքի տակ:

Հետագա օրերին թշնամին գրավեց նաև Թարթառի ողջ ձախափնյա մասը: Իրավիճակը ծանր էր, և հայկական ինքնապաշտպանական զորամիավորումները նահանջեցին՝ դիրքավորվելով ներքին Յոհաթաղ գյուղի մոտ:

Այսօրինակ հանգամանքները ստիպեցին, որ հայկական ինքնապաշտպանական զորամիավորումները անցնեն առավել կտրուկ պաշտպանական գործողությունների: Յակառակորդն ամեն կերպ ուժեղի գերակշռությամբ ցանկանում էր զարգացնել իր առաջխաղացումը նաև դեպի Չլդրան:

Յուլիսի կեսերին կանգնեցնելով ադրբեջանական զորամիավորումների առաջխաղացումը՝ ԼՂՀ ինքնապաշտպանական զորամիավորումների հրամանատարությունը գործողության մեջ դրեց օպերատիվ-ռազմավարական հակահարձակնան պլանը, որը սկսեց քայլ առ քայլ իրագործվել:

Կանգնեցնելով հակառակորդի առաջխաղացումը և իրենց ձեռքում պահելով Չլդրան գյուղը, ինչպես նաև մարտագծում նախաձեռնությունը վերցնելով իրենց ձեռքը՝ դարձարդոյան ուժերի ուշադրությունը շարունակում էր մնալ երկրի հյուսիսում առկա վիճակը: Դրմբոն-Չլդրան մարտերից հետո ԼՂՀ ինքնապաշտպանական միավորումները անցան կազմակերպված հակառակորդի: Յակառակորդը դիմեց փախուստի: Յուլիսի 11-ին ազատագրվեցին Մեհմանա, Կուսապատ, Գյուլաթաղ, Զանյաթափ և Մոխտաթաղ գյուղերը:

4 օր անց ինքնապաշտպանական զորամիավորումների վերահսկողության ներքո անցավ Սարսանգի հիդրոհանգույցը: Յյուսիս-արևմտյան ուղղությամբ զարգացնելով առաջխաղացումը՝ արցախյան ուժերը հուլիսի 19-ին մտան Յաթերը, ապա ազատագրեցին Զարդախսազ, Իմերեք Քերվանդ, Չափար գյուղերը: Ադրբեջանական գործը նահանջում էր՝ թողնելով իր վիրավորներին ու մեծաքանակ զենք-զինամթերը:

Անհաջողությունից հետո հակառակորդը դիմեց իր կողմից արդեն բազում անգամ կիրառված քայլերի: Յուլիսի 31-ին օդուժը սկսեց ռմբակոծել Ստեփանակերտի հարավ-արևմտյան շրջանները: Յրետանային անհախաղեա գնդակոծության հետևանքով սպանվեց և վիրավորվեց 106 խաղաղ բնակիչ, ավերվեցին տասնյակ բնակելի շենքեր: Նույնը կրկնվեց օգոստոսի 5-ին. արդեն ՍՈՒ-25-ից ռմբակոծվեցին Ասկերանի շրջանի Դահրագ գյուղը և շրջակա տարածքները:

Օգոստոսի 10-ին դրությունը բարդացավ ադրբեջանա-դարաբաշյան ռազմաճակատի հարավ-արևելյան և հարավյան հատվածներում: Ֆիգուլու, Զանգելանի և Ղուբարլու շրջաններուն տեղակայված թշնամական հենակետերից գնդակոծվեցին Յադրութի սահմանա-

մերձ գյուղերն ու Կարմիր Շուկայի ձորակի բնակավայրերը: Միայն Կարմիր Շուկայի վրա արձակվեց 50-ից ավելի արկ:

Յյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածներում չկարողանալով զարգացնել իր հաջողությունները, կրելով ռազմական տեխնիկայի և կենդանի ուժի գգալի կորուստներ՝ Ադրբեջանի ռազմական գերատեսչությունն ուժերը փորձարկեց՝ այս անգամ գրոհելով Քելբաջարից: Միաժամանակ մարտերը շարունակվեցին նաև Մարտակերտի հատվածում, որտեղ անհավասար ուժային հարաբերակցության պարագայում հակառակորդին հաջողվեց գրավել Գետավան, Չափար, Զարդախսազ, Յաթերը գյուղերը: Օգոստոսի 20-ին մարտերը շարունակվեցին Մարտակերտում:

Շնայած Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարում էր, թե չեն ռմբահարվում քաղաքացիական օբյեկտներ, սակայն մեկ շարաթվա մեջ Ստեփանակերտի վրա նետվեց ավելի քան 20տ ռումբ: Օգոստոսի 18-ին, 22-ին և 23-ին մայրաքաղաքի օդային ռմբակոծության հետևանքով զոհվեց 40 և վիրավորվեց 200-ից ավելի խաղաղ բնակիչ, որոնց գերակշիռ մասը կանայք, ծերեր ու երեխաններ էին:

1992թ. հունիսի 13-ից ԼՂՀ հակաօդային ուժերը Ասկերանի, Յաթերքի, Չլդրանի և Ստեփանակերտի օդային տարածքներում ռչչացրին ադրբեջանական ռազմական օդուժի 6 ռմբակոծիչ և 5 մարտական ուղղաթիռ: Յակառակորդը Արցախում կորցրեց 2000-ից ավելի զինյալ, շուրջ 70 հրասայլ, 50-ից ավել զրահատեխնիկա, «Գրադ» կայանքներ, հրետանի:


Այս ամենով հանդերձ, սակայն, ադրբեջանցիները վերսկսեցին ռազմական գործողությունները: Ողջ ամառվա ընթացքում հակամարտության ամենաբեժ կետը մնում էր Մարտակերտը:

Սեպտեմբերի 4-ի առավոտյան Ադրբեջանի ազգային բանակի գինյալները Աղյամի շրջանի Աբդալ և Գյուլափիլի գյուղերից շարժվեցին Մարտունու շրջանի սահմանամերձ Ավդուր, Յաշի և Նորշեն գյուղերի պաշտպանական դիրքերի ուղղությամբ՝ իրասայլերից ու հրանոթներից հրետակոծելով դրանք: Ժամը 13-ի դրությամբ Ավդալ և Գյուլափիլի գյուղերը, ինչպես նաև շրջակա կարևոր ռազմավարական նշանակության դիրքերը ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի վերահսկողության ներքո էին: Ադրբեջանցիները մարտարաշուում թողեցին 50-ից ավել զինվոր, հայկական կողմը ունեցավ 7 վիրավոր: Այս ռազմական հենակետերի ռչչացումը կարևոր էր նրանով, որ հանրապետության տարածքի մեջ սեպի պես խրված Աբդալ և Գյուլափիլի գյուղերի մերձակայքում տեղադրված «Գրադ» կայանքներից հրթիռակոծվող Ստեփանակերտը ազատվեց ամենօրյա հերթական վտանգից: Յամենատարար բարելավ-

Վեց արևելյան սահմանագծի երկարությամբ ձգվող զորքերի դիրքային պաշտպանվածության վիճակը:

ՆԱՐԱՁԻ ԵՎ ՀԱԿԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՌԱԶՄԱԳՐ-  
ԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՐՏԱԿԵՐՏԻ ԲԱԿԱՏՈՒՄ  
ՕՏԾՈՒՊԱԼԻՆԵ Ի ԿՈՆՏՐԱԾՈՒՊԱԼԻՆԵ  
ԴԵՅՏՎԻԵ ՆԱՐՏԱԿԵՐՏԸ ՓՐՈՒԹԵ

29.06.92 - 27.06.93



Մարտակերտի և նրա շրջակա բնակավայրերի ռազմական  
գործողությունները 29.06.92-27.06.93

1992թ. սեպտեմբերին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը հակառակորդի գերազանցող ուժերի դեմ պաշտպանական մարտեր էին մղում ավելի քան 400կմ ռազմաճակատի բոլոր տեղամասերում: Մասնակի հարձակողական և համարձակ հետախուզական մարտական գործողությունների արդյունքում Հադրութի, Մարտունու, Ասկերանի պաշտպանական շրջաններում զգալիորեն բարելավվեց օպերատիվ դրությունը, կայունացավ պաշտպանությունը: Միաժամանակ նվազեց հակառակորդի կողմից հեռահար կրակով ԼՂՀ քաղաքներն ու գյուղերը հարվածելու հնարավորությունը:

Սեպտեմբերի կեսերին և հոկտեմբերի սկզբին աղբեջանական համատարությունը ռազմաճակատ նետեց միանգանայն նոր զորամիավորումներ՝ փորձ անելով վերահսկողության տակ վերցնել Լաշինի մի-

ջանցքը: Միաժամանակ Ղարաբաղյան ինքնապաշտպանական զորքերի ուշադրությունը շեղելու համար հակառակորդը հարձակում ձեռնարկեց Մարտակերտի և Մարտունու ուղղություններով՝ ռմբահարելով ինքնապաշտպանական զորամիավորումների պաշտպանական դիրքերը: Դյուսիսից՝ Քելբաջարից և հարավից՝ Ղուբարլուից դարաբաղյան ուժերու սկսեցին միջանցքի պաշտպանական միջոցառումները: Սեպտեմբերի 18-ին Ղուբարլուի ռազմական հենակետից «Գրադ» կայանքով հրիւակոծության ենթարկվեցին Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը: Նույնը կրկնվեց Երկու օր հետո. այս անգամ արդեն կրակի տակ առնվեց Լաշինի և Զաբուլի շրջակայքը, որից հետո Լաշինի շրջանի հյուսիս-արևմտյան տարածքները հսկող հայկական ինքնապաշտպանական միավորումների և աղբեջանական մեծաքանակ զորքի միջև ծավալվեցին մարտեր:

Մյուս կողմից իրավիճակը բարվոք չէր նաև Չլդրան - Վաղուհաս ռազմագծում: Աղբեջանական բանակի գինյալները մեծ կորուստների գնով կարողացան սեպտեմբերի 26-ին գրավել Չլդրանը և առաջանալ Վանք - Առաջաձոր - Կիշան - Ղազանչի ուղղություններով: Ռազմաճակատում արյունալի մարտերը հաջորդում էին իրար:

Ոգևորված Մարտակերտի ուղղությամբ ձեռք բերված հաջորդություններից՝ Աղբեջանի ազգային բանակը փորձում էր ճեղքել մեր զորքերի պաշտպանությունը Կիշան գյուղի մոտ: Գործում էին զինտեխնիկայի բոլոր տեսակները: Այդ ժամանակահատվածում Կիշան - Չլդրան գիծը մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ: Հայկական ուժերն այն վերագրավելով, սակայն, բավարար ուժեր չունենալու պատճառով նորից նահանջում էին:

1992թ. հոկտեմբերի 2-ին լիովին ձախողվեց հյուսիս-արևելքից ԼՂՀ Մարտունի քաղաքի վրա ձեռնարկված աղբեջանական լայնածավալ հարձակումը: Կճական հակառակորդ հայկական ուժերը թշնամուն հետ շարտեցին ելնան դիրքերից և ազատագրեցին 2 տարի առաջ Աղբեջանի կողմից զավթված զգալի տարածքներ:

Հոկտեմբերին ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմ դարձավ Լաշինի միջանցքը: Անեն օր Լաշինը գնդակոծվում էր, մասնավորաբար Ղուբարլուից այն ենթարկվում էր «Գրադ» կայանքից ռմբակոծման: Հոկտեմբերի 4-ին, Երկոյա արյունահեղ մարտերի ընթացքում, չնայած Երկուստեք ծանր կորուստներին, լիովին ձախողվեց հյուսիսից հասցված զանգվածային հարվածի օգնությամբ Լաշինի միջանցքը գրավելու աղբեջանական դիրքերի փորձը:

Որոշակի հաջորդություններ այս շրջանում արձանագրվեցին հյուսիսային ճակատում: ԼՂՀ պաշտպանության բանակի ստորաբաժանումնե-

րը նոյեմբերի 4-ի երեկոյան Առաջաձոր և Չլդրան գյուղերի միջև ընկած հատվածում, ետ մղելով հակառակորդի առաջխաղացումը, գրավեցին 2 կարևոր բարձունք:

1992թ. նոյեմբերի առաջին կեսին կրկին ահազնացան մարտական գործողությունները Մարտակերտի շրջանում: Այս անգամ արդեն ռազմական գործողության նախաձեռնողը դպրաբայան կողմն էր: 1992թ. նոյեմբերի 10-ին Արցախի ինքնապաշտպանական ուժերը Մարտակերտի ռազմաճակատում սկսեցին վեցօրյա (նոյեմբերի 10-15-ը) հարձակողական գործողություն, որի ընթացքում ազատագրվեցին թշնամու հունիս-հուլիսյան մեծ հարձակման ընթացքում գրավված Վաղուհաս, Շարությունագոմեր, Կճողուտ բնակավայրերը՝ ընդհուապ մոտենալով Չլդրանի արևմտյան մատուցներին: Նոյեմբերի 13-ին հակառակորդին մեծ կորուստների գնով հաջողվեց կասեցնել ԼՂՀ պաշտպանական գորամիավորումների առաջխաղացումը: Նոյեմբերի 15-ին ազատագրվեց կարստագոյն հանգուցային կետ Չլդրան գյուղը՝ ստիպելով հակառակորդին նահանջել դեպի Դրմբոն: Մարտական գործողությունների ընթացքում հայկական ուժերը հակառակորդից առգրավվեցին մեկ հրասայլ, 2-ը ոչնչացրին: Օրվա վերջին ԼՂՀ ստորաբաժանումները ընդհուապ մոտեցան Թարթառ - Մարտակերտ - Քելբաջար մայրուղուն:

Թիկունքից ռազմաճակատ նետելով մեծաթիվ կենդանի ուժ և զինտեխնիկա՝ ադրբեջանական զորքերի հրամանատարությունը փորձեց վերստին տիրանալ ձեռքից բաց թողնված նախաձեռնությանը և Մարտակերտի շրջանի ռազմաճակատային գտուու ողջ երկարությամբ ձեռնարկեց լայնածավալ հակահարձակողական գործողություններ: Նոյեմբերի 17-ին հարվածի հիմնական ուղղությունը Կաղուհասի ճակատն էր: Ինչպես միշտ, այս անգամ ևս ադրբեջանական կողմը, անտեսելով մարդկային ուժի և զինտեխնիկայի կորուստը, փորձում էր ծեղքել հայկական դիրքերը, սակայն՝ ապարդյուն:

Նոյեմբերի 29-ին Լաշինի միջանցքի հյուսիսային ճակատում ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը վճռական հարձակումով գրավվեցին 4 գյուղ՝ Շայի Բազար, Լուլիդուզ, Ղոզլու և Ղարաջանլի, որով զգալիորեն ամրապնդվեց Արցախի «Կյանքի ճանապարհ»-ի ռազմական անվտանգությունը:

Ըստ Բաքվի աղբյուրների, 1992թ. 8 ամիսների ընթացքում դպրաբայան ճակատում իրենց նահկանացուն կնքեցին մոտ 5000 ադրբեջանցի զինվորներ, վիրավորվեցին ավելի քան 18000-ը, որոնցից շուրջ 2000-ը բուժվեց Աղդամի հոսպիտալում: Այդ ընթացքում ընդհանուր առմանը ադրբեջանական զինված ուժերի 20000 զինվոր դասալիք էր դարձել:

ԼՂՀ ՊԲ տրամադրության տակ եղած տվյալներով, այդ ժամանակահատվածում Ադրբեջանի բանակը դարաբայայան պատերազմում կորցրեց 115 հրասայլ, ոչնչացվեց թշնամու 10-ից ավել ինքնաթիռ և ուղղաթիռ:

1992թ. վերջին ռազմաճակատի ամբողջ երկարությամբ նկատվեց մարտական գործողությունների ակտիվության անկում:

1993թ. հունվարի սկզբներին ադրբեջանական բանակի հեռահար հրետանին սկսեց ԼՂՀ մի շարք բնակավայրերի հրետակոծությունը: Հունվարի 15-ին ադրբեջանական զորամիավորումները հարձակման անցան հյուսիսային ռազմաճակատում՝ Չլդրան-Սրիսավենոր ռազմագրոտու ուղղությամբ: Կատաղի մարտեր ծավալվեցին Լաշինի միջանցքի հարավային մատուցների շրջանում: Սակայն ինչպես այստեղ, այնպես էլ մյուս ճակատներում Ադրբեջանի զինված ուժերին չհաջողվեց շոշափելի հարված հասցնել դարաբայան դիրքերին:

1993թ. փետրվարի սկզբներին մարտական գործողություններ ծավալվեցին հյուսիսային ռազմաճակատում: Մարտակերտի շրջանի բռնազավելված տարածքները ազատագրելու նպատակով, ըստ ԼՂՀ ՊԲ հրամանատարության օպերատիվ պլանի, հարձակումը պետք է իրականացվեր Կաղուհաս - Զագլիկ - Թալիշ, Չլդրան - Դրմբոն - Կուսապատ - Մարտակերտ և Սրիսավենոր - Բաշ Գյոնեփայա - Մանիքլու - Զանյաթաղ - Մարտակերտ ուղղություններով:

Զայկական ինքնապաշտպանական միավորումների գործողությունները սկսվեցին փետրվարի 5-ին, և մի քանի օրվա մեջ կոտրելով թշնամու դիմադրություն՝ դարաբայան ուժերն ազատագրեցին Կիչան, Չլդրան գյուղերը և դուրս եկան Մարտակերտ - Քելբաջար մայրուղու Դրմբոնի հատված: Փետրվարի երկրորդ կեսին դարաբայայան ուժերին հաջողվեց ազատագրել Դրմբոն, Վաղուհաս, Զափար, Զարդախաս, Շաթերը գյուղերը և ամբողջությամբ վերահսկողության տակ առնել Մարտակերտ - Քելբաջար մայրուղին: Յերթական անգամ հզոր մարտեր սկսվեցին Սարսանգի հիդրոհանգույցի ազատագրման համար: Ադրբեջանական զորամիավորումները, հասկանալով հիդրոհանգույցի կարևորությունը, մեծ քանակով զինտեխնիկա և զորք կուտակեցին՝ ապահովելու նրա անվտանգությունը, սակայն չկարողանալով այն պահել՝ պայթեցրին հիդրոհանգույց տանող բոլոր ճանապարհները:

Մինչև մարտ ազատագրվեցին Մեծ Շեն, Մաղավուզ, Մոխրաթաղ, Շակոր Կամարի և այլ բնակավայրեր: Միաժամանակ այս նույն ժամանակահատվածում սրվեց իրավիճակը հյուսիս-արևմտյան ռազմաճակատում: Քելբաջարի կողմից ադրբեջանական զորամիավորումները փորձեցին հարվածել Մարտակերտի հայկական դիրքերին: Ի հակա-

րումն դրա՝ 1993թ. ԼՂՀ Պաշտպանության բանակի կողմից մարտի վերջին սկսվեց և մինչև ապրիլի 3-ը շարունակվեց Քելբաջարի (Քարվաճառ) ազատագրման օպերացիան, որի արդյունքում հաջողվեց ազատագրել ոչ միայն Քելբաջարը, այլ նաև Աղդաման, Չարեքտար, Նարեշտա, Թազաքեր, Բաղրամ, Քեչիլղայա, Չորման գյուղերը. Վերացվեց Յայսատանի Յանրապետության և Արցախի միջև կրված սեպը (շուրջ 2000կմ<sup>2</sup>), ոչնչացումից փրկվեցին հարյուրավոր հնագույն պատմաճարտարապետական կառույցներ, այդ թվում՝ 4-13-րդ դարերում ստեղծված Դադիվանքը:

Ապրիլի 5-ին դարձային ստորաբաժանումները դուրս եկան Օմարի լեռնանցք:


1993թ. գարնան վերջին ռազմաճակատում իրավիճակը կրկին սրվեց: Կանխելով թշնամու առաջխաղացումը ռազմական գծի առանձին հատվածներում՝ ՊԲ միավորումները անցան հակահարձակման: Ամենակարևոր նշանակետը հյուսիսային ճակատում Մարտակերտի ազատագրումն էր, որ տեղի ունեցավ հունիսի 27-28-ին: Միաժամանակ թշնամուց հետ խլվեց շրջանի 6 հայկական գյուղ:

Հատկանշական էր նաև Աղդամի կրակակետի լոեցման գործողությունը: Յուլիսի 23-ին կասեցնելով նախորդ 2 օրվա աղբբեջանական լայնածավալ հարձակումը Ասկերանի ուղղությամբ՝ ԼՂՀ Պաշտպանության բանակը Վճռական հակահարվածով գրավեց Աղդամ քաղաքը:

Սա կարևոր նշանակություն ունեցող իրադարձություն էր, քանի որ լուծվեց Ստեփանակերտի պարբերական ռմբակոծության և Ասկերանի շրջանի գյուղերի վրա պարբերական հարձակումների վերացնան հարցը:

Օգոստոսի երկրորդ կեսին ռազմական գործողություններ ծավալվեցին Ֆիզուլի-Զեբրայիլ-Ղուբաթլու մարտական գծի երկայնքով: Օգոստոսի 22-ին աղբբեջանցիները թողեցին Ֆիզուլի քաղաքը և 1380կմ<sup>2</sup> տարածքով հանանուն շրջանը, ապա օգոստոսի 23-25-ը՝ Զեբրայիլ շրջկենտրոնը՝ հանանուն շրջանի տարածքով՝ 1050կմ<sup>2</sup>: 1993թ. օգոստոսի 31-ին ՊԲ միավորումները մտան Ղուբաթլու շրջկենտրոն:

Աղյամի ուստակած յենակետերի  
ԿԵՐԱՑՈՒՍ ՈՒՍՏԱԿԱՇՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ОПЕРАЦИЯ ПО УНИЧТОЖЕНИЮ  
ВОЕННЫХ БАЗ В АГДАМЕ  
23.07.93



**Աղյամի կրակակետի լոեցման գործողությունը 23.07.1993թ.:**

Յուկտեմբերին աղբբեջանական գորամիավորումները փորձեցին հակահարձակման անցնել, սակայն հոկտեմբերի 24-ին կորցրին Յորադիզ կայարանը, որը հակառակորդի՝ հարավային հատվածում գինամթերքի նատակարարնան կարևոր օղակ էր: Ավելի ուշ՝ նոյեմբերի 1-ին, դարձային հնքնապաշտպանական գորամիավորումները մտան Զանգելան շրջկենտրոն՝ հարակից բնակավայրերով հանդերձ:

Նոյեմբերի մնացյալ հատվածը հարաբերականորեն հանգիստ էր ռազմաճակատում, սակայն դեկտեմբերին գործողությունները վերսկսվեցին և ծավալվեցին հյուսիս-արևելյան ու հյուսիս-արևմտյան շրջաններում: Ծանր մարտերից հետո դարձային հնքնապաշտպանական ուժերը իրենց դիրքերը թողեցին Մարտակերտի Մատաղիս և Թալիշ գյուղերում, մեկ դիրք էլ՝ Մարտունու շրջանում:

ՁԵՐԱԿԻԼԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՈԱԶՄԱԿԱՍ ՀԵՆԱԿԵՏԵՐԻ  
ՎԵՐԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎՈՐԾՈՂԻ ԹՅԱՅԻՆՆԵՐԸ  
ՕՊԵՐԱЦԻԱ ՊԵՐ ԱՆԴԱՐԺԵՄ ԱՌԱՋԱԿԱՎԱՐ  
ԱՌԱՋԱԿԱՎԱՐ ԱՌԱՋԱԿԱՎԱՐ



**Զարգայի և հարակից ռազմական հենակետերի վերացման  
գործողությունը**


1993թ. դեկտեմբերի 18-ին ադրբեջանական 60000 թվաքանակով բանակն աֆղան մոջահետների (1500) և այլ վարձկանների օգնությամբ լայնածավալ հարձակման անցավ Արցախյան ռազմաճակատի ողջ երկայնքով: Երկուսուկես անսվա դաժան մարտերում (մինչև 1994թ. մարտի սկիզբը) հայկական կողմը ջախջախիչ հակահարվածով թշնամուն ընդհանուր առանձին հետ շարտեց ելման դիրքեր:

1994թ. սկզբներին մարտեր էին ընթանում Արաքսից մինչև Օմարի լեռնանցք ուղեցնով: 1994թ. հունվարի 7-ին երօրյա արյունահեղ մարտերից հետո, տալով կենդանի ուժի և զրահատեխնիկայի մեծ կորուստներ, ադրբեջանական զորքերին ու նրանց շարքերում կովող մեծաքանակ աֆղան մոջահետներին հաջողվեց հետ գրավել արցախյան ռազմաճակատի ծայր հարավում գտնվող և ռազմավարական մեծ կարևորություն ունեցող Հորադիք կայարանը: Չնայած գենքի և զորաքանակի մեծ առավելությանը՝ ադրբեջանական զորամիավորումներին չհաջողվեց էական հաջողություններ արձանագրել: Ռազմաճակատային գիծը կազմում էր առնվազն 180կմ, որը ենթադրում էր ԼՂՀ ՊԲ-ի ուժերի լարում, ինչը և պատվով հրականացվեց:

Ի պատասխան ադրբեջանական գրոհների՝ ԼՂՀ ՊԲ-ն անցավ հակահարձակման և ոչնչացրեց Կոգան, Աշաղի Արդուռահմանլու և մի շարք այլ բնակավայրերի կրակակետերը: Անտեսելով այս իրողությունները՝ ադրբեջանական դեկավարությունը մարտի դաշտ էր բերում նոր երիտասարդ գինվորական կազմ՝ ի մասնավորի ռազմական թատերաբեմը տեղափոխելով Սահալահի Քենգերլի - Մարտակերտ - Լևոնպետ Մատաղիս - Օմար:

ԱՐԴԱՄԻՑ ՀՅՈՒԽԻ ԱՐԵՎԵԼՔ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԹԵՍԱՍԱԿԱՍ  
ՀԵՆԱԿԵՏԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎՈՐԾՈՂԻ ԹՅԱՅԻՆՆԵՐԸ  
ՕՊԵՐԱՑԻԱ ՊԵՐ ԱՆԴԱՐԺԵՄ ԱՌԱՋԱԿԱՎԱՐ  
ԱՌԱՋԱԿԱՎԱՐ ԱՌԱՋԱԿԱՎԱՐ

04.94



**Աղդամի հարակից կրակակետերի լուցման գործողությունների լարսեց**

Ռազմական գործողությունների տեսանկյունից առավել ծանր հատվածը Օմարի լեռնանցքի շրջանում էր: Հունվարի վերջին իրավիճակն այստեղ շեշտակի սրվեց: Ադրբեջանական զինուժին հաջողվեց Քելբաջարի ուղղությամբ զարգացնել իր հարձակողական գործողությունը և դուրս գալ Քելբաջարը Գյանջային կապող խճուղու խաչմերուկ: Հունվարի 24-ին խաչմերուկի մոտ ադրբեջանական զորքերի առաջխաղացումը կասեցվեց:

Փետրվարի սկզբներին հայկական ուժերը վերագրավեցին Օմարի

լեռնանցքի՝ հակառակորդի ռազմական դիրքերը: Քելբաջարի հյուսիսյային հատվածն այլևս անվտանգ էր, իսկ հակառակորդի գործողությունը լիովին ձախողվեց:

1994թ. ապրիլի 9-ին սկսվեց արցախյան պատերազմում ԼՂՀ Պաշտպանության բանակի հարձակողական վերջին՝ Արեգասարի երկօրյա գործողությունը, որի ընթացքում հայկական ուժերը փայլուն զրահարժով թշնամուց գրեթե լիովին ազատագրեցին Մարտակերտի շրջանի հյուսիս-արևելյան մասը՝ Մատաղիս-Չայլու-Թալիշ հատվածը:

Այս պայմաններում Ադրբեյջանը ստիպված էր ընդունել ՈԴ-ի կողմից առաջարկվող զինադադարի պայմանները: 1994թ. նայիսի 12-ին ստորագրվեց հրադադարի համաձայնագիրը: Փաստականորեն արցախյան զրահավումների ռազմական գործողությունների արդյունքում Ադրբեյջանին զինադադար պարտադրվեց, որը, ժամանակ առ ժամանակ խախտումներով հանդերձ, պահպանվում է մինչ օրս:

## ԽՈԶԱԼՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ. ՄԻ՞Ֆ, ԹԵՇ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ...

Բնակչության դեմ չէ, որ Արցախի ազատամարտիկները պայքարում էին: Թե Խոչալուի, թե՛ Քարվաճառի, թե՛ Շուշի քաղաքի, թե՛ հարավային շրջանների ազատագրական մարտերը սկսելուց առաջ ԼՂՀ պաշտպանության բանակը նախապես տեղեկացնում էր բնակչությանը՝ ազատ բողնված միջանցքի մասին, որտեղով նրանք կարող էին անվտանգ բողնել ռազմական գործողությունների դաշտը: Պետք է նկատել, որ այդ բնակչությունը չէր կարելի որակել որպես «խաղաղ բնակչություն», քանի որ 88-ից ի վեր մարզի ու հարավից շրջանների ադրբեյջանցիները զանգվածարար մասնակցում էին բռնության ակտերին ու շրջափակմանը, իսկերի առևանգումներին ու սպանություններին:

1992թ. առաջին ամիսներին ԼՂՀ-ի համար օրակարգային առաջին խնդիրը հանրապետության՝ խորհրդային վերջին տարիներին ադրբեյջանաբնակ դարձած գյուղերում տեղակայված ռազմական հենակետերի ճնշման խնդիրն էր: Դրանցից օրն ի բուն գնդակոծվում էին շրջակա գյուղերն ու քաղաքները: Փորձն արդեն ցուց էր տվել, որ բոլոր այն տեղերում, որտեղ խորհրդային բանակը չէր մասնակցում ռազմական գործողություններին, ադրբեյջանական զինվորները լուրջ բախումների դեպքում ուղղակի փախուստի էին դիմում: Կրկժանի, Մալիբեյլիի, Ղարաբաղլուի հրետակոծման և ռմբահարման հենակետերի լուեցումից, ապա վերացումից հետո օրախմնդիր դարձավ Խոջալուի հենակետի լուեցումը: Ինչու՝, որովհետև Խոչալուից ամիսներ շարունակ «Գրադ» և «Ալագան» տիպի հրթիռային կայաններից օր ու գիշեր հրետակոծվում էին նայրաքաղաք Ստեփանակերտը և հարավից բնակավայրերը:

30-40-ական թվականներին Խոջալուն առավելապես հայկական բնակչություն ունեցող գյուղ էր: Բաքուն նպատակաւողված քաղաքականություն էր վարում Ստեփանակերտ - Աղդամ մայրուղու վրա գտնվող այդ բնակավայրի ադրբեյջանականացման ուղղությամբ: 88-ին գյուղն արդեն առավելապես ադրբեյջանցիներով էր բնակեցված: Եվ հենց այստեղ 88-ին իրագործվեց առաջին էթնիկական գտումը: 1991թ. Խոջալուին տրվել էր հանրապետական Ենթակայության քաղաքի կարգավիճակ, չնայած փաստացի այն մնում էր գյուղ: Այդտեղ էին տեղավորել Միջին Ասիայից եկած մեսխեթցի բուրք փախստականների մի մասնին: Խոջալուի ռազմական հենակետին տրվում էր հատուկ նշանակություն, քանի որ այդտեղից Ստեփանակերտը հասանելի էր հրետակոծության համար: Հրետակոծելով շրջակա խաղաղ գյուղերն ու մայրաքա-

դաք Ստեփանակերտը՝ աղբեջանական ժողճակատայինները վստահ էին, որ պատերազմում բարոյական և մարդասիրական սկզբունքներով առաջնորդվող հայերը նույն ծևով չեն վարվի աղբեջանական այն բնակավայրերի հետ, որտեղից նրանք կրակ էին թափում հայերի վրա: Խո-ջալուն այդ բնակավայրերից մեկն էր:

1992թ. փետրվարի 15-ին ԼՂ ինքնապաշտպանական ջոկատները, հարմար դիրքեր գրավելով խոջալուի արևմտյան ցածրադիր բլրաշարի երկարությամբ, նունետիկների միջոցով աղբեջանական զորամիավորումներից պահանջեցին առանց մարտի անվտանգ միջանցքով թողնել երկրամասի տարածքը, իանգրվանել Աղդամի տարածքում: Խաղաղ բնակչությանը ժամանակ և հնարավորություն տրվեց ոչ միայն խորհելու, այլև առաջին անհրաժեշտության ունեցվածքը տեղափոխելու համար: Նշենք, որ խոջալուն ուղղաթիռային կապ ուներ Աղդամի հետ, որտեղից ուղղաթիռը խոջալու կարող էր հասնել 10-15 րոպեի ընթացքում: Դեռևս խորհրդային տարիներին ագրեսիվ ազգայնականության «ավանդույթներով» հայտնի Աղդամն այդ ժամանակ գտնվում էր Աղբեջանի ժողովրդական ճակատի ուժերի և բանտերից պատերազմական գործողություններին մասնակցելու նպատակով բաց թողնված հանցագործների վերահսկողության ներքո<sup>48</sup>, որոնք արդեն խնձրավորումներ էին կազմել և սպասում էին հրահանգի՝ հարձակվելու հարակից հայկական գյուղերի վրա: Աղբեջանի թժիշկ Քյամալ Ալին, 1992թ. փետրվարին լինելով Աղդամում, նշում է. «Պատերազմը լավ տեղ է հանցագործների համար: Պատերազմում կարելի է ամեն բան անել: Կարելի է սպասել: Կրթված մարդը պատերազմ չի գնա, իսկ հանցագործը կգնա: Այդ ժամանակ մեր (աղբեջանական) բանակը ղեկավարում էին հանցագործները»<sup>49</sup>:

Ժողովրդական ճակատի Աղդամի բաժանմունքի ղեկավարները նախընթաց ամիսներին խուլ առճակատման մեջ էին Աղբեջանական Յանրապետության նախագահ Մութալիբովի հետ, որին նրանք մեղադրում էին ոռւսամետության և նույնիսկ Մոսկվայի գործակալը լինելու մեջ: Այն, որ «Խոջալուն» հենց Ա.Մութալիբովի դեմ ուղղված ակտ էր, բացահայտ դարձավ խոջալուի դեպքերի օրերին: Աղբեջանցինները կարող էին ողջ բնակչությանը հանել թե՛ ուղղաթիռներով, թե՛ հատկապես դրա համար թողնված միջանցքով: Կարող էին տարհանել ցերեկային ժամերին: Չարվեց. ավելին՝ թույլ չտրվեց, քանի որ արդեն փետրվարի 22-ին,

<sup>48</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս «Черный сад. Между миром и войной», [http://news.bbc.co.uk/hi/russian/in\\_depth/newsid\\_467300\\_0/4673979.stm](http://news.bbc.co.uk/hi/russian/in_depth/newsid_467300_0/4673979.stm):

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղում:

երբ ԼՂ պաշտպանական զորամիավորումները հայտարարել էին, թե մտադիր են վերցնել խոջալուն, և բացված միջանցքով քաղաքի ազգաբնակչությունը կարող է դուրս գալ, Աղբեջանի նախագահի, վարչապետի, ազգային անվտանգության նախարարի և այլոց նախակցությամբ կայացած Ազգային անվտանգության խորհրդի նիստում որոշվեց մարդկանց դուրս չբերել խոջալուից<sup>50</sup>: Սա հանցագործություն էր սեփական ժողովրդի դեմ, որը դեռ շարունակություն էր ունենալու:

Փետրվարի 26-ին Արցախի ինքնապաշտպանական ուժերը, շրջափակման մեջ առնելով խոջալուն, նահանջի միջանցքը թողեցին առանց վերահսկողության, որպես նախագօրչական միջոց՝ հարվածի ուղղությունը փոխելով դեռ 1990 թ. հոկտեմբերի 17-ից աղբեջանական ՕՍՕՆ-ականների վերահսկողության տակ գտնվող օդանավակայանի ուղղությամբ: Տևական ժամանակ անց խոջալուի բնակչության ելքը ի վերջո ժողճակատայինների կողմից թույլատրվեց: Վաղ առավոտ էր: ճանապարհի գգալի մասն անցնելուց հետո Աղդամից ռացիայով ժողճակատայիններից ստացված հրահանգի համաձայն խմբի մի մասը շեղվեց ելքի համար թողնված միջանցքից և ուղղորդվեց հայկական Նախիջևանիկ գյուղի ուղղությամբ, որն ըստ տրված հաղորդագրության՝ իրեն ազատված էր հայերից: Դա կենց տեղեկատվություն էր<sup>51</sup>: Իրականում հայկական գյուղը գտնվում էր ԼՂԴ ինքնապաշտպանության ուժերի հսկողության տակ: Մարդկանց շարանը Նախիջևանիկի մերձակայքում ընդհարվեց հերթապահող հայկական պահակակետի հետ: Կարճատև փոխհրաձգությունից հետո Աղդամից օգնության հասած ուժերի օգնությամբ, ինչպես վկայեց փրկված Սովետյան Արբասովը, խոջալուի բնակչները շարունակեցին ճանապարհը<sup>52</sup>: Եվ ահա Աղդամի մերձակայքում, մարդասիրական միջանցքի վերջում նրանց դիմավորեցին կրակահերթերով: Դա այն տարածքն էր, որ վերահսկում էին (և վերահսկեցին մինչև 92-ի ամառը) Աղբեջանի ժողովրդական ճակատի ուժերը: Նախ մարդկանց ոտքերին էին կրակել, որպեսզի փախչողներ չլինեն, ապա անհատապես գնդակահարել էին սեփական հայրենակիցներին: Բաքվում ժողովրդական ճակատը իսկույն վայնասուն բարձրացրեց՝ կատարված հայերին վերագրելով և մեղադրանքի գլխավոր սլաքն ուղղելով Մութալիբովի դեմ: Կատարվածին միջազգային հնչողություն տալու համար դեպքի վայր հրավիրվեցին նաև օտարերկրյա լրագրողներ: Բայց ստացվեց այնպես, որ չեխ լրագրողուիի Յանա Մազալովան այդ տարածքում եղավ երկու անգամ՝ փետրվարի 28-ին և

<sup>50</sup> Տե՛ս Հայոց Ռամիզ Ֆաթալիևա, ռազմական ազգային պատճենները, <http://www.xocali.net/RU/azadlig.html>

<sup>51</sup> Տե՛ս «Мегаполис-экспресс», 17, 1992:

<sup>52</sup> Տե՛ս նույն տեղում:

մարտի 2-ին: Երկրորդ անգամ 3.Մազալովան արձանագրեց, որ դիակներն այլանդակված ու պղծված են: Դայերը այդ բանը չէին կարող անել, քանի որ տարածքը անընդհատ վերահսկվում էր Աղբեջանի ժողովրդական ճակատի կողմից: Բարվից նկարահանումների համար Աղդամ ժամանած աղբեջանցի լրագրող Զինգի Մուլտաֆակը, որը նույնպես երկրորդ անգամ գտնվեց տեղում, հանգեց նոյն եզրակացությանը: Դադուրդագրություն տալով «Դ-Պրես» գործակալությանը՝ նա հայտարարեց, որ մտադիր է անկախ լրագրողական հետարաննություն իրականացնել: Սակայն նրան խորհուրդ տվեցին լրել և բռնել Աղդամը: Նետագայում լրագրողը սպանվեց ցայսօր չպարզված հանգամանքներում: Ժողովրդակատի ճնշմամբ իշխանությունից հեռացված Մութալիբովը մոսկովյան «Հեզանիսմայ գազետ» թերթում 1992թ. ապրիլի 2-ին բաց տերսություն հայտարարեց, որ այդ սպանողը հայերը չէին կարող անել:




снимали их. Во время новых съемок 2 марта эти же трупы были скальпированы. Какая-то странная игра...

— Как говорят те ходжалинцы, которые спаслись, это все было организовано для того, чтобы был повод для моей отставки. Какая-то сила действовала для дискредитации президента. Я не думаю, чтобы армяне, очень четко и со знанием дела относящиеся к подобным ситуациям, могли...

Независимая Газета թերթի այն համարները, որտեղ նշվում է, որ ներխաղաքական իշխանակության նորականության մեջ նկամակերտեց Խոջալովի ողբերգությունը Ա.Մութալիբովին դաշտում անելու համար:

Նույնը նա պնդեց տարիներ անց<sup>53</sup>: Զկա որևէ անառարկելի փաստ, որով հնարավոր լինի հիմնավորել, որ Խոջալուից մարդասիրական միջանցքով դեպի Աղդամ շարժվող մարդկանց կոտորածը հայերն են իրականացրել: Աղբեջանական կողմն իր տրամադրության տակ չունի որևէ փաստ, որը ալիքի ծառայի աղբեջանական ժողովակատի համար՝ նրա անմեղությունն այդ հարցում ապացուցելու առումով: Դակարակը՝ բոլոր վկայություններն ու փաստերը խոսում են այն մասին, որ դա թուրքամետ ժողովակատայինների գործն է: Այն եռանդուն գործունեությունը, որ ծավալեցին թուրքական տեղեկատվական գործակալություններն ու հեռուստավալիքները դեպքից անմիջապես հետո (հիմնականում ցուցադրվում էին Զինգի Մուլտաֆակի նկարահանումները), խոսում էր այն մասին, որ թուրքական ծառայությունները անմասն չեն եղել կատարված հանցագործությանը:



Նկարում դատկերված է նոյն տամարդու դիակը տարբեր վայրերում: Նետարքական այն է, որ աջ նկարում տամարդու դիակը առանց դղձման հետեւրի է: Զախ կողմից նկարում ակնհայտ ենում են դիակադատության հետեւրի է: Զախ կողմից նկարում ակնհայտ ենում են դիակադատության հետեւրի է: Զինգի մեջ նկարում ակնհայտ վայրը ռազմական գործունեությունների այս շրջանում չի եղել հայկական ուժերի վերահսկությունների մեջ: Սա հերթական փասէ է, որ ներկայացնում է «Խոջալու ողբերգություն» կոչվող աղբեջանական բարոզամեթենայի գեղձարարությունները: Զեղծարարության մյուս դեմքերին կարելի է ծանոթանալ <http://www.xocali.net> կայիցում

Սակայն այդ ամենի նպատակը միայն ոռւսամետ Ա. Մութալիբովին իշխանությունից հեռացնելը չէր (որոշ ժամանակ հետո ժողովակատայինների աջակցությամբ նրան փոխարիմելու եկավ բացահայտ թուրքական կողմնորոշում ունեցող Ա.Էլշիբեյը): Այս կերպ, Մութալիբովին իշխանությունից հեռացնելու խնդիր լուծելուն զուգընթաց, լուծվում էր

<sup>53</sup>Տես «Новое время» ամսագիր, 2001, թիվ 6:

սումգայիթյան ցեղասպանությանը հակակշռող վանդալիզմի մի ակտ հայերին վերագրելու խնդիրը: Պետք է ասել, որ հայկական կողմերը, իրենց տրամադրության տակ ունենալով անկասելի փաստարկներ, դարձյալ հույսները դրեցին միջազգային հանրության անաշառության վրա՝ մտածելով, թե «ինչ ուզում են՝ թող ադրբեջանցիները ասեն, միևնույն է՝ ծշմարտությունը մեր կողմն է»: Սակայն Ղարաբաղյան հարցի հետ մեկտեղ քաղաքականացվեց նաև Խոջալուի ոճիրը: Նրանք, ում պետք էր պաշտպանել Բաքվին կամ ով որդեգրել էր կողմերի միջև հավասարության նշան դնելու քաղաքական գիծը, առանց խորամուխ լինելու փաստերի մեջ՝ «հավատ ընթայեցին» ադրբեջանական քարոզամեքենայի հորինվածքներին: Ամեն ինչից զատ Բաքվին խիստ կարևոր էր ազատվել Խոջալուի մեղքից և սեփական ժողովրդին անպայման համոզել, որ ոճազորդները հայերն են: Հակառակ դեպքում շարժային ադրբեջանցին կարող է տեսնել, որ իր քաղաքական դեկավարությունը իշխանության համար կարող է «սումգայիթ» բերել նաև սեփական ժողովրդի գլխին: 1992թ. հետագա իրադարձությունները հաստատեցին, որ Աղդամում գործում է թուրքամետ ժողճակատայինների մի խմբավորում կամ կազմակերպություն, որը գործողություններ է ծավալում ամեն կերպ թուրք ադրբեջանցուն իշխանության բերելու համար: Չի բացառվում, որ նրանք, ի տարրերություն Ա. Էլչիբեյի ծագման, կասկածներ ունեին Ա. Մուրալիբովի թուրքական ծագման վերաբերյալ:

Խոջալուին հետևեց հաջորդ սադրանքը՝ դարձյալ Աղդամի մերձակայքում: 1992թ. նոյեմբերի 20-ին Աղդամից ոչ հեռու վթարի ենթարկվեց մի ուղղաթիռ, որում գտնվում էր Մութալիբովի կառավարության մեջ նախագահին հավատարիմ պաշտոնյաների գգալի մասը: Բաքվում իրենց սովորության համաձայն աղմուկ բարձրացվեց ուղղաթիռը հայերի կողմից կործանելու մասին (ուղղաթիռի «սև արկող» օրեր շարունակ չտրամադրվեց մոսկովյան հանձնաժողովին): Հիստերիան շարունակվեց մինչև դեկտեմբերի 3-ը, երբ կենտրոնական հեռուստատեսության «Վետս» ծրագրով ԽՄՌ ՊԱԿ-ի դեկավար Վ. Բակատինը հայտնեց հատուկ հանձնաժողովի եզրակացությունն այն մասին, որ ինքնաթիռը վթարվել է ներսում տեղի ունեցած կրակողի պատճառով: 1988թ. փետրվարին Աղդամից դեպի Ստեփանակերտ կազմակերպված և սպանություններով ավարտված «Երթից» հետո սա «գրոշ գայլերի» երրորդ խոշոր սադրանքն էր, որը թուրքամետ Ա. Էլչիբեյին բերեց իշխանության:

## ՄԱՐԱՆ. ԹԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է...

1992թ. ապրիլի սկզբից մինչև 10-ը Միր-Բաշիրի (Թերթեր) շրջանից Մարաղա գյուղը գանգվածային հրետակոծության ենթարկվեց, որի արդյունքում գյուղի մի գգալի մասը ոչնչացվեց: Գյուղի բնակչության մեջ մասը հողափոր թաքստողներում էր ապաստան գտել, իսկ մյուսները տեղափոխվել էին հարակից գյուղեր:

Ապրիլի 10-ին ադրբեջանական գինութիւնի հրետակոծությունը սկսվեց գիշերվա ժամը 5-ին, որից հետո ադրբեջանական գինված խմբերը շարժվեցին գյուղի ուղղությամբ և մտան գյուղ: Բռնազավթելով գյուղի մի մասը՝ ադրբեջանական գինվորները սկսեցին զանգվածային կոտորածը, որի արդյունքում սպանվեց 57 խաղաղ բնակիչ (այդ թվում 30 կին և 9 երեխա): Գյուղի բնակչության դիակներն այլանդակվեցին, խաղաղ բնակչության մի մասին կենդանի այրեցին, մասնատեցին: Գյուղի 13 բնակչի ադրբեջանցիները գերեվարեցին և տեղափոխեցին Բարդա:



Զինվորականների գործողություններին հետևեց Միր-Բաշիրից գյուղ մտած և թալանի ակնկալիքով զանգվածային սպանդ, կողոպուտ կազմակերպած ադրբեջանական խաժանությը: Ապա ադրբեջանցիները այրեցին գյուղը:

Ապրիլի 13-ին բարոնուիկի Քերոլայն Քորսի ներկայությամբ տեղի ունեցավ սպանված և այլանդակված դիակների վերաբաղումը: Սա ադրբեջանական ցեղասպան քաղաքականության հերթական դրսւորում էր, որին զոհ դարձավ 57 խաղաղ բնակիչ:



Աղբեջանական զորամիավորումների կողմից Մարաղա գյուղի  
ողջակիզակած խաղաղ ազգաբնակչության դիակներ. առավել մանրամասն տե՛ս  
<http://maragha.nk.am> կայֆում

СПИСОК Лиц, взятых в заложники в селе Марага (по состоянию на 20.04.92г.)		
1.	Аветисян Яша Татевосович	1932г.
2.	Аветисян Брина Оганесовна	1930г.
3.	Агаджанян Мария Маркосовна	1948г.
4.	Агаджанян Гаго Каюрович	1967г.
5.	Агаджанян Апрес Каюрович	1971г.
6.	Агаджанян Рафик Каюрович	1971г.
7.	Айвазян Левон (Камо) Шураенч	1959 г.
8.	Айвазян (Погосян) Седа Гарасимовна	1935 г.
9.	Айвазян Виген Левавеич	12.03.90г.
10.	Айвазян Карен Левавеич	23.02.88г.
11.	Айвазян (Амбарцумян) Зарине Эвайдиковна	1963г.
12.	Алексанян Артур Грантович	1965г.
13.	Алексанян Альвард Грантовна	1969г.
14.	Алексанян Роза Самсоновна	1933г.
15.	Амбарцумян Яшар Аванесович	1928г.
16.	Амбарцумян Камо Яшавеич	1959г.
17.	Амбарцумян (Погосян) Карине Эвалъдиковна	19062г
18.	Амбарцумян Нарек Камоевич	30.03.89г
19.	Амбарцумян Леля Камоевна	29.11.90г
20.	Амоян Амо	1902г
21.	Аракелян Лусик	1910г
22.	Аракелян Сергей Наполеонович	1952г
23.	Аракелян Размик Асатурович	нет вестей
24.	Аракелян Римма	нет вестей
25.	Бабаян Саша	86 лет
26.	Багдасарян Альвина Шмавоновна	1938г
27.	Багирян (Барсегян) Женя Мисаковна	1928г
28.	Багирян Кима Колаяевна	нет вестей
29.	Бадалян Ася Акоповна	1933г
30.	Бадалян Сасун Эдикович	нет вестей
31.	Бадалян Лариса Рафиковна	1953г
32.	Бадалян Лева	1975г
33.	Барсегян Лиана Вагифовна	1982
34.	Барсегян Ульяна Вагифовна	1983г
35.	Барсегян Лена Владимировна	6 лет
36.	Барсегян Ариэлик Аванесовна	освобождена
37.	Барсегян Лена Овсеповна	освобождена
38.	Барсегян Гезал	обменена
39.	Барсегян Эрик	обменен
40.	Вартанян Заря	нет вестей
41.	Вартанян Парапанцем	нет вестей
42.	Газарян Юрик	1933г
43.	Газарян Ануи Бейбутовна	освобожден
44.	Газарян Женя Исакович	50 лет
45.	Газарян Карине	1938г
46.	Галстян Андраник	1934г
47.	Галстян Роза	нет вестей
48.	Галстян Геня	нет вестей
49.	Еремян Сергей Мнацаканович	1906г



14. Лайра, дочь Шуры 25 лет, убита  
 15. Лена, свекровь дочери, 55 лет; убита  
 16. Барсегян Гурген, 67 лет. Убит в собственном дворе  
 17. Мартросян Жора. Убит дома  
 18. Барсегян Роза, 66 лет. Убита в подвале дома  
 19. Ананян Рубен, 64 года. Убит у себя дома  
 20. Амалия, жена Рубена, 62 года. Убита у себя дома  
 21. Байрамян Изабела, 66 лет. Брошена под танк и раздавлена  
 22. Бадалян Сережа, 68 лет. Разорван на мелкие части  
 23. Ася, жена Сережи, 62 года. Убита  
 24. Бабаян Саша, 80 лет. Убит выстрелом в лоб у себя во дворе  
 25. Агаджанян, 20 лет. Убит в окопе  
 26. Овсепян Ерванд, 80 лет. Зверски убит  
 27. Тамара, жена Ерванда, 70 лет. Зверски убита  
 28. Алик сын Ерванда, 27 лет. Зверски убит  
 29. Мнацаканян Арфе, 60 лет. Зверски убит у себя во дворе  
 30. Владимир, сын Арфе. Зверски убит у себя во дворе  
 31. Аракелян Амо, 90 лет. Убит в заложничестве через пять дней

Всего убито более 60 человек. Всех трудно вспомнить. Судьба многих неизвестна.

Список 2  
взятых в заложники в с.Марага

1. Варданян Варя. Нет вестей.  
 2. Свекровь Вари, 80 лет. Нет вестей  
 3. Геворк сын Лауры, 6 лет. Взят в заложники  
 4. Мгер, сын Лауры, 4 года. Взят в заложники  
 5. Амбарцумян Яша, 65 лет.  
 6. Камо, сын Яши, 30 лет.  
 7. Карине, невестка Яши, 26 лет.  
 8. Малолетний внук Яши  
 9. Малолетний внук Яши  
 10. Малолетний внук Яши  
 11. Айвазян Седа, 57 лет  
 12. Лева, сын Седы  
 13. Зарине, невестка Седы  
 14. Мовсисян Размик, 45 лет.  
 15. Светлана, жена Размика, 42 года.  
 16. Барсегян Арцвик  
 17. Гезал, невестка Арцвик  
 18. Несовершеннолетний внук Арцвик  
 19. Несовершеннолетний внук Арцвик  
 20. Несовершеннолетний внук Арцвик  
 21. Барсегян Лена, 55 лет  
 22. Карапетян Римма, 26 лет,  
 23. Альвина Багдасарян 56 лет,
- раздета и в голом виде показана населению нескольких районов, над ней издевались, избивали и насиловали. Обо всем этом она рассказала сама, после обмена. по свидетельству Риты: выдернули щипцами золотые коронки с зубов и заставили говорить, что Карабах принадлежит Азербайджану. Она отказывалась, ее пытали до наступления смерти.



34. БАРСЕГЯН Лена Владимировна 6 лет - обменена *ред*  
 35. БАРСЕГЯН Арцвик Аванесович 1922г. - обменена  
 36. САРКИСЯН Лена Овсеповна 1933г.  
 37. ВАРТАНИН Заря 1932г. - убита  
 38. ГАЗАРИН Юрик 1930г. - обменен  
 39. ГАЗАРИН Ануш Бейбутовна 1936г. - обменена  
 40. ГАЗАРИН Меня Исакович 1938г. - обменена  
 41. ГАЗАРИН Карине 58 лет  
 42. ЕРЕДЬЯН Сергей Мнацаканович 1920г. (слепой)  
 43. ИВАНЕНКО Галина  
 44. АЛЕКСАНЯН Лусик 1922г. - обменена  
 45. КАРАПЕТЯН Манташ 1937г.  
 46. МНАЦАКАНИН Рита Лендрушевна 1966г. - обменена  
 47. МОВСЕСЯН Размик Ервандович 1941г.  
 48. МОВСИСЯН Света Суреновна 1946г.  
 49. ПАПИКЯН Геворк Лаврентьевич - обменен  
 50. ПАПИКЯН Армен Лаврентьевич - обменен  
 51. ХАРАТИН Найшар 58 лет - обменена  
 52. АЛЕКСАНЯН Роза 1932г.  
 53. ГАЛСТИН Гения Гукасовна 1927г.  
 54. АЛЕКСАНЯН Алвард Григорьевна 1969г.  
 55. БАГДАСАРЯН Альвина Шмавоновна 1932г.  
 56. ВАРТАНИН Паранцзэм 1914г.  
 57. ДАНИЕЛЯН Валерий Аршакович 1940г.

Итого 57 человек, из них 26 женщин, 9 детей; все мирные жители этого села.



## ԱՆԿԱԽ ԼՂՀ-Ն ՕՐԻՆԱԲԱՐ ԿԱՅԱՑԱԾ, ԲԱՅՑ ԴԵՌԵՎՍ ԶՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ կայացման լեգիտիմությունը իրավական հիմքերի տեսակետից անբասիր է: ԼՂ ժողովուրդը դեռևս 1920-ական թվականներին ճանաչվել է որպես ինքնորոշման իրավունքի սուբյեկտ, ինչով խորհրդային Կենտրոնը հակակշռել է երկրամասը խորհրդային Հայաստանից օտարելու և այն ԼՂ ժողովորդի կամքին հակառակ ԱդրենՍՀ սահմաններ մտցնելու բռնությամբ իրագործված ակտը: ճանաչվել է խորհրդային տիպի պետականություն ունենալու ԼՂ ժողովորդի իրավունքը: ԼՂ ժողովորդի՝ ինքնորոշման իրավունքի սուբյեկտ լինելու փաստը, ինչպես արդեն նշեցինք, վերահաստատվել է 1990թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրենքով:

Բայց 1991 թվականին, այն բանից հետո, եթե Բարձրունակ իրավականին ԱդրենՍՀ իրավահաջորդությունից և վերականգնեցին թուրքական ինտերվենցիայի արդյունքում հիմնված մի պետականություն, որի սահմաններում Լեռնային Ղարաբաղը չէր եղել, ԼՂՀ տրամադրության տակ հայտնվեց ավելի զորեղ իրավական փաստարկ: 1991թ. սեպտեմբերի 30-ին ԼՂՀ-Ն իր անկախությունը հռչակեց Ադրբեջանական Հանրապետությանը իրավաբանորեն չպատկանող տարածքներում: Ինքնիշխան պետականության կայացման համար անհրաժեշտ իրավական բոլոր ակտերը՝ «Պետական անկախության մասին» հռչակագրի ընդունումը, անկախության մասին հանրաքվեն, խորհրդարանական ընտրությունները և գործադիր իշխանությունների ձևավորումը, կատարվեցին մինչև Ադրբեջանական Հանրապետության միջազգային ճանաչումը (իիշեցնենք՝ Վերջինս ՍԱԿ-ի անդամ է դարձել 1992թ. մարտին): ԼՂՀ հռչակումը Ադրբեջանական Հանրապետության իրավաբանորեն չպատկանող տարածքներում իրավական մի փաստարկ է, որն իր բնույթով տարբեր է 1990թ. ապրիլի 3-ի օրենքից: Բայց բավարար չէ միայն արձանագրել, որ Լեռնային Ղարաբաղը հիմնախնդրի իրավական հիմքերի համաձայն չի պատկանում մերօյա Ադրբեջանական Հանրապետությանը: Ավելի կարևոր է այն, որ հիմնախնդրի իրավական հիմքերի համաձայն՝ ԼՂՀ ժողովուրդը հենց իրեն պատկանող տարածքներում է հռչակել իր պետականությունը: Դա ամրագրված է 1923թ. ընդունված «ԼՂԻՍ կազմավորման մասին» դեկրետում, որտեղ նշված է, որ արոտավայրերը, ջրային ռեսուրսները, ընդերքը և այլն «պատկանում են այժմյան տերերին»: Այնպես որ, գոյություն չունի միջազգային իրավունքի որևէ նորմ, ԽՍՀՄ-ի՝ որպես լուժարված երկրի որևէ

օրենք, որը կասկածի տակ դներ ԼՂՀ կայացման լեգիտիմությունը: Երիտասարդ հանրապետության դեմ աղորեջանցիների սանձազերծած պատերազմի արդյունքում ԼՂ ինքնապաշտպանական ուժերն ազատագրեցին այն տարածքների մի մասը միայն, որոնք պետք է լինեին մարզի սահմաններում: Հյուսիսային և Կենտրոնական Արցախի մի շարք շրջաններ դեռ մնում են Բարձր կողմից բռնազավթված: ԼՂՀ ինքնապաշտպանական բանակը դուրս չի եկել Լեռնային Ղարաբաղի սահմաններից, այն տարածքներից, որոնք Կովբյուրոյի որոշմամբ օտարվել են խորհրդային Հայաստանից՝ նրանց մարզային լայն ինքնավարություն տալու պայմանով, որպեսզի տեղի հայ բնակչությունը փրկվի ցեղասպանվելուց:

# «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԵՎ «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏ ԻՆՔՍՈՐՈՇՄԱՆ» ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1991թ. դեկտեմբերի 8-12-ին Բելառուսում Ռուսաստանի Դաշնության, Ռուսականաց և Բելառուսի դեկավարները հիմնեցին Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ), իսկ տարեվերջին՝ դեկտեմբերի 25-ին, Մոսկվայի Կրեմլի վրայից հեցվեց ԽՍՀՄ դրոշը՝ նշանավորելով ԽՍՀՄ վախճանը: Միջուկային գերտերության շուտափույթը լուծարմանք շահագրգիռ Արևմուտքի ընդունած որոշումն առ այն, որ հետխորհրդային տարածքում նորանկախ պետությունները ճանաչվելու են նախկին միութենական հանրապետությունների սահմաններում, Ղարաբաղյան հիմնախնդիրը միջազգային իրավական այլ հարցադրումների դաշտ տեղափոխեց: Աղրբեջանական Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղով և Նախիջևանով ճանաչելու այդ որոշմամբ միջազգային հանրությունը իրավական նոր իմաստ վերագրեց հիմնախնդիրն՝ այն ներկայացնելով Աղրբեջանական Հանրապետությունից ԼՂ անջատման խնդիր, հակառակ այն բանի, որ իրավական հիմքերի տեսակետից Լեռնային Ղարաբաղը Աղրբեջանական Հանրապետության մասը չէր և երբեւ այդպիսին չէր եղել: Արևմուտքը խնդիրը հանգեցրեց ԼՂ ժողովրդի հնքնորոշման իրավունքի ճանաչմանը, չնայած ԼՂ ժողովրդի այդ իրավունքը ճանաչված էր մի բանի անգամ:

Բայց նույնիսկ այդ դեպքում թե՛ Ռուսաստանը, թե՛ Արևմուտքը պետք է համաձայնեին ԼՂՀ անկախացման հետ, քանի որ անկախացման գործնքացում ԼՂՀ-ում ընդունված ոչ մի փաստաթուղթ, քաղաքական ոչ մի ակտ չի հակասել ժողովրդների «ազատ հնքնորոշման» սկզբունքին, այն սկզբունքին, որի գործադրմանը միջազգային հանրությունը հանգեցրել է խնդրի իրավական իմաստը: Չկա իրավական որևէ փաստարկ ԼՂՀ անկախության հայտը մերժելու համար: Ինչ-որ բան պետք է արվեր հենց ժողովրդների ազատ հնքնորոշման սկզբունքի հետ: Միջազգային իրավունքի հետ բաց առճակատումից խուսափելու և «ղարաբաղյան նախադեպ»-ը հետխորհրդային տարածքում բացառելու համար ինչ-որ ելք պիտի գտնվեր, և այն գտնվեց:

Հակառակ ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի

և ժողովուրդների ազատ հնքնորոշմանը վերաբերվող հիմնարար մյուս փաստաթորդների՝ մի շարք պետություններ, եւնելով սուրյեկտիվ որոշ հանգանանքներից, ընտրեցին «ժողովուրդների հնքնորոշման» սկզբունքին ստորադասելու ուղին, չնայած ակնհայտ էր, որ այդ դեպքում այն դրույթը, ըստ որի «բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն առանց դրսի միջամտության որոշել իրենց քաղաքական կարգավիճակը և իրագործել իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը, և ամեն մի պետություն պարտավոր է հարգել այդ իրավունքը...», անհմաստ էր դառնությունը:<sup>54</sup> Դա միջազգային իրավունքին հակասող մոտեցում էր: Բոլոր հիմնարար փաստաթորդները ամրագրում են ինքնորոշման իրավունքի համընդհանուր, համապարտադիր բնույթը և դրա կիրառումը չեն կապում պետության տարածքային ամբողջականության կամ նրա սահմանների խախտման հետ: Պետությունների տարածքային ամբողջականության խախտումը այդ փաստաթորդները կապում են մի պետության կողմից մյուս հնքնիշխան պետության տարածքը բռնազարթելու, բայց ոչ ժողովուրդների ազատ հնքնորոշման իրավունքի իրագործման հետ:<sup>55</sup>

Ղարաբաղյան հարցում առաջարկվող մոտեցումը ներկայացվեց 1996թ. ԵԱՀԿ լիսաբրոնյան գագաթաժողովում: Այդտեղ առաջարկվեց հակամարտության կարգավորման մասին որոշման մի նախագիծ, ըստ որի խնդիրը պետք է լուծել Աղրբեջանական Հանրապետության տարածքային ամբողջականության և ազգերի հնքնորոշման սկզբունքների հիմքի վրա՝ Աղրբեջանական Հանրապետության կազմում Լեռնային Ղարաբաղին հնքնակառավարման անհնարարձ աստիճան ապահովելու և Լեռնային Ղարաբաղի ժողովրդի երաշխավորված անվտանգության ապահովման միջոցով: Որոշումն իր բնույթով հակասական էր, քանի որ գագաթաժողովը ճանաչեց ԼՂՀ ժողովրդի հնքնորոշման իրավունքը՝ Աղրբեջանական Հանրապետության տարածքային ամբողջականության պահպանման պայմանով: Դա իրավական տեսանկյունից բովանդակությունից զուրկ և անհմաստ բանաձև էր, եթե նկատի ունենանք, որ ԼՂ ժողովրդի՝ մարզային լայն հնքնավարության ձևուն խորհրդային տիպի պետականություն ունենալու իրավունքը ճանաչվել է դեռևս 1921թ.: Ըստ եւրյան ԵԱՀԿ գագաթաժողովը ներկայացրեց բոլշևիկյան Կովբյուլոյի որոշման վատ խմբագրված տարբերակը: Իր ամբողջու-

<sup>54</sup> Ձևակերպումը վերցված է 1970թ. հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2625 (XXV) «Միացյալ ազգերի կանոնադրության համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին» Հոչակագրից:

<sup>55</sup> Տես օրինակ, Պրավո նարօս ու սամոօպրելու առաջարկությունը: Այս պատճենը պահպանվել է 1991 թվականի մայիսի 1-ին:

թյան մեջ լիսաբրոնյան գագաթաժողովի բանաձևն ինքնորոշման իրավունքի ինաստն այլասերող բանաձև էր: Երևանը ստիպված էր օգտվել վետոյով այն արգելափակելու իր իրավունքից:

ԵԱՀԿ լիսաբրոնյան գագաթաժողովում հակամարտության կարգավորման առաջարկված բանաձևն իր հիմքում ուներ հիմնախնդրի բնույթի մասին անբացահայտ կանխադրույթներ: Առաջինն այն էր, որ ԵԱՀԿ-ն, առանց խնդրի իրավական հիմքերի մեջ խորանուիս լինելու, ըստ էռության անհիմն ձևով Լեռնային Ղարաբաղը դիտում էր որպես Աղրբեջանական Հանրապետությանը օրինաբար պատկանող տարածք: Խնդրի կարգավորմանն անբացահայտ ձևով կանխատրված մյուս դրույթն իր մեջ ուներ եվրոպական պետությունների (միանգամայն հասկանալի) բացասական վերաբերնունքը ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի նկատմամբ: Բայց կար նաև զուտ տնտեսական շահով պայմանավորված քաղաքական շարժառիթ, որի մասին բաց տերսուվ գագաթաժողովում չխոսվեց: Խոսքը կասպիական էներգակիրների մասին է:

Այսօր հայկական դիվանագիտությունն իրավական և պատմական առկա բոլոր հիմքերով հիմնավորում և փաստարկում է, որ Լեռնային Ղարաբաղը Աղրբեջանական Հանրապետությանն օրինաբար պատկանող տարածք չէ և երբեւ չի եղել անկախ Աղրբեջանի մաս: **ԼՂՀ-ն իր ինքնիշխանությունը հրչակել է Աղրբեջանական Հանրապետությանը չպատկանող տարածքներում, 1994թ. ի վեր, ըստ հիմնախնդրի իրավական փարեթի, վերահսկում է իրեն իրավաբանորեն պատկանող տարածքներ և այդ պատճառով Աղրբեջանական Հանրապետությունից անջատվելու խնդիր չունի:** Սրանից բխող անենակարևոր եզրակացությունն այն է, որ «տարածքային անբողջականության» սկզբունքը մեխանիկորեն կիրառելի չէ մերօրյա Աղրբեջանական Հանրապետության նկատմամբ (ինչպես սովորաբար դա արվում է): **Բացատրությունը պարզ է՝ նախկին ԱղրևՍՀ սահմաններ մտցված հայկական տարածքների վերաբերյալ կան գործող պայմանագրեր, որոնց շրջանցումով Բաքուն իրավունք չուներ իր անկախությունը հրչակել նախկին ԱղրևՍՀ սահմաններում, եթե անգամ մնար նրա իրավահաջորդը:** Որևէ պետություն ճանաչել նրան իրավունքով չպատկանող տարածքներով, մանավանդ, եթե դա ամրագրված է միջազգային պայմանագրերով, բռնություն է միջազգային իրավունքի հանդեպ: Կարսի գործող պայմանագրով Նախիջևանը չի պատկանում մերօրյա Աղրբեջանական Հանրապետությանը: Երկրամասը չէր պատկանի նրան, եթե նա նույնիսկ մնար ԱղրևՍՀ իրավահաջորդը, քանի որ այն տրվել էր ԱղրևՍՀ-ին ընդամենը որպես հովանավորյալ տարածք: Գործող պայմանագրի համաձայն՝ այն չի կարող դիտվել Աղրբե-

ջանական Հանրապետության ինքնիշխանության տակ գտնվող տարածք: Յանկացած երկիր, որը Աղրբեջանական Հանրապետությունը ճանաչել է Նախիջևանով հանդերձ, կայացրել է իր հետ կապ չունեցող Կարսի պայմանագրով անվավեր համարելու վճիռը, որի իրավունքը ինքը չունի:

1991թ. այդ բոլոր հանգամանքների ինացությամբ Բաքվում Աղրբեջանական Հանրապետության սահմաններ չեն հոչակել: **1992թ. մարտին խոշոր տերությունները փաստորեն Աղրբեջանական Հանրապետությանը սահմաններ վերագրեցին՝ ճանաչելով իրեն չպատկանող Նախիջևանով ու Լեռնային Ղարաբաղով:** Ոչ կոնֆլիկտային քաղաքական որևէ իրադրություններում գուցե և դա թույլատրելի մի բան է: Բայց վարպետ այդպես Աղրբեջանական Հանրապետության դեպքում, որտեղ իրագործվել էր Նախիջևանի և Արևելյան Աղրեկովկասի հայերի ֆիզիկական և մշակութային ցեղասպանությունը, որը խաղաղ բնակչության ոչնչացման պատերազմ էր սանձագերծել ԼՂ-ի դեմ, անթույլատրելի էր թե՝ իրավական, թե՝ բարոյական տեսակետից: Եվ այս հանգամանքն օրակարգային է դարձնում Բաքվի ու Աղրարայի հավակնությունների հետ կապված միջազգային քաղաքական վտանգների մասին հարցադրությունը:

# ԳԼՈԲԱԼ ՎՏԱՆԳՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ՀՕԳՈՒՏ ԲԱՅԿԻ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԽՆԴՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՄԱՆ ՇԵՏ

Առաջին վտանգը կապված է մերօյա Աղբեջանական Հանրապետությունն իրեն իրավաբանորեն չպատկանող տարածքներով ճանաչելու վերը նշված փաստի հետ: ճանաչել երկիրը նրա կողմից զավթված տարածքներով՝ նշանակում է իմաստափոխել, խախտել «տարածքային ամբողջականության» սկզբունքը և միջազգային կայունության ու խաղաղության սկզբունքից այն վերածել տարածքների զավթման սկզբունքի: Սա գլոբալ սպառնալիք է: Ոչ մի պետություն, նույնիսկ ամենահզորները, երաշխավորված չեն, որ մի օր իրենք չեն դարձնա այդ սկզբունքի նման այլասերման զոհը: Եթե հզորները չեն երաշխավորված, առավել ևս երաշխավորված չեն փոքր պետությունները, որոնք «աղբեջանական նախադեպից» հետո գրկում են պաշտպանական այն զրահից, որ իրենց տրամադրում էր տարածքային ամբողջականության միջազգայնորեն ընդունված սկզբունքը: «Տարածքային ամբողջականության» սկզբունքի նման այլասերումը չի կարող չխեղաթյուրել միջազգային իրավունքի մյուս հիմնարար սկզբունքները և առաջին հերթին «սահմանների անձեռնմխելիության» սկզբունքը, որը վերաբերում է լեզիտիմ սահմաններին, որպիսիք Աղբեջանական Հանրապետությունը չունի:

Իրեն իրավաբանորեն չպատկանող տարածքներում Աղբեջանական Հանրապետությունը ճանաչելու երկրորդ գլոբալ վտանգը կապված է «տարածքային ամբողջականության» սկզբունքը ցեղասպանության արդարացման կամ պարտական միջոց դարձնելու հետ: Մերժելով ԱղրիսՍՀ իրավահաջորդությունը՝ Բարուն չի հրաժարվել հայոց ցեղասպանության քաղաքական այն ուղեգծից, որը իրագործել են թե՝ Աղբեջանական Դենկլրատական Հանրապետությունը, թե՝ ԱղրիսՍՀ-ը: Խաղաղ բնակավայրերի հրետակություններն ու ռմբահարությունները, որոնք դարձել են խնդիր լուծման «աղբեջանական միջոց», ըստ էության վերածել են թույլատրված ցեղասպանության գործողության: «Թույլատրության փաստաթուղթը» տարածքային ամբողջականության իրեն չվերաբերող, բայց իրեն պարզեցած սկզբունքն էր:

Իրեն չպատկանող տարածքներում քաղաքական նկատառումներով որևէ պետության ճանաչումը, եթե դա արված է այդ տարածքի ժողովրդի կամքին հակառակ, ոչ այլ ինչ է, եթե ոչ պատերազմ իրահրելու սադրանք: Ղարաբաղյան պատերազմն Արևմուտքի կողմից թույլատրված

անարդարացի և ցեղասպանությամբ իդի պատերազմի նախադեպ է: Սա է «աղբեջանական նախադեպի» մյուս համընդհանուր վտանգը: Եվ եթե Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իրեն պաշտպանելու ցուցաբերված վճռականությունը չունենար, ապա կիրագործվեր հերթական ցեղասպանությունը:

Թվարկված բոլոր սպառնալիքներն անմիջականորեն կապվում են ԼՂ ժողովրդի ինքնորշման ու անվտանգության հետ: Բայց դրանք ունեն նաև գլոբալ բնույթ այն իմաստով, որ կարող են կիրառվել ցանկացած պետության ու ժողովրդի նկատմամբ: Բայց կան նաև վտանգներ, որոնք ուղղակիորեն վերաբերում են հարևան պետություններին և ժողովուրդներին: Պարզ է, որ եթե Բաքվին հաջողվեր հաշվեհարդար տեսնել Լեռնային Ղարաբաղի հետ, ապա տարածաշրջանում իսկույն կփոխվեր աշխարհաքաղաքական հավասարակշռությունը՝ անկանխատեսելի հետևանքներով: Այսօր ոչ ոք չի կարող ասել, թե ինչ ընթացք կտանային դեպքերը տարածաշրջանում (և ոչ միայն տարածաշրջանում), եթե Արցախի ազատամարտիկներին չհաջողվեր կատարել այն, ինչ նրանք ընդիուած լավագույնների կյանքի գնով կարողացան կատարել 1988-94թ.: Յավասարակշռության կտրուկ խախտումն այնպիսի զգայում մի տարածաշրջանում, ինչպիսին Ղարաբաղյան Կովկասն է, կարող էր դառնալ հզոր ցնցման պատճառ, որի ալիքները կիասմեն մինչև Եվրոպայի ու Ասիայի խորթերը:

Աղբեջանական Հանրապետությունը նախկին ԱղրիսՍՀ-ի սահմաններում ճանաչելու մեկ այլ վտանգ կապված է Անկարային ու Բաքվին Մեծ Թուրքական նախագծին պես ի ամուր զամելու հետ: Դեռևս քանանորդ դարի սկզբներին գերմանական քաղաքական շրջանակներում նկատվել էր, որ Թուրքիան տարածաշրջանում վարում է իր սահմաններից դուրս նոր թուրքական պետություններ հիմնելու քաղաքականություն<sup>56</sup>: Թուրքական արտաքին քաղաքականության այդ միտվածությունը հաստատվեց ոչ միայն 1918թ. Աղբեջանական Դենկլրատական Հանրապետությունը հիմնելու փաստով (70-ական թվականներին նույն պիսի փորձ կատարվեց Կիպրոսում):

1918թ. Արևելյան Անդրկովկասում թուրքական նոր պետության հիմնումը ինչ-որ իմաստով կիսատ էր մնացել: Նոր թուրքական պետության փոխարեն բոլշևիկները հիմնեցին ոչ ազգային մի հանրապետություն՝ Խորհրդային Աղբեջանը: Կիսատ մնացած գործը պետք էր ավարտին

<sup>56</sup> Տես Հ.Կորիսմազյան «Թուրքիան և ԽՍՀՄ-ը (Ռուսաստանը). փոխարքերությունների որոշ ասպեկտներ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» // «Սերծավոր և Միջին Արևմելքի Երկրներ և ժողովուրդներ», XVIII պրակ, էջ 7, Երևան, 1999թ.

հասցնել: Ողջ 20-րդ դարում Անկարայի ու Բաքվի ձեռնարկած քայլերը դրան էին միտված: 1929թ. Աքարտուրքին հաջողվեց համոզել՝ Պարսկաստանի Ռեզա շահին՝ տարածքային փոխանակումների միջոցով աշխարհագրական կապ հաստատել Նախիջևանի հետ: Դա ռազմավարական հաջողություն էր հետանտվող նպատակին հասնելու ճանապարհին: Նույն թվականներին Մոսկվայի բարեհաճությամբ Բաքուն արգելեց իրենց տները վերադառնալ 1918-20թթ. պատերազմների ընթացքում իրենց բնակավայրերից հեռացած նախիջևանցի հայ փախստականներին: Դայերին հանրապետությունից դուրս մղելու և իսլամադավան ժողովուրդների աղոթեցանականացման տասնամյակներ շարունակ «խաղաղ մերժմերով» տարվող քաղաքականությունը 1988թ. սումգայիթյան ոճիրով վերածեց բացահայտ ցեղասպանության ու հանրապետությունը հայերից մաքրելու քաղաքականության:

Անկարան սատարում էր Բաքվի բոլոր քայլերն այնպիսի եռանդով, որ կասկածի տեղ չէր մնում, որ դա հանատեղ վարվող ռազմավարություն է և որ դա հենց Թուրքիայի աշխարհագրական ծրագրի մի մասն է: Աղրեցանում «գործը» կարծես ավարտին է հասցված, իսկ Կիպրոսում այն դեռևս ընթացքի մեջ է, և Անկարան դեռ չի կորցրել ժողովուրդների ազատ ինքնորոշման ու մարդու իրավունքների սկզբունքները «Եվրոպայի քի առջև» թափահարելով՝ թուրքական այդ նոր պետության հիմնանան գործը հաջողությամբ ավարտին հասցնելու հույսը, որը նույնպես ձեռնարկել է թուրքական կանոնավոր բանակը, ուղեկցվել է հույների զանգվածային ջարդերով, տարածքը նրանցից մաքրելու գործողություններով:

ճիշտ է, Անկարան Եվրոպա մտնելու խնդիր ունի, և դրա համար նա ավելի զգույշ է և հազվադեպ է դիմում ռազմաշունչ ճարտասանության: Բայց նա պաշտպանում է հարձակողական կեցվածք ընդունած Բաքվին: Այս, որ միջազգային հանրությունը Բաքվին թույլատրում է օգտվել տարածքային ամբողջականության կեղծված սկզբունքից, նոր գայթակղությունների արթ է դարձել վերջինին համար: Այդ խաղաքարտը նրան թույլ է տալիս ոչ միայն «հիմնավորել» Լեռնային Ղարաբաղին ուժով տիրելու իր իրավունքը, այլև արդեն իսկ ողջ Հայաստանն են հայտարարում Աղրեցանի արևմտյան մաս: Չեն դադարում իրանական Աղրեցանի նկատմամբ հավակնությունների հիմնավորման քարոզական արշավմերը: Եվ տարածաշրջանի կայունությունը խաթարող այդ բոլոր հավակնությունների աղբյուրը Աղրեցանական Հանրապետությունն իրեն չպատկանող տարածքներով ճանաչելու՝ 1991-92թթ. խոշոր տերությունների կողմից ընդունված քաղաքական որոշումն էր:

Իրականում այդ վտանգը միայն Հայաստանին կամ Իրանին չի

սպասնում: Աղրեցանական Հանրապետության վրայով Թուրքիան միջնասիական Թուրքմենստանի հետ աշխարհագրորեն չընդհատվող մի տարածքի մեջ միավորելու նախագիծը, որը ցանկանում են իրագործել Անկարան ու Բաքուն, հաջողության դեպքում կփոխի Եվրոպայի քաղաքական ողջ դեմքը: Արդեն իսկ Եվրոպայի դեմ գործողության մեջ դրված ժողովրդագրական գրոհը որակապես նոր թափ կստանա: Այդ հեռանկարում Թուրքիան միջնասիական Թուրքմենստանի հետ կապող կամուրջի կամ դրանց միացնող օղակի դերը պետք է կատարի Աղրեցանը: Իսկ ի՞նչ կլիներ, եթե թուրքական ինտերվենցիայի արդյունքում Արևելյան Աղրեկովկասուն չիհմնվեր թուրքացման ուղին բռնած այդ պետությունը: Եթե պատկերացնենք, որ այդ օղակը բացակայում է, դժվար չի լինի կանխատեսել Թուրքիայի արագ Եվրոպականացումը: Նրա քաղաքակրթական ինտեգրմանը չին խանգարի թուրանական ծրագրերի հետ կապվող հույսերը, որոնք որքան էլ քողարկվեն կամ հենց այդ քողարկման համար անհեթեթք (կամ՝ հայերի կողմից հնարված) գաղափարներ որակվեն, առայժմ տեղ ունեն թուրքական տեսլականներում: Դրանք չտեսնելու համար պետք է շատ ցանկանալ անտեսել դրանք: Քսաներորդ դարի սկզբներին Աղրեցանը, որ այն ժամանակ դեռևս այդ անունը չուներ, պանթուրքիզմի գաղափարախոսության օրրանը դարձավ: Այսօր այդ նույն դերը նա կատարում է արդեն որպես աշխարհագրության իրողություն, որպես թուրքական աշխարհի երկու ծայրաքերը Փիզիկապես կապող հանգույց: Եվ քանի այն կա, պիտի կրողը լինի այդ դերակատարությունից բխող գաղափարական և գործնական ազդակների, որոնք կարող են լինել միայն ծավալապաշտական ու ագրեսիվ նացիոնալիզմի ազդակներ: Բաքուն հետ պիտի պահի Անկարային քաղաքակրթորեն Եվրոպային ինտեգրվելու ընթացքից: Սիջազգային քաղաքական ու հասարակական բոլոր այն շրջանակները, որոնց համար ցանկալի է Թուրքիայի քաղաքակրթական ինտեգրումը Եվրոպայի հետ, պետք է զգան կամ արդեն զգում են, որ ընդամենը վերջերս ցեղասպանություն իրագործած Աղրեցանական Հանրապետությունն է «Թուրքիային հետ քաշում դեպի քարանձավ»՝ ծանրաբարի պես կախվելով նրա ոտքերից կեալի Եվրոպա տանող նրա ճանապարհին:

## ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵջ

1994թ. մայիսին Բիշկեկում Ստեփանակերտը, Բաքուն և Երևանը որպես հակամարտության կողմներ ստորագրեցին հրաժադարի հաստատման նախնական արձանագրություն: Դրանից հետո պատմականության հողերի մի մասում շարունակելով պետականության դարավոր ավանդույթները և զարգացնելով 1918-20թթ. ժողովրդական հնքնակառավարման փորձը՝ արցախցիներն անցան պետականաշինության ակտիվ գործունեության: Հետխորհրդային տարածքի նոր անկախացած բոլոր պետությունների հետ ԼՂՀ-ը մտավ հասարակական, տնտեսական ու քաղաքական բարդ փոխակերպումների մի շրջան, որ կնքեց ընդիհանուր մի անունով՝ անցունային շրջան: Մասնավոր սեփականության ու ազատ ձեռներեցության հիմքի վրա նոր տնտեսակարգի կառուցումնը նորանկախ պետություններում ստացավ մեկը մյուսից տարբեր ընթացք՝ կախված նրանից, թե «ինչքանով է թարմ» մասնավոր սեփականատիրական տնտեսվարման «հիշողությունը» երկրում (ամենից շատ դրանք թարմ էին 1940-ականներին ԽՍՀՄ կազմ մտցված մերձբալթյան հանրապետություններում), նարդկային ու նյութական ի՞նչ ռեսուրսների է տիրապետում այն, ի՞նչ մենթալիտետ ունի նոր տնտեսական ուղղություն կանգնած ժողովուրդը և այլն: Հայաստանի Հանրապետությունում և ԼՂՀ-ում սոցիալ-քաղաքական ու տնտեսական զարգացումների վրա նշված գործոններից բացի ազդում էր աննպաստ մի գործոն, որ չկար մյուս տեղերում: Դա շրջափակման գործոնն էր: Շրջափակումը սկսվել էր դեռևս խորհրդային տարիներին, երբ ԱղրիսԽ-ում թալանվում էին ԽԽՍՀ ու ԼՂԻՄ ուղարկվող գնացքներն ու բեռնատարները, այդ թվում՝ երկրաշարժից հետո հումանիտար բեռներ փոխադրողները: ԽՍՀՄ լուժարումից հետո շրջափակումն ավելի սաստկացավ, մանավանդ, երբ 1993թ. Բաքվին միացավ նաև Անկարան: Նպատակը մեկն էր՝ խեղդել Հայաստանի և Արցախի հանրապետությունները, սովոր մատնել բնակչությանը, տնտեսական անկանա պայմաններում բնակչության անխուսափելի արտահոսքով դատարկել երկիրը: Շրջափակումը պատերազմի ձև է, և արդեն երկու տասնամյակ է, ինչ Բաքուն ու Անկարան համատեղ վարում են այդ պատերազմը ընդդեմ հայկական պետությունների: Հատուկ հիմնավորումների կարիք չունի այն միտքը, թե ինչ անբարենպաստ ազդեցություն պիտի ունենար շրջափակումը նրանց տնտեսական ու սոցիալական զարգացումների վրա: Ծանր են շրջափակման հետևանքները թե՝ ավելի երկրաշարժի վերքերը չբուժած նորանկախ Հայաստանի

Հանրապետության, թե՝ պատերազմի տարիներին ավերածությունների ենթակված Արցախի համար: Եվ նույնիսկ այդ պայմաններում ժողովրդական քաղաքական մշակույթը Արցախում ավելի հաստատվելը քայլերով առաջադիմեց, քան հետխորհրդային շատ ու շատ երկրներում: ԱղրիսԽանական Հանրապետության հետ համեմատվելը նույնիսկ իմաստ չունի: Տեղական ինքնակառավարման, խորհրդարանական, նախագահական բոլոր ընտրությունները արդարության, թափանցիկության, օրինականության և մնացյալ բոլոր չափանիշների տեսակետից ԼՂՀ-ում անցել են իրավես եվրոպական չափորոշչներին համապատասխան: Այդ մասին հաճելի գարնաճորվ վկայել են նաև միջազգային դիտորդները: Ժողովրդավարության ամենաբարձր չափանիշներով իր կյանքը կազմակերպելու վճռականությունը արցախին արտահայտել է ազատագրական իր պայքարի ողջ ընթացքում, այդ թվում 1991թ. դեկտեմբերի 10-ին, երբ հրետակոծությունների ու ռմբակոծությունների տակ գնաց հանրաքեի՝ անկախության օգտին քվեարկելու համար: Ինքնիշխանության իր ընտրած ճանապարհին նա ստեղծել է նախագահական հանրապետություն, ընդունել է Սահմանադրություն և մեր օրերում ամենաեռանդուն ձևով փորձում է տնտեսական ժողովրդավարության տեխնոլոգիաներ ներդնել երկրում: Նույն այդ ժամանակ կանաչին կառավարման անցած ԱղրիսԽանական Հանրապետությունում ճիշտ ու ճիշտ միջնադարյան «միապետությունների ստանդարտներով» ԱղրիսԽանի նախագահը ծեռք է բերել ցնահ նախագահելու իրավունք: Դա միայն նախագահի հավակնություններն ու ցանկություններն արտացոլող փաստ չէ: Դա մի ողջ հասարակության «ժողովրդավարական մտածողության» որակը բնութագրող երևույթ է, ինչը հնարավոր չէ ոչ Հայաստանի Հանրապետությունում, ոչ էլ Արցախում:

Քաղաքական նկատառումներից ելնելով՝ Եվրոպան գուսապ է արձագանքում այս փաստին: Ավելին, ԱղրիսԽանական Հանրապետությունում կատարվածին երբեմն «վերաբերվում են ըմբռնումով»: Այնինչ ԼՂՀ-ում տեղի ունեցող ամենաբարձր չափանիշներով անցկացվող խորհրդարանական ու նախագահական ընտրությունների կապակցությամբ ԵԱՀԿ-ը չի մոռանում հայտարարել, թե դրանք ինքը ճանաչել չի կարող: Բայց հենց այդ կետուն Եվրոպան հակասության մեջ է մտնում ինքն իր հետ: Բանն այն է, որ դեռևս 1994թ. դեկտեմբերի 5-6-ին Բուլղարիայում տեղի ունեցած ԵԱՀԿ գագաթաժողովում որոշվել է Ղարաբաղյան հականադության կարգավորման բանակցություններում գործ ունենալ Լեռնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչների հետ: Զեկությունն ինքնին պարտադիր է դիտում ղարաբաղյան կողմի ընտրված ներկայացուցիչներ ունենալը, ինչն անհնար է առանց ընտրական համակարգի ու ժողովրդավարության համապատասխան հաստատությունների:

## ՎԵՐԶԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՏ

Ահա արդեն քսան տարի է, ինչ դարաբաշյան հակամարտության կարգվորումը գտնվում է միջազգային հանրության համար հրատապ հարցերի օրակարգում: ԵՄՀԿ-ում ստեղծված է հատուկ կառույց՝ Մինսկի խումբը, որն առաջ է տանում բանակցային գործընթացը, որի արդյունավետությունը պայմանավորված է բազմաթիվ հանգանանքներով: Միանգանայն հասկանալի է այն կարևորությունը, որ դրանց շարքում տրվում է վստահության գործնին: Դայ-թուրքական հարաբերությունների ողջ պատմությունը բացահայտ կամ քողարկված ձևով իր հետքն է թողնում կողմների դիրքորոշումների, բանակցություններում նրանց վարդի վրա: Աղրբեջանցի թուրքը բանակցությունների է ներկայանում վստահ, որ՝

- տարածաշրջան մտնելու և կասպիական էներգակիրների համար նրակցության մեջ մտած խոշոր տերություններն իրեն հաշիվ չեն ներկայացնի Արևելյան Անդրկովկասի հայության ցեղասպանության համար և որ ինչպես 1905-1907թթ. և 1918-1920թթ., այնպես էլ 1988-1994թթ. հայկական ջարդերը մոռացության կմատնվեն և որևէ ազդեցություն չեն ունենա հակամարտության կարգվորման իրավական դաշտից դուրս բերված գործընթացի վրա,

- իիմնախնդրի իրավական իիմքերի տեսակետից իրեն չվերաբերող, բայց ԽՄՀՍ լուժարման ընթացքում իրեն նվիրված «տարածքային անբողջականության» սկզբունքը հուսալի վահան է ոչ միայն հայկական կողմների փաստարկները հետ մղելու, այլև հանրապետությունում հայտացության ռասիստական քարոզչություն իրագործելու և ուժի սպառնալիքի դիրքից հանդես գալու համար:

Այդ հանգանանքները չեն կարող չափել բանակցությունների ընթացքի վրա: Դայկական կողմների համար դիվանագիտական դաշտում աղրբեջանցի թուրքի այդ պահվածքը հազիվ թե ինչ-որ նոր մի բան է: Ողջ քսաներորդ դարում տարածաշրջանում ծավալված իրադարձությունները հայերին որևէ հիմք չեն տալիս Բաքվին հավատ ընծայելու համար: Չկա որևէ պայմանավորվածություն, ստորագրված փաստաթուղթ, որը վերջինս խախտած չլինի:

Ահա դրանցից մի քանիսը.

Ա) 1920թ. նոյեմբերի 30-ին Խորհրդային Հայաստանի Յեղկոմին հղած հեռագրով և դեկտեմբերի 1-ի հոչակագրով Բաքուն թե՛ Նախիջևանը, թե՛ Լեռնային Ղարաբաղը ճանաչել է ՀԽՍՀ-ի անկապտելի մաս, սակայն մի քանի ամիս անց վերսկսել է իր ապօրինի հավակնու-

թյունները: Ավելին, ԽՍՀՄ լուժարման ընթացքում, հակառակ քազմիցս հրապարակված փաստաթղթերի, ընդհանրապես հերթել է իր կողմից ԼՂ-ն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու փաստը:

Բ) 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի որոշմանը նախատեսվում էր մարզային լայն ինքնավարության կարգավիճակ տալ ողջ Լեռնային Ղարաբաղին, այլ ոչ թե նրա մի մասին: 1923թ. Բաքուն, ի խախտումն այդ որոշման, ԼՂԻՄ-ը դեկրետավորեց ԼՂ հարավ-արևելյան հատվածում՝ մարզի սահմաններից դուրս թողնելով հակայական տարածքներ՝ ի վերջո մարզը դարձնելով առանձնատարածք:

Գ) Ըստ Կովբյուրոյի որոշման, ԼՂԻՄ մայրաքաղաք պետք է լիներ Շուշին: Որպեսզի աղրբեջանցի թուրքերի կողմից հրկիզված Շուշին չվերականգնվի որպես հայկական մարզկենտրոն, 1923թ. հունիսի 7-ի դեկրետով Բաքուն խախտեց այդ որոշումը՝ ԼՂԻՄ-ի մայրաքաղաք հայտարարելով Ստեփանակերտը:

Դ) 1921թ. թե՛ Խորհրդային Կենտրոնը, թե՛ Բաքուն դարաբաղցիներին հորդորում էին չընդդիմանալ Լեռնային Ղարաբաղը ԱղրիսՍՀ կազմ մտցնելուն այն փաստարկունով, որ ԱղրիսՍՀ-ը ինտերնացիոնալ, ոչ ազգային, տիտղոսակիր ազգ չունեցող հանրապետություն է: Բայց արդեն 20-ական թվականներից գործողության մեջ դրվեց արմատականացման քաղաքականությունը՝ նպաստելով, որ կովկասյան թարարները զավեն բոլոր բարձրագույն պաշտոնները, իսկ 30-ական թվականներին հանրապետության անունը որպես էրնոնիմ սեփականելու հնարքով «դաշնան» աղրբեջանցի և հետևաբար՝ հանրապետության տիտղոսակիր ազգ:

Ե) 1921թ. կնքված Կարսի պայմանագրի համաձայն Նախիջևանը հանձնվում էր ԱղրիսՍՀ հովանավորությանը: Եվ միայն այդքանը: Պայմանագիրը կնքելուց ընդամենը երկու տարի անց հովանավորության հանձնված այդ տարածքը դարձվեց ինքնավար հանրապետություն ԱղրիսՍՀ կազմում: Կարգավիճակի այդ փոփոխությունը հակասում էր բազմակողմ և ցայսօր գործող միջազգային պայմանագրին: Կարսի պայմանագիրը խորհրդային տարիներին խախտվեց նաև փախստականներին վերաբերող մասով: Պայմանագրով նախատեսվում էր թուրքական ինտերվենցիայի ժամանակ փախստական դարձած հայերի վերադարձը Նախիջևան: Բաքուն կտրականապես մերժեց հայերին վերադարձը իրենց տները՝ նտացածին այն պատճառաբանությամբ, թե իրը այդ հողերը, այսինքն՝ հայերից խլված հողերը, նույնիսկ քիչ են աղրբեջանցի գյուղացիների համար: Նախիջևանի փախստականների վերադարձը ապահովելու փոխարեն Բաքուն ազգային հալածանքներով ու զանգվածային բռնություններով իրագործեց հայ բնակչության վերջնական դուրս մղումը բնիկ հայկական այդ երկրամասից:

Զ) 1991-1994թ. Ղարաբաղյան պատերազմի ժամանակ հրադադարի վերաբերյալ ձեռք բերված բացառապես բոլոր պայմանավորվածությունները (այդ թվում և միջնորդների ջանքերով ձեռք բերվածները) խախտվել են ադրբեջանական կողմից (այդ փաստն իրադարձությունների վկայի արժանահավատությամբ հաստատում է ռուսական կողմից Մինսկի խմբի համանախագահ Բ.Կազիմիրովը 2009թ. Մոսկվայում լույս տեսած իր «Մир Կարանչ» գրքում):

Հայկական կողմերը բոլոր հիմքերն ունեն հավատ չտածելու նաև միջազգային հանրության կողմից խոստացվող երաշխիքներին: Առաջին աշխարհամարտից հետո ցեղասպան Թուրքիային պատժելու փոխարեն խոշոր տերությունները կատարված հանցագործության համար որպես պարզևատրություն Արևմտյան Հայաստանը հանձնեցին նրան: Այսօր պատմությունը կրկնվում է: Ադրբեջանահայության ցեղասպանությունից հետո Բաքուն ոչ միայն չի պատժվում, այլև փորձեր են կատարվում որպես պարզև նրա իրավաբանական ենթակայությանը հանձնել Լեռնային Ղարաբաղը: Ցեղասպանության խրախուսունը քողարկվում է՝ այս անգամ «տարածքային աճբողջականության» սկզբունքով նրա քայլերն արդարացնելու միջոցով, սկզբունք, որ նրան (Ադրբեջանական Հանրապետությանը) չի վերաբերում, բայց գործող պայմանագրերի շրջանցումով «նվիրվում է նրան»:

Խորհրդային տարիներին ԽՍԴՄ-ը՝ աշխարհի ամենահզոր տերություններից մեկը, հանդես էր գալիս որպես ադրբեջանահայության անվտանգության երաշխավոր: Բայց նա չկարողացավ պաշտպանել հայերի և Արևմտյան Անդրկովկասի բազմաթիվ ժողովուրդների անվտանգությունը բռնի ուժացման կամ ցեղասպանության քաղաքականությունից: Գերհզոր տերությունը չկարողացավ հենց իր ներսում պաշտպանել հայերին ադրբեջանցի թուրքերից: Կվստահի՝ արոյոր արցախցին Մինսկի խմբի հովանու տակ ընթացող բանակցություններին, երբ բանակցային սեղանին արդեն 20 տարի դրված չէ հիմնախնդրին վերաբերող իրավական հիմնական փաստաթթերի փաթթը, երբ Եվրոպան նույնիսկ չկարողացավ թույլտվություն ստանալ Բաքվից՝ Զուղայի խաչքարերի ջարդի գործով իր փորձագետներին Նախիջևան ուղարկելու համար:

Պատահական չէ, որ մինչ օրս շարքային արցախցու համար անհասկանալի է մնում, թե ինչի շուրջ են բանակցում Մինսկի խմբում, երբ և պատմականորեն, և՝ իրավաբանորեն, և՝ փաստացի Արցախ - Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական Հանրապետության մաս չէ:

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ

	Բնակավայր Местность
	Բարձունք Высота
	ճանապարհ Дорога
	Մայրուղի Магистраль
	Գետ Река
	Ջրամբար Водохранилище
	Ջրանցք Канал
	Ղարաբաղյան զինուժ Вооруженные силы Карабаха
	Ադրբեջանական զինուժ Вооруженные силы Азербайджана

փ.գ.դ., պրոֆ. Ալեքսանդր ՄԱՆՈՒՅԱՆ  
ք.գ.թ. դոց. Ալեն ՂԵՎՈՆԴՅԱՆ

## ԼԵՇՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴ. ԻՆՉՊԵՍ Է ԴԱ ԵՂԵԼ...

Խմբագիր Արտակ ճԱՂԱՐՅԱՆ

Էջադրումը  
և կազմի ձևավորումը՝ **Տ. ՍՈՍՈՅԱՆԻ**

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրված է ..... տպարանում:  
Տպաքանակը՝ ..... օրինակ: